


ԴՐՈՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ




№ 4 (1595) ԱՊՐԻԼ 2008



ԱՐԳԵՆՏԻՆԱ



ՎԱՏԻԿԱՆ




ՇՎԵԴԻԱ



ԼԵՅՈՍԱՆ



ԳԵՐՄԱՆԻԱ



ՇՎԵՅՑԱՐԻԱ




ՎԵՆԵՍՈՒԵԼԱ




ԲԵԼԳԻԱ




ՍԼՈՎԱԿԻԱ



ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ



ԼԻՏՎԱ



ՈՒՐՈՒԳՎԱՅ



ՈՒՐՍԱՍԱՆ




ԼԻԲԱՆԱՆ



ԻՏԱԼԻԱ




ՀՈՒՆԱՍՏԱՆ



ՖԻՆԼԱՆԴԻԱ



ԿԱՆԱԴԱ




ԱՎՍՏՐԱԼԻԱ



ԲՈՒԼԴԱՐԻԱ



ԿԻՊՐՈՍ





ՉԻԼԻ

ՃԱՆԱԳՈՒՄ



RECOGNITION





ԴՐՈՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ



Հայկական հարց

4 Արմենոցիդ, ծագումը, էվոլյուցիան, հանգուցալուծումը

12 Հայկական հարցի միջանցիկ ենթափուլ 1921-1923 թթ.

Վկայություններ

19 Արման Կոթիկյանը՝ Մեծ եղեռնի տարեգիր

Իմացաբանական

26 Փնտրտուք անձնական հիշողության մեջ


Հարցապնդում

34 Ինչո՞ւ «մասնակցեցին» «Արդամար հուշակոթող-թանգարան»-ի վերաբացման «սցենար»-ին



Հարցազրույց

38 «Դրօշակ» - ի հարցերին պատասխանում է Հայկ Դեմոյանը



Հորեկյան-100

41 Վազգեն Առաջինի նամակը Անտոն Բոչինյանին

Թերթեկով «Դրօշակ» - ի էջերը


47 Ի՞նչ է գրել «Դրօշակը» 100 տարի առաջ

Նոր գրքեր

49 Պոլսահայ գաղթօջախի կայացման երկու դարը

Պարկերտարան

52 Լիո Ֆարիդանի




“Դրօշակ” ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության:
Հիմնադիր՝ ՀՀԴ
Գլխավոր խմբագիր՝ Ռուբեն Հովսեփյան
Խմբագիր՝ Կ.Խանլարյան
Համակարգչային շարվածքը՝ Ս.Խաչատրյանի
Ձեռավորումը՝ Ս.Հովսեփյանի
Գրանցման վկայական 897
Երևան, 375010, Մհեր Սկրտչյան 12/1
Հեռ. 521 876
Էլ.փոստ.droshak@arf.am
Տպագրությունը՝ «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ի

“ Droshak” monthly, ARF dashnaksoutiun
publication
12/ 1 Mher Mkrtchian, Yerevan, 375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am
Editor-in-Chef: Rouben Hovsepian



ԿԱԿԱՅԻՊ, ԹԷ՞ ԾՐԱԿԱՅԻՆ ԲԱՆԱԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ԸՆՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ



2008 թ. նախագահական ընտրությունները, հետընտրական գործընթացներում իշխանության եւ ընդդիմության շրթայական առճակատումները, եւ ոչ մի քայլափոխում վստահություն չներշնչող անխոհեմ քայլերի շարանը երկիրը հասցրեցին մի իրավիճակի, ուր մի կողմից հետանկախության ողջ շրջանում ստեղծված կայունությունը դարձավ խոցելի, մյուս կողմից էլ արտաքին աշխարհի աչքին Հայաստանը վերածվեց ժողովրդավարության ճամփին մոլորված, խեղճացած մի երկրի...

Ժամանակն անցնում է ու դրան զուգահեռ կուտակվում են հարցադրումները հայոց պետականության պատմության այդ սեւ էջի վերաբերյալ: Եվրոպական հաստատությունների՝ «մի ձեռքով վանելու, մյուսով՝ ձգելու» երկսայրի քաղաքականությունը՝ են էր մղում իշխանություններին ու ընդդիմությանը հաջորդական սխալների, մոդայիկ դարձած «գունավոր հեղափոխության» շաբլոնիստները՝ իրենց տեսությունները «ապացուցելու» նպատակով եւ անփույթ միջամտություններով, նույնքան շաբլոնացած «բիրտ կոնտրոլի տեսության» կողմնակիցները, թե՞ իրենց մեթոդիկայի հուսալիությունը ցուցադրելու համար դեղատոմսեր գրող, ԱՄՆ-ՌԴ հաշվեհարդարի, ԵՄ-ԱՊՀ մրցակցության, ՄԱԿ-ԵԱՀԿ սակարկության եւ նմանօրինակ համաշխարհային կամ տարածաշրջանային խաղեր մոգոնողները... Այս հարցերի պատասխանները, անխուսափելիորեն, պարզվելու են:

Սակայն ինչպե՞ս կարելի էր փրկել կացությունը, պահպանել կայունությունը, վերականգնել միջազգային վարկը: Անկախ բոլոր հանգամանքներից, պատճառներից ու գնահատումներից: Ահա այս հարցադրումն էր ամենից շատ հուզում ՀՀ Դաշնակցությանը, որի համար կուսակցական շահերը երբեք էլ չեն պատկերացվել ազգային-պետական շահերից զատ: Դաշնակցությունը ձեւավորվող քաղաքական համաձայնությանը միացավ ուշացումով: Ըստ ՀՀԴ Բյուրոյի ներկայացուցիչ ընկ. Հրանտ Մարգարյանի՝ «Մենք բավական ուշացումով միացանք, բայց միացանք: Այդ քաղաքական համաձայնագիրը, ինքնըստինքյան, ժեստ էր, այսինքն՝ մենք դրանով փորձեցինք աշխարհին ցույց տալ, որ մենք միասնական ենք, եւ այն,

ինչ որ պատահեց մեր երկրում, թույլ չենք տա, որ դա առիթ հանդիսանա, որպեսզի երկիրը խեղճանա, տկարանա, փորձեն ազգային առումով կամ երկրի անկախության առումով մեզ որեւէ բան պարտադրել: Այս իմաստով, կարծում եմ, այդ միասնականությունը ցույց տալը անհրաժեշտ էր հանուն մեր երկրի, մեր ժողովրդի, Ղարաբաղի հարցի, ազգային պետականության, անկախության: Վերջին հաշվով, մեր անվտանգության առումով դա անհրաժեշտ էր» («Երկիր», 2008թ. ապր. 4):

Որո՞նք էին նշված ուշացման պատճառները: Փորձենք բնորոշել դրանք: Նախ՝ որեւէ բեւեռին արագ միացումը նվիրականացնելու էր ներքաղաքական դաշտի արդեն սրված, եւ ոչ մի սոցիալական, քաղաքական հիմնավորմամբ չարդարացող, առճակատումը: Ընտրողների մի հոծ մասի բուռն բողոքի ալիքների վրա, ցավոք, բարձրացել էր մի հոսանք, որին միանալ՝ պարզապես կնշանակեր հանուն ամբոխավարության հրաժարվել սեփական հայացքներից եւ պարզապես հրահրել քաղաքացիական պատերազմ մեր փխրուն երկրում: Չմոռանանք, որ բանակցությունների եզրեր չտեսնող եւ մեկնելու դավաճան հռչակող կողմերը պատրաստ էին անխնա հոշոտել միմյանց: Հատկապես մարտմեկյան ողբերգական դեպքերից հետո, իշխանություններին կամ ընդդիմությանը ՀՀ Դաշնակցության նման փորձ ու կազմակերպական ներուժ ունեցող կազմակերպության միանշանակ միանալը իր մեջ պարունակում էր նորանոր պայթյունավտանգ իրավիճակների գոյացման ռիսկը, ինչից էլ մենք փորձում էինք ամեն կերպ հեռու մնալ:

Ապա՝ Հայաստանի միջազգային դիրքն ու վարկն էր, որ մի շարք պետությունների քաղաքականության շնորհիվ կըտրուկ անկում ապրեց: Հենց վերջերս Եվրոխորհրդի Խորհրդարանական վեհաժողովում «Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների վիճակի վերաբերյալ» ընդունված բանաձևի նախագիծը թարմագույն օրինակը կարելի է համարել այս հեղինակագրկման գործընթացի: Կոռուպցիայի մասին տեղեկություններ հրապարակած թերթերն արգելափակող, քաղբանտարկյալներով բանտերը ողողած, բռնապետական, վանդալիստական Ադրբեջանին ի տես՝ Հայաստանը եվրոպական լայն հասարակայնության առջեւ, աստիճանաբար, նկարագրվում է որպես ժողովրդավարական «ցածր ցուցանիշ»-ներով երկիր: Եվ սրան, չգիտես ինչու եւ ինչպես, զուգորդվում են Հայաստանի հետ անմիջապես հաշվեհարդար տեսնելու դիվանագիտական մանր ու խոշոր ակցիաները, այն էլ ոչ միայն ժողովրդավարության ինստիտուտի վերականգնման, այլեւ՝ Ղարաբաղյան հակամարտության ադրբեջանականաստ լուծման ուղղությամբ: Ի՞նչ հրաշալի հնարավորություն... Իսկ ՀՀ Դաշնակցության համար դա դարձավ աշխարհաքաղաքական մասշտաբներով վիթխարի մղձավանջ, որից ազատվելու օրակարգը նույնպես նրան ստիպում էր, առաջին հերթին, վերականգնել ներքաղաքական համերաշխությունը՝ մասնակից դառնալով համաձայնական կառավարության:

Բայց եւ այնպես, «չկա չարիք առանց բարիքի» պարզ տրամաբանությամբ, մեզ համար նպաստավոր պահ ստեղծվեց համաձայնական կառավարություն մտնելու նախապայման առաջադրել. ընդունել համակարգային փոփոխությունների մեր նախընտրական ծրագրի հիմնարար սկզբունքները եւ մեխանիզմներ երաշխավորել դրանց իրականացման համար...

Ընկ. Հրանտ Մարգարյանը «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցի ժամանակ ընդգծել է. «Առաջին մակարդակի խնդիրները ծրագրային հարցերն են, եւ երկրորդ տեղում են կադրային հարցերը: Ծրագրային հարցերում, կարծում եմ, նորընտիր նախագահի համար շատ կարեւոր է այն կառավարությունը, որ պիտի ձեւավորվի՝ վարչապետով ու կազմով: Այդ կառավարությունը պետք է կարողանա հուսալի լինել, հույս ներշնչել» («Երկիր», 2008 թ. ապր. 4):

Այսբանով եզրափակենք, որ կոալիցիային մասնակցելու ՀՀԴ կեցվածքի հիմքում ընկած են ոչ թե կադրային, այլ ծրագրային հարցերը, այլ խոսքով՝ մենք մեր նախընտրական խոստումներին հավատարիմ, այսուհետ էլ ձգտելու ենք ոչ թե սոսկական իշխանափոխության, այլ գերազանցապես համակարգային փոփոխության:

ԱՐՄԵՆՈՑԻՂ

ԾԱԳՈՒՄԸ,

ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ,

ՀԱՆԳՈՒՑԱԼՈՒԾՈՒՄԸ

ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ

(Երկրաքաղաքակրթական տեսանկյուն)

1915 թվականի ապրիլի 24-ին Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Օսմանյան կայսրության ողջ տարածքում հայ ժողովուրդը թուրքական կառավարության որոշումով և թուրք ժողովրդի կամքով բռնեց անէացման ճանապարհը, որը գլխավոր դաշնակից տերությունները (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ռուսաստան) նույն թվականի մայիսի 24-ին դիտեցին ոճիր «մարդկության և քաղաքակրթության դեմ», և որը տարիներ անց իրավաքաղաքական գրականության մեջ և միջազգային իրավունքի շրջանակներում որակվելու էր որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն՝ գենոցիդ, այսինքն ռասայական, ազգային կամ կրոնական հատկանիշներով բնակչության առանձին խմբերի կամ ժողովուրդների ոչնչացում, «ամբողջ մի ժողովրդի սպանություն»:

Հստակ էր թուրքական նպատակը՝ գիտակցված ու պլանավորված էին գործողությունները. ոչնչացնել հայ ժողովրդին զանգվածորեն ու գլխովին: Գերխնդիր էր նրա բնաջնջման միջոցով ոչնչացնել Հայաստանը, վերջնականորեն սեփականել հայոց Հայաստան հայրենիքը՝ «դարձ-

նելով» այն Արևելյան Անատոլիա, «յուրացնել» հայկական մշակույթը¹, ջնջել հայկական քաղաքակրթությունը, կողոպուտի և ավարառության թուրքական ավանդույթ-օրենքով տեր դառնալ հայոց նյութական ահռելի հարստությանը²:

Եղեռնագործությունը, ճիշտ է, թափ առավ 1915-ի ապրիլի 24-ին ու թուրքական եռանդով շարունակվեց հետագա մի քանի տարիներին, սակայն թուրքական հանճարը Մեծ ոճիրը ծնել էր տասնամյակներ առաջ... Սկսել էր երկրի անվան ու աշխարհագրության բռնաբարումից, դեմոգրաֆիական (ժողովրդագրական) խեղաթյուրումներից: Այս իմաստով Թուրքիան աշխարհն այլասերումի տանող առաջին երկրներից մեկն է: 1862 թ. տեղի է ունենում կայսրության նահանգների վերակազմություն: [«Թուրքիայի կողմից զավթված Արևմտյան Հայաստանի տերիտորիայի մեծագույն մասից սկզբնական շրջանում կազմվեց մի կուսակալություն, որը կոչվում էր Էրմենիստան: Նրա կենտրոնը Էրզրում քաղաքն էր, որի անունով էլ շուտով Էրմենիստան էլալեթ կոչվեց Էրզրումի էլալեթ»³]: «Էրմենիստան էլալեթ» մեծ նահանգը տրոհվում է Էրզրում, Բիթլիս և Վան

նահանգների և նրանց են կցվում, Արևմտյան Հայաստանի հայկական դիմագիծը ջնջելու համար, «ծուռ ու մուռ սահմաններով իսլամական շրջաններ», ինչպես կասեր Հայկազն Գ. Ղազարյանը: Այնուհետև, 1878 թվականին, Բեռլինի կոնգրեսից երկու տարի հետո Արևմտյան Հայաստանում հայկական բնիկ տարրի տեսակարար կշիռը էլ ավելի նվազեցնելու նպատակով այնտեղ կատարվում է վարչական նոր բաժանում: Իսկ 1880-ական թվականներին արգելվում է «Հայաստան» («Արմենիա») անվան օգտագործումն ու աստիճանաբար այն դուրս է բերվում շրջանառությունից առհասարակ: [Եվ այսօր Արևմտյան Հայաստանը անվանվում է Արևելյան Թուրքիա, Արևելյան Անատոլիա: Դա կատարվում է որպես հետևանք մասամբ մտքի ծուլության, մասամբ էլ տգիտության]: Առայժմ խոսքը դեռևս ցեղասպանությանը և նրա գործադրմանը չի վերաբերում, սակայն տվյալ գործողությունները նպատակ ունեն հայությանը իր հայրենիքում տարրալուծել իրեն խորթ ու անհարազատ «մուսուլման» կոչվող խառնամբոխի մեջ:

Թուրքական տեսակետի «ճշգրտման» առիթ է դառնում, անշուշտ, 19-րդ դարի կեսերից արձանագրված հայոց քաղաքակրթական-տնտեսական վերածննդի աննախադեպ թռիչքը. նրա և՛ արևմտյան, և՛ արևելյան հատվածներում: Այս հանգամանքը նկատում և առավել քան պարզությամբ ներկայացնում է անգլիկան եկեղեցու հետևորդ, հոգևորական Բերտրան Բարեյլը: Նա նշում է, որ շնորհիվ Ազգային Սահմանադրության (1860 թ.), որը թեև «միայն հայ ազգին մասնավոր շահերը կկարգավորեր, բայց միանգամայն նշանավոր հեղափոխություն մը կգործեր Արևելքի սովորությանց մեջ: Սահմանադրությունը ազգին գլուխը կպահեր պատրիարքը, իբր պաշտոնական միջնորդ հասարակության և կառավարության մեջտեղ»: Բարեյլն ասում է. միաժամանակ, «սկսան ինքնին հանդես գալ և ծաղկել շատ մը ընկերային և կենցաղային զարգացման կետեր», թափ առավ ժողովրդական երկսեռ կրթության գործն ու «բարեպաշտական և բարեգործական» գործունեությունը: Եվ այս բոլորը բացառապես «ազգին կամովին զոհողություններով»:

«Այդ կենցաղային բարելավությունները,- շարունակում է Բ. Բարեյլը,- զորս Արդուլ-Ազիզի ներողամիտ կառա-

վարությունը դյուրացուցած էր, չէին կրնար չհուզել յուր հաջորդին կասկածոտ և անվստահ տեսությունները: Արդուլ-Համիդ գեշ աչքով նկատեց այդ տարօրինակ երևույթը, որով ազատամիտ վարչություն մը կծաղկեր յուր բռնապետական կառավարության հովանույն ներքև. լավ աչքով չտեսավ, որ հայը, թեպետ ստրկացած և ընկճված իբրև Օսմանյան հպատակ, ազատաբար ապրի իբրև յուր եկեղեցվույն անդամ: Ասոր համար այն դրությունը երկար պիտի չտևեր: Շուտով հայերը կասկածոտ դարձան թե Թուրքիո և թե Ռուսիո մեջ հավասարապես, և այլևս հանգստության վայրկյան մը չունեցան»⁴:

Քաղաքակրթության ոլորտում հայերի ունեցած ընդունակությունների մասին արտահայտվել են նաև որոշ թուրքեր: Բնորոշ է գեներալ Շերիֆ փաշան իր խոստովանությունով. «Չկա մի լուսավորյալ թուրք, որը չստորագրի հետևյալ հայտարարության տակ, որ արված է <...> անգլիական պառլամենտի դեպուտատ Լինչի կողմից. «Հայերը բացառիկորեն ընդունակ են այն բանին, որպեսզի նոր քաղաքակրթության կրողներ լինեն: Նրանց հարազատ են դարձել մեր ամենաբարձր իդեալները: Նրանք եվրոպական մշակույթի նոր նվաճումները յուրացնում են մեծ ազահությամբ և դրանց տիրապետում են այնպիսի կատարելությամբ, որին երբեք չի կարող հասնել ոչ մի ազգ»⁵:

Հիրավի, թուրքական հռչակավոր նախանձն ու մաղձը ունեցան իրենց բացառիկ դերը Մեծ եղեռնի էթնոհոգեբանական հենքի նախապատրաստման համար, ինչը հրաբխի նման ժայթքեց հետագա տարիներին: Սակայն, այդուհանդերձ, «գլխավոր փաստարկը»՝ շատ անգամ, նույնիսկ մինչև օրս, անըմբռնելի աշխարհաքաղաքացու համար, դեռևս մակերես դուրս չի եկել: Իսկ «գլխավոր փաստարկը» հայի Հայաստան հայրենիքն էր, ամեն գնով այն «սեփականելու» թուրքական անկասելի մղումը, այդ Հայաստանն իր օրինական ու բնական տիրոջից անվերադարձ խլելու թուրքական բնագործ: Ոճրածին այս նպատակը հանձարեղ պարզությամբ «բացատրել» է Հայոց բանաստեղծը: «Վերցրեք Թուրքիայի քարտեզն ու մտիկ արեք, ասում էր (և կարծես կրկնում է այսօր) Հովհաննես Թումանյանը: - Դա մի նոր պետություն է, որ դրսից եկել է ու կոպիտ ուժով նստել հին քաղաքակիրթ ազգերի ու նրանց հայրե-

նիքների վրա: Եվ եղ երկիրներից մինը թե կա, որ նա համարում է ու դարձրել է իր հայրենիքը, ոչ Բալկանյան թերակղզին է, ոչ Աֆրիկայի հյուսիսը, այլ Անատոլիան, Փոքր Ասիան, էն երկիրը, ուր հայ ժողովուրդն էլ հնագույն ժամանակներից նստած պաշտում է իր Մեծ Հայաստանը, իր ազգային նվիրական վայրերն ու սրբությունները ու էն հողի վրա էլ հարուցանում ու զարգացնում է հայկական հարցը: Ես տեսակետից էլ հայկական հարցը Տաճկաստանը հուզող ամենածանր ցավերից մինն է, և հետզհետե թերևս դառնա ավելի ու ավելի ծանր, քանի թուրքն ստիպված լինի սեղմվել դեպի ես կողմերը: Այո՛, վայրագ ու անօրեն է այս ճանապարհը, այլև խելագար, սակայն հաստատ: Եվ ես ճանապարհով էլ նա արդեն հասել է մեծ հետևանքի: <...> Եվ ես ջարդին ու գաղթին վերջ չկա»⁶: Եվ կամ «...տաճկահայ ժողովուրդն իր հարցով <...> եղել է եվրոպական պետությունների հակամարտության դժբախտ գոհերից մինը, և անպայման ամենադժբախտը:

Ամենադժբախտը, որովհետև գտնվում էր Թյուրքիայի սրտում, ամենադժվար ու ամենավտանգավոր տեղում, և Թյուրքիան նրան բաց պիտի թողներ միայն վերջին շնչի հետ:


Եվ նա՝ Թյուրքիան, դիմել է, դիմում է ու կդիմի ամենահրեշավոր միջոցների՝ վերջ դնելու եղ ժողովրդին իր հարցի հետ միասին, հայի հայրենիքի ու ազգային իրավունքների խնդիրը մի անգամ ընդմիջտ փակելու համար»⁷:

Թուրքական «գլխավոր փաստարկի» մասին առաջին անգամ խոսվում է այսպես կոչված Քյամիլ փաշայի քաղաքական կտակում: Սույն փաշան Սան Ստեֆանոյի և Բեռլինի դաշնագրերի անմիջական հետքերով, այսինքն՝ Հայկական հարցի միջազգայնացումից հետո միայն, երբ հայը դեռևս կայսրության «հավատարիմ ազգն» («միլլեթ ի սադրկ») էր և մոտավոր պատկերացում անգամ չկար հայ հեղափոխության ու հայկական ազգային կուսակցությունների մասին, ասում էր. ողջամտությունը պահանջում է ոչընչացնել և մեր երկրի երեսից ջնջել այն բոլոր տարրերը, որոնք կարող են հետագայում մեզ սպառնալ վտանգներով և կարող են ծառայել միջամտության առարկա և գործիք

եվրոպական երկրների ձեռքին: Եվ այնուհետև. «հիմա այսօր գոնե» Անգլիայի շահերը պահանջում են, որ Փոքր Ասիայում («Մենք և Անգլիան Հայաստան բառը ոչ միայն չենք ճանչեր, այլ այդ անունը հնչող կզակները պետք է որ ջախջախենք».- Աբդուլ Համիդ) մեր տարածքները ազատ լինեն ուրիշների միջամտությունից և միջամտության աղբյուրներից. այդ սրբազան նպատակին հասնելու համար «ուրեմն այդ հայ ազգը վերցնելու, անհետ և անձետ (անգավակ.- Լ. Շ.) ընելու ենք»: Այդ ծրագրի իրականացման համար «ամեն գործիք պատրաստ ունինք». քուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, «վերջապես ամենայն ինչ», որոնք կարող են սրբազան պատերազմ հայտարարել այդ ազգի դեմ, «որ ոչ զենք ունի, ոչ զինվորություն և ոչ էլ պաշտպան», իսկ մենք, ընդհակառակը, ունենք զենք ու բանակ և աշխարհի ամենախոշոր հարուստ տերությունը (Անգլիան.- Լ. Շ.) որպես մեզ դաշնակից և Փոքր Ասիայում մեր տերությունների հովանավոր»⁸:

Նույն մտքերն է որոճում հերթական մի փաշա, Համիդի կառավարության հերթական մի նախագահ՝ Սայիդ Քյուչուկը (1884 թ.):

Հայաստանի ոչնչացման նույն բաղձանքն է հնչում «Միություն և առաջադիմություն» կուսակցության գլխավոր քարտուղար Մեհմեդ Նազիմի ճառում, Սալոնիկի ժողովում (1910 թ. հոկտեմբերի 31). «...մեր հայրենիքը, ասում է նա,- ասկե վերջ միայն ու միայն կրնա ըլլալ Անատոլուն: Ասիական հողամասին վրա դեպի արևելք անսահման կարելիություններ կգտնվին մեր զարգացման ու ընդարձակման համար: ...մեզի կմնա սրբազան պարտքը իրականացնելու թուրք ցեղի միությունը Միջերկրականն մինչև Արալ ծովը: ...այդ քաղաքական ծրագրին իրականացման նախապայմանը՝ հայկական հարցի արմատական լուծումն է: ...Այսօրվան մեր քաղաքականության ամենն են կենսական, անհետաձգելի և հրամայողական հարցը կնկատեն հայկական խնդիրը, որուն պետք է լուծում մը գտնել... արմատական և ամբողջական լուծում մը... կմնա միակ ու վերջին կարելիություն մը, որուն հետ կամա թե ակամա պարտավոր ենք հաշտվել, ընդունելով թրքական



շահերուն համապատասխանող միակ ելքը: **Պետք է բնաջնջել հայերը մեր կայսրության մեջ:** ...Հարցը մեկ շրջանի, Արևելյան Անատոլուի (կարդա Արևմտյան Հայաստանի.- *Լ. Շ.*) մեջ բնակող հայության բնաջնջման ձևով չի ներկայանար միայն, այլ ամբողջ կայսրության մեջ տարածվող այդ նենգամիտ, ճարտար և ճկուն էրմենի կոչված ցեղի մը, որուն եռանդին և աշխատանքին գոհացում չի կրնար տալ նեղ ու փոքր սեփական հայրենիք մը իսկ...»⁹:

Թուրքիայի պետության ոճրային ընթացքի մեջ փոխվում էին սուլթանները, կառավարիչների գույնը, դեմքը, սեռը, ազգությունը, չէր փոխվում գերխնդիրը՝ ոչնչացնել Հայաստանը, պարզվում է, հայ ժողովրդի գլխավոր բնաջնջման ճանապարհով: Եվ ահա, հերթական մի ճիվաղ, ռուս-թուրքական «սրտակից եղբայրության» տարի-

ներին, երբ ամբողջ հասակով կանգնեց Հայաստանի վերջնական ոչնչացման ու հայ ժողովրդի իսպառ բնաջնջման այնքան մոտ ու բաղձալի հեռանկարը վերջին հանգրվանում, արդեն Արևելյան Հայաստանում, քեմալական արտգործնախարար Ահմեդ Մուխտարը Արևելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրին բացատրում էր (1920 թ. նոյեմբերի 8). «Հայաստանը գտնվում է մահմեդական ընդարձակ տարածքների վրա (պատկերացնո՞ւմ եք.- *Լ. Շ.*), դրա համար էլ **անհրաժեշտ է նրան վերացնել ինչպես քաղաքականապես, այնպես էլ ֆիզիկապես:** Պետք է հաշվի առնել, որ ընդհանուր քաղաքական իրադրությունը և մեր հզորությունը նպաստում են իրականացնել այդ մտահղացումը»¹⁰:

Բոլորով հանդերձ, պետք է նկատի ունենալ, որ Հա-

միդն էր, որ ձևակերպեց, ուղղորդեց և ոգեշնչեց **Հայաստանի** ոչնչացման ծրագիրը, նրա զինակիցներն ու հաջորդները սուկ գործադրեցին այդ ծրագիրը: Եվրոպայից արտամղման ուժերի (խոշոր տերությունների հարվածներ, ազգային ազատագրական պատերազմներ և այլն) հզոր ճնշման տակ քայքայվող կայսրության «հավաքման» ու կայունացման գործընթացները Համիդն ուղղորդեց արևելք: Նա մտասևեռվեց դեպի **Արևմտյան Արաբիա, մահմեդական սրբազան վայրեր և Հայաստան**¹¹: Բալկանյան պատերազմները միայն ընդգծեցին միտումը: «Մեր Օսմանյան պետությունը,- ասում էր Համիդը,- տկարացած է գերաճումով... Ես չեմ գղջա, որ մեր ուժերը ծոող Բալկանյան երկրները կորցրեցինք: Որքան արագորեն հետ կենտրոնանանք, այնքան ավելի շուտով պիտի կարենանք հաղթահարել մեր տկարությունը և «հիվանդությունը»: Եվ նման կորուստները «շատ բնական մի բան էին»¹²: **Ավելին: «Մենք ուզում ենք ապրել Անատոլիայի մեջ,- հռչակեց Մեծ ոճիրի բանաձևը գլխավոր թուրքը,- և պետք է մնանք առանձին»**¹³:

Որ Թուրքիան կենտրոնանում էր Հայաստանում, պատրվակ բռնելով «հեղափոխության գաղափարը», դրսևորվում է արևելագետ Վամբերիի հետ Համիդի տեսակցության «նյութից»: «...Հայերուն խելքը շուտով գլուխնին պիտի բերեն: Իրենց գլխուն հարված մը տալով մոռցրնել պիտի տամ հեղափոխության գաղափարը... **այս հայկական հուզումով կուզեն** (Եվրոպացիք.- Լ. Շ.) **մեր ամենեն կենսական մասերը, մեր աղիքը խլել մեզմե: Այս պիտի ըլլար մեր ամբողջական կործանումը և մենք բոլոր մեր զորությամբը դեմ պիտի դնենք ասորը**»¹⁴:

Ցավալին՝ հայության համար, և տարօրինակը, արտաքին հայացքից այն էր, որ համիդյան մտահղացում-ուղղորդումը ամբողջական ըմբռնում էր գտնում «Եվրոպական համանվագի» (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Ավստրո-Յունգարիա, Ռուսաստան) գլխավոր երկրների կողմից: Գերմանական հստակությամբ ու ճշգրտությամբ խնդիրը ձևակերպեց Կայզերական Գերմանիայի դեսպան Հանս բարոն ֆոն Վանգենհայմը Իթթիհադի «Ընդհանուր կենտրոնում» («Մերքեզը Ումումի») (1914 թ., պատերազմի նախօրյակ) դիմելով գերմանական ֆաշիզմի նախահայ-

րերին. «Բուլգարիո հետ զինակցությունը Ձեզի համար է: Բեռլին-Պոլիս գիծը ապահովել, նեղուցները զինելով Ռուսիան արտաքին օժանդակություններե զրկել և Ձեզի հետ միացյալ ուժերով զայն ճզմել: **Կովկասը Ձեզի տալով, Ձեր առջև Թուրանի ճամբան բանալ կուզենք, Թուրքիո ամբողջականության արգելք հանդիսացող տարրերը** (հայերին- Լ. Շ.) **պիտի փճացնեք և Պարսկաստանն ալ պիտի գրավեք...**»: Եվ հորդոր-սպառնալիքը. «Եթե շաբաթ մըն ալ հետաձգվի <...> սույն զինակցության ընծայելիք բարիքները պիտի անհետանան...»¹⁵:

Եվ այսպես, 1914 թվականին Գերմանիայի դեսպանը ասում էր այն («...Կովկասը պիտի գրավեք և Թուրանի ճամբան պիտի բանաք»), ինչը 1912 թվականին կանխատեսում էր Հայոց բանաստեղծը («...հայկական հարցը Տաճկաստանը հուզող ամենամեծ ցավերից մինն է, և հետզհետե թերևս դառնա ավելի ու ավելի ծանր, քանի թուրքն ստիպված լինի սեղմվել դեպի էս կողմերը»): Իսկ Եվրոպացի մեծերը, համախորհուրդ, Եվրոպայից արտամղում էին քաղաքակրթորեն անհարազատ տարրին՝ միջնադարյան ենիչերիին: Նրան ուղղորդում էին դեպի Արևելք: ճանապարհին Հայաստանն էր: Ուստի և քրիստոնյա Եվրոպայի օժանդակությունը «քաղաքակրթության օրրանի» աստվածաշնչյան Հայաստանի հանդեպ չափավոր էր: Իսկ մեծ գործերը, ինչպես հասկանում եք, մեծ զոհեր են պահանջում: Եվ, հաճախ, պատմության շրջագծում, մեծ զոհերը կարող են շատ մեծ լինել: Եվրոպական այս «ընդհանուր կանոնը» երբեմն (ո՛չ ավելին) խախտում էր Եվրոպական մեծերից որեւէ մեկը, հաճախ Ցարական Ռուսիան, բայց ոչ Եվրասիական Ռուսաստանը (բոլշևիզմը), որի արժեքային համակարգն ու երկրառազմավարական դոկտրինան (թերևս, էթնոմշակութային ու հոգեբանական հիմքը ևս) նույնական էր (և է) թուրանական գաղափարի հետ:

Ասվածի համատեքստում Մեծ ոճիրը երկնելու և գործադրելու համար, ինչպես մեզ է թվում, հանճար ունենալու կարիքն էլ չկար, վստահաբա՛ր, սակայն պարտադիր էր մոնոլոլական բնագղն ու եղեռնաբաղձության կիրքը, ինչով լիովի օժտված է օսմանյան հորդան¹⁶: «Թուրքիան չի կարող ընդհանրապես հավակնել առաջին տեղին կազմակերպվածության եւ տաղանդների ոլորտում, սակայն, այդ

անգամ,- գրում է ամերիկացի դիվանագետ Վ. Փիտտը,- երբ գործը հասավ ջարդին, թալանին եւ այլն, նա ցույց տվեց, որ կարող է գործել կազմակերպված եւ շատ արագ: Միայն թուրքն է ի վիճակի այլ աշխարհ ուղարկել կարճ ժամանակվա ընթացքում հարյուր հազարավոր մարդկանց»¹⁷:

Եղեռնաբաղձության թուրքական հանճարը ծնեց ոչ միայն Հայաստանի ոչնչացման և հայության բնաջնջման թուրանական գերնպատակը, այլև որդեգրեց գործադրման համապատասխան մարտավարություն:

1. **1876-ից մինչև 1915** թվականներ. Հայաստանից հայերի արտաքսման, ծուլման-մահմեդականացման և ջարդերի անընդհատ ընդլայնվող, սակայն, այդուհանդերձ, սահմանափակ (լոկալ) քաղաքականություն:

2. **1915-ից մինչև 1918** թվականներ. համընդգրկուն և հայկական հարցի վերջնական լուծման գործընթացը:

Այս ճանապարհին նա հաջողության չհասավ մասամբ. մի մասով, շնորհիվ հայ ժողովրդի մնացորդացի դիմադրության (այստեղ բացառիկ դեր խաղացին կամավորական գնդերի ռազմապես թրծված մարտիկներն ու սպաները), մի այլ մասով՝ միջազգային հանգամանքների:

Ի վերջո, հայկական դիմադրական զինված պայքարն իր վճռորոշ եւ իր ճակատագրական դերն ու նշանակությունն ունեցավ Եռյակ զինակցության (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Իտալիա) ջախջախման գործում: Գերմանական բանակի գլխավոր շտաբի պետ Էրիխ ֆոն Լյուդենդորֆը գրում է, թե գլխավոր ազդակը, որ առաջացրեց Գերմանիայի արևմտյան բանակի խորտակումը, վառելանյութի պակասն էր, երբ թուրքերը չկարողացան իր ժամանակին գրավել Բաքուն: Պետք է հիշել, թե Ռուսիայի Կովկասյան բանակը 1917 թ. դեկտեմբերին լքեց ճակատը և հեռացավ, թե թուրքերն ու թաթարները կռվում էին հայերի դեմ, որոնք հավատարիմ մնացին դաշնակից և աջակից պետություններին, և թուրքերը չկարողացան Բաքու հասնել մինչև 1918 թ. սեպտեմբեր, այսինքն Ռուսիայի կազմալուծումից ութ ամիս հետո¹⁸: Թուրքիան ընդհանուր կրախ ապրեց այն օրերին, երբ կայսրության ողջ հզորությունը նետել էր Արևելք եւ գրավելով Բաքուն, թվում է, հասել էր համաթուրանականության գերնպատակին: Հի-

րավի երևակայել է պետք, թե ինչ կլինե՞ր պատերազմի ելքը կամ տևողությունը, եթե հայերը չկռվեին:

Պակաս նշանակալից չէ նաև հայոց քաջարի դերը Արարայի ճակատամարտում (Պաղեստին, 1918 թ. սեպտեմբերի 19) թուրքական «Յըլդըրըմ» («Կայծակ») բանակի ջախջախման և դրանով իսկ թուրքական ռազմաճակատի քայքայման ու դաշնակիցների ընդհանուր հաջողության մեջ՝ որպես հետևանք ռազմագիտական կարևոր նշանակություն ունեցող Արարա բարձունքի գրավման:

3. **1919-ից մինչև 1923** թվականներ. հույների ոչընչացման, «անավարտ» մնացած արմենոցիդի շարունակման և նրա արդյունքների «իրացման» քեմալական քաղաքականություն՝ մի կողմից, և մյուս կողմից՝ թուրքական պետության դուրս բերում «հաջողությամբ» կատարվածի պատասխանատվության տակից:

...Հայության գերակշիռ զանգվածի հակվածությունը հնազանդության և «խոհեմության», նրա կրավորական կեցվածքը, իրադրության խճճվածությունն ու խիստ բարդությունը, ազգային հոգեւոր ու քաղաքական ղեկավարության ռազմավարական կրախը ունեցան աղետաբեր արդյունք: Եվ հայությունը ազգովին քայլեց կորստաբեր ամիսների ճանապարհով... Սակայն վերապրեց այնտեղ, որտեղ դիմեց և կարողացավ կազմակերպել ինքնապաշտպանություն: Ի դեպ, միևնույն ժամանակ, հերոսական Վասպուրականում անզուգական Արամի գլխավորությամբ հիմքերը դրվեցին հայոց նոր պետականության...

Բնականաբար, թուրքական եղեռնագործությունը ծնեց նաև Թուրքիայի ու թուրք ժողովրդի պատասխանատվության խնդիրը.

ա) աշխարհաստան Մեծ ոճիրը կազմակերպած և իրականացրած ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվություն, ինչն իրականացվեց, ճիշտ է, ոչ լրիվ ծավալով, Հայ հեղափոխական դաշնակցության կողմից («Նեմեսիս» գործողությունը գործադրվեց առանց պետական աջակցության և Հայաստանի կառավարության թըշնամանքի պայմաններում),

բ) թուրքական պետության քաղաքական պատասխանատվություն և «Վիլսոնյան» Հայաստանի ստեղծում,

գ) նյութական պատասխանատվություն՝ ռեստիտու-

ցիայի (հայոց իրավունքների վերականգնում, ապօրինի գրավված գույքի վերադարձում և այլն) տեսքով¹⁹:

Ակնհայտ է, որ հայոց պայքարի հետագա տրամադրությունները տասնամյակներով և ավելի տևական շրջանում պայմանավորելու են 2) և 3) կետերը: Եվ դա, վստահաբար, հանգեցնելու է աշխարհում առաջին ցեղասպանության՝ արմենոցիդի²⁰ հետևանքների վերացմանը: [Ի դեպ, այս բոլորը նախատեսում է Սևրի դաշնագիրն իր համապատասխան գլուխներով ու պարագրաֆներով]: Ամբողջական իմաստով այն հանգում է հետևյալին. հայության պահանջը միայն արյան ու նյութական հատուցման [հինգ միլիարդ ոսկի դոլար՝ 1920 թ. հաշվով, որն իր մեջ պարունակում է զարդեղեն, գոհարեղեն, կանխիկ դրամ, հող, տուն, կահկարասի, այգի, արտ, գործիքներ, առևտրական ապրանքներ և այլն] պահանջ չէ, այլ նաև և գլխավորապես իր անդրենածին ՀԱՅՐԵՆԻՔԻ վերադարձի ու ինքնատիպ քաղաքակրթության պաշտպանության և վերականգնումի պահանջ: Ընդամին, թուրքական պետության ու հայոց ունեցվածքը սեփականած թուրք վերնախավի ու ժողովրդի ուրացումի քաղաքական նեյնիմներն ուղղված են բացառապես Հայաստանի օկուպացիան (բռնազավթումը), առանց հայերի, հավերժացնելուն: Ուրիշ ոչինչ:

Ցեղասպանության թուրքական ռազմավարության «այք-ն» ու «բեն»-ը լավագույնս ներկայացրել է Յու. Գ. Բարսեղովը: «Եթե հայերի ցեղասպանության նպատակը, գրում է նա, - 1876-1914 թթ. ստրկացված ժողովրդի տարածքները ձեռքից բաց չթողնելն էր, ապա 1915-1923 թթ. նրա նպատակն էր տարածքային էքսպանսիան [ընդարձակումը], էթնիկական [աշխարհագրական] և քաղաքական [այն] սեպի խորտակումը [կործանումը], որը խանգարում էր համաթուրանականության քաղաքական ծրագրի իրականացմանը, Ռուսաստանից Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի, Մերձվոլգյան, Միջին Ասիայի թուրքալեզու տարածքների պոկումը և նրանց միացումը Թուրքիայի հետ»²¹:

...Տարօրինակ է, սակայն իրողություն, որ այսօր հայ ժողովուրդը նորից ազգային-պատմական իր հիմնախնդիրներով հայտնվել է արդար, մարդասիրական ու իրավա-

կան նոր աշխարհակարգի համար պայքարողների առաջին շարքերում, թերևս իրեն գորավիզ ունենալով XX դարի մարդասերի, Նոբելյան խաղաղության մրցանակակրի, խոշորագույն քաղաքական և պետական գործչի, ԱՄՆ-ի 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի համոզում-հորդորը. «Թուրքիան իր դաժանություններով գերազանցեց իր ուսուցիչներին և դրանով ապացուցեց Եվրոպայում լինելու իր կասկածելի իրավունքը... Հայերի համատարած կոտորածը մեզ հարկադրում է բացառել այդ տգետ, անառողջ բանդան Եվրոպայի սահմաններից: Հայաստանը պետք է ստանա այն, ինչի պատմական իրավունքը նա ունի... **Վաղ թե ուշ Թուրքիան կանգնելու է Տրիբունալի առաջ և հաշիվ է տալու, ու այնժամ նրանից պահանջվելու է կողոպտվածը վերադարձնել իր իսկական տիրոջը**»²²:

Եիշտ է, որ Գորշ գայլը նենգ էր (և է), դարանակալ ու ոխակալ, նաև անբարո, սակայն հայ ժողովրդին պետք է ուղեկցի վստահությունն իր բարոյական ու ֆիզիկական ուժերին, նվիրվածությունը Հայաստանի լուսավոր ապագային: Այդպիսով միայն նա կկարողանա կատարել պատմա-քաղաքակրթական իր առաքելությունը «Եղեմական այգում» որպես աշխարհի առաջին քրիստոնյա պետություն:

Հ. Գ. - Արմենոցիդի հարցում առկա է ճակատագրի դաժան խաղը նրա հովանավորների կյանքում: Հայատյաց Ալեքսանդր Բորիսովիչ Լոբանով-Ռոստովսկին, Նիկոլայ II-ի արտգործնախարար, կաթվածահար եղավ՝ լսելով Վանում հայերի կոտորածի մասին, 1896 թվականի օգոստոսին: «Ես համոզված եմ, - ասում է Պոլ Կամբոնը, - որ նրան տապալող հարվածը տեղի ունեցավ հենց այդ պատճառով»: Առեղծվածային է նաև Թուրքիայում Գերմանիայի դեսպան Հանս Ֆրայլեր ֆոն Վանգենհայմի մահվան (1915 թվականի հոկտեմբերի 25) պատմությունը: Քաջածանոթ Հենրի Մորգենթաուն գրում է, որ հայերի զանգվածային սպանությունների հարցով Վանգենհայմի հետ ծանր խոսակցությունից երկու օր հետո «ճաշասեղանի շուրջ նրան հասավ հարված (его хватил удар): Նրան բարձրացրին երկրորդ հարկ եւ պառկեցրին տեղաշոր, սակայն նա այդպես էլ գիտակցության չեկավ»: Նա այն մարդն էր եւ նրա

կառավարությունը այն կառավարությունն էր, որոնք «կարող էին կասեցնել այդ հանցագործությունը... ամբողջ մի ժողովրդի այդ կոտորածը»: Այդ երկու դիվանագետները, քսան տարվա տարբերությամբ, ինչպես գրում է Վահագն Տատրյանը, կանխամտածորեն թույլ տվեցին հայերի

զանգվածային կոտորածներ երկու դեպքերում էլ, դրանով իսկ բաժանելով գործակցի բեռը: «Նրանց բաժին ընկավ նույն հիվանդությունը, որ հանգեցրեց նրանց մահվանը, քանզի այդ հիվանդությունը՝ կաթվածահարությունը եղավ ճակատագրական»²³:

¹ Պերմանացի արվեստաբան Էռնստ Դիցը գտնում է, որ սելջուկյան արվեստը հայկականի շարունակությունն է: Տե՛ս **Dietz Ernst**, Սելջուկյան արվեստը, Կ. Պոլիս, 1948:

² Հայոց ունեցվածքի կողոպուտը թուրքերի կողմից Մեծ եղեռնի տարիներին կազմել է 5 մլրդ. ամերիկյան դոլար: Մի մասը գրպանեցին թուրք ջարդարներն ու նրանց վերնախավը, իսկ առյուծի բաժինը հատկացվեց քեմալական շարժման ռազմական նպատակներին, արեւմտյան քաղաքակրթության բնօրրան Հունաստանի դեմ պատերազմում:

³ **Հակոբյան Թ.Խ.**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, էջ 393:

⁴ **Օրմանյան Մաղաքիա** արք., Հայոց եկեղեցին, Կ. Պոլիս, 1911, էջ 15-16:

⁵ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 1991, էջ 436:

⁶ **Թումանյան Հովհ.**, Ահա թե ինչու, ԵԼԺ, հ. 6, էջ 375-376:

⁷ **Թումանյան Հովհ.**, Հայկական հարցն ու իր լուծումը, ԵԼԺ, հ. 7, էջ 20-21:

⁸ 1878 թ. հունիսի 4-ի Կիպրոսի դաշնագրով.- Լ. Շ.:

⁹ Տե՛ս «The Turkish Tyranny», հայերեն և անգլերեն, Թրքահայաստանի 1915-ի տարագրություն և ջարդ, Նյու Յորք, 1963, էջ 1-5:

¹⁰ Տե՛ս **Տարկեսյան Է.**, За кулисами: как родился Московский договор 1921 г., «Литературная Армения», 1991, N 1, էջ 76-77:

¹¹ Տե՛ս Раздел Азиатской Турции по секретным документам бывшего Министерства иностранных дел. Под ред. Է. А. Адамова, М., 1924, էջ 29:

¹² Տե՛ս **Յազճյան Գ.**, Արդուլ Համիդ Բ. կարմիր սուլթանը, Բեյրութ, 1980, էջ 827:

¹³ Նույն տեղը, էջ 812:

¹⁴ Տե՛ս **Գաբրիելյան Ա. Ս.**, Հայկական ճգնաժամն ու վերածնունդը, Բոստոն, 1905, էջ 64:

¹⁵ **Րիֆաթ Սևևան** Չաղե, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Եր., 1990, էջ 18, 19:

¹⁶ Տե՛ս **Ասատրյան Հայկ**, Հայաստան. արիական նախադիրք Առաջավոր Ասիայում, հ. Ա., Սոֆիա, 1942, էջ 123-133: «Մոնգոլական եղեռնաբաղձություն»՝ Թուրքերի ոգում անկորնչելի է միայն ոչնչացումի, եղեռնումի, պղծումի զգացումը: <...> բնազդների շղթայագերծման ժամանակ հարազատորեն վերակրկնում է [Տուղրիլի, Արփ-Արսլանի, Թիմուրի, Չինգիզի] գործերը: Այս պարագան ինքնին մի ապացույց է բնազդների, ոգու զորավոր ինքնապահպանության, ինչպես նաև այն բանի, թե քաղաքակրթական ձևերի յուրացումով ստորաբնազդ մի ցեղ չի կարող ընդունակ դառնալ նաև մշակութաստեղծումի և թե արտաքին բոլոր կարգի ազդեցությունները - անգամ կրոնը, դաստիարակությունը - նպաստում են միայն ներքին ընդունակությունների զարգացման, բայց ոչ երբեք փոխում նաև ոգու բնությունը: Այստեղ՝ բուն պատճառը հայկական եղեռնի (էջ 133):

¹⁷ **Дадрян В.**, Геноцид армян: содержание преступления. Եր., 2005, էջ 27:

¹⁸ Տե՛ս **Հիշատակագիր Հայկական հարցի** մասին տրված ԱՄՆ նախագահ պրն. Հարտինգին, Իզմիր, 1921, էջ 6:

¹⁹ Հանգամանորեն տե՛ս **Барсегов Ю. Г.**, Геноцид армян - преступление по международному праву. М., 2000:

²⁰ Ուշագրավ է, որ Մեծ եղեռնի «թարմ» հետքերով քաղաքակիրթ աշխարհը սկսեց խոսել հայոց ցեղասպանության մասին եւ այն որակեց իր իսկական անունով, որպես ողջակեզ (holocaust), «ահարկու ողջակեզ» («ghastly holocaust»)- Տե՛ս Hocking Joseph, The path of glory («Փառքի ճանապարհին»), London, New York, Toronto, 1918, p. 216, 240:

²¹ Նույն տեղը, էջ 320:

²² Տե՛ս **Чальхушян Г.**, Красная книга, Ростов на Дону, 1919, էջ 183-184:

²³ Հանգամանորեն տե՛ս **Дадрян В. Н.**, История армянского геноцида. Этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа. Пер. С англ., Եր., 2007, էջ 92-93, 347-348:



ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱՆՑԻԿ ԵՆԹԱՓՈՒԼ

1921-1923 թթ.

Հովհաննես Զատիկյան

Խորհրդային կարգերի հաստատումով Հայկական հարցը զրկվեց պետական հոգածությունից: Հայկական հարցի «տնօրինությունն» անցավ բուլշևիկյան վարչակարգի ձեռքը, որը մինչև 1988 թ. այն ծառայեցնում էր իր շահերին, իսկ ներերկրային հայկական կնճիռները մաքրում ստալինյան հայատյացության սկզբունքներով: Այս առումով էլ, Հայկական հարցի փուլային զարգացման մեջ գոյանում է մի յուրահատուկ ժամանակահատված, որն ընդգրկում է 1921-1923 թթ.: Պայմանականորեն ՄԻՋԱՆՑԻԿ շրջան անվանելով այդ ժամանակահատվածը, նշենք, որ հենց այդ շրջանում էլ փորձեր արվեցին մեկընդմիջտ մոռացության մատնել, պատմության գիրկն ուղարկել Հայկական հարցը:

Ժամանակահատվածի կարևոր իրադարձություններից առանձնացրել ենք համեմատաբար նվազ քննարկված Կիլիկիայի իրադարձություններին և Լոզանի կոնֆերանսին վերաբերող վերլուծությունները:

Հայկական հարցը յուրօրինակ լուծում ստացավ Կիլիկիայում: 1916 թ. Անտանտի երկրների գաղտնի պայմանագրի համաձայն, Կիլիկիան թեև բաժին ընկավ Ֆրանսիային, սակայն այնտեղ, մինչև 1919 թ. տեղավորվեցին անգլիացիները: Նույն թվականի վերջերին ֆրանսիացի-

ները, իրենց թույլ ուժերով, փոխարինեցին անգլիացիներին: Հայերը ոգևորություն ցուցաբերեցին, մտածելով, որ «Հայկական լեգեոնի» ծառայությունները նկատի ունենալով, իրենց կտրվի առնվազն ինքնավարություն՝ Ֆրանսիայի հովանու տակ:

Անորոշ վիճակը շարունակվեց մինչև 1920 թ. սկզբները: Թուրքական ուժերը թուրք-քրդական խուժանի հետ միացած հարձակման անցան, որպեսզի Կիլիկիայից հեռացնեն ֆրանսիական ուժերին: Հայերը, բնական է, որ հարձակունը դիտելու էին որպես ապագա կոտորածների նախադուռ և դիմեցին ինքնապաշտպանության, դրանով իսկ թուլացնելով ֆրանսիացիների վրա ճնշումը: Սակայն, վերջիններս, փոխանակ հայերի վրա հենվելով հակահարված տային գրոհողներին, որոշեցին նահանջել: Օգտվելով առիթից և կոտրելով հայերի դիմադրությունը, թուրքերին հաջողվեց Մարաշում կոտորել 12000, Հաճընում՝ 6000 հայերի: Նախօրոք, նահանջող ֆրանսիացիների հետ (1920 թ. փետրվար), հայրենիքից հեռացան 5000 հայեր:

Թուրքիայում ունենալով տնտեսական մեծ հետաքրքրություններ, հետևելով քաղաքական նոր զարգացումներին, ձգտելով հարաբերությունները կարգավորել թուրքական նոր վարչակարգի հետ, անտեսելով հայ ժողովրդ-

դի շահերը, Ֆրանսիան սկսեց վարել երկդիմի քաղաքականություն: Առերես ցույց տալով, թե հանդիսանում է հայերի պաշտպանն ու հովանավորը, ներքուստ նախապատրաստում էր Կիլիկիայի վաճառքը:

Հայերը, ճիշտ գնահատելով ֆրանսիացիների վերաբերմունքը, քանի դեռ նրանց զինվորական ներկայությունը առկա էր, որոշեցին կազմել սեփական անկախ իշխանություն: Ֆրանսիան կտրականապես դեմ էր նման քայլին և Միհրան Տամատյանի 1920 թ. օգոստոսի 4-ի կառավարության կազմումից հետո հրաժարվեց որևէ օգնություն և աջակցություն ցույց տալ հայերին և սպառնալիքներով պահանջում էր ցրել ինքնավարական մարմինը և հանձնել զենքերը: Մերժում ստանալուց հետո ավելի թշնամական դարձավ ֆրանսիացիների վերաբերմունքը: Ֆրանսիական զորքերի հրամանատարը հրաժարվում էր որևէ կապից, մերժում էր Տամատյանի հետ հանդիպելու առաջարկները: Հայերը հույս ունեին, թե օգնություն և պաշտպանություն կստանան թե ֆրանսիացիներից, թե դաշնակիցներից: Դիմելով համարձակ ու վճռորոշ քայլի, հայերը զուցե կարողանային ետ շարտել թուրք բաշիբոզուկների հարձակումները և իրականացնել իրենց ցանկությունը, եթե հաղթող տերությունները գոնե ցուցաբերեին դիվանագիտական աջակցություն: Այդ ակնկալիքի փոխարեն Ֆրանսիան իր դիրքերը Թուրքիայում չկորցնելու նպատակով, 1920 թ. հոկտեմբերի 20-ին, Անկարայի պայմանագրով, Կիլիկիան նվիրեց քենալականներին: Կոտորածներից փրկված հայերին մի կերպ հաջողվեց անցնել Սիրիա:

Ֆրանսիայի անհաշվենկատ դիրքորոշումն առաջին հերթին հարվածում էր դաշնակիցներին, որովհետև քենալականները խուսափելով Կիլիկիայից սպասվող վտանգից, ավելի սերտացնելով հարաբերությունները դաշնակից բոլշևիկների հետ, պաշտպանողական քաղաքականության փոխարեն արդեն վարում էին հարձակողական, նվաճողական պատերազմներ, ինչը մարքսիզմի տեսությամբ անվանվում էր «ազատագրական շարժում»:

Հայկական հարցի Միջանցիկ փուլի ավարտական փաստաթուղթը ծնվեց Լոզանում: Ազգերի լիգայի 1921 թ. սեպտեմբերի 21-ի Ընդհանուր ժողովը Հայկական հարցի մասին ընդունեց որոշում, որը հանգում էր հայերի համար ազգային օջախի ստեղծման գաղափարին՝ «լիովին անկախ Օսմանյան պետությունից»¹: Սակայն, որոշումը այդպես էլ

չիրագործվեց և անկատար վիճակով փոխանցվեց լիգայի 1922 թ. նստաշրջանին: Հաստատելով նախորդ որոշումը, նստաշրջանը ազգային օջախի ստեղծումը համարում էր անհրաժեշտություն, բայց Հայկական հարցը փոխանցում էր Գլխավոր դաշնակից տերություններին, որպեսզի քննարկվեր Թուրքիայի հետ առաջիկա բանակցությունների ընթացքում:

1922 թ. մարտի 22-26-ը Փարիզում տեղի ունեցավ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի ներկայացուցիչների կոնֆերանս, որտեղ որոշվեց Հայկական հարցի լուծման համար դիմել Ազգերի լիգային: Տերությունները, որ պատրաստվում էին Սևրի պայմանագրի փոխարեն կնքել նոր պայմանագիր, չունենալով հստակ դիրքորոշում չարչարվող հարցի վերաբերյալ, միմյանց նկատմամբ ունենալով խոր տարածայնություններ, փոխելով իրենց վերաբերմունքը Թուրքիայի նկատմամբ, Հայկական հարցը վերածել էին քաղաքական շահարկումների ասպարեզի և ցավակցական, ոչինչ չասող բանաձևումներ ընդունելուց զատ, գործնական քայլեր չէին ձեռնարկում: Այդպիսի խաբուսիկ, երեսպաշտ ձևակերպումներով Հայկական հարցը մտցվեց 1922 թ. գումարված Լոզանի կոնֆերանս:

Հատկապես հայ գաղթականությունը հույս ուներ, որ այս անգամ գոնե տերությունները հաստատուն կմնան ազգային օջախի գաղափարին և մազապուրծ գաղթականությանը հնարավորություն կտան վերադառնալ պատմական Հայրենիք: Պատերազմը, որ համախմբել էր Անտանտի պետություններին, ավարտվել էր և նորից գլուխ էին բարձրացրել տերությունների հակամարտությունները, որ առավել սուր բնույթ էին ստացել Թուրքիայի հարցում, որովհետև խաղասեղանի վրա էր դրվել «որքան շատ զիջումներ, այնքան շահեկան արտոնություններ» տեսությունը, ինչը փառահեղորեն օգտագործում էր Մուստաֆա Քենալը: Նման պայմաններում հույս ունենալ, թե բարի ավարտ կունենա Հայկական հարցի քննարկումը, անիմաստ էր, որովհետև երեսպաշտ տերություններին էր միացել նաև բոլշևիկյան Ռուսաստանը, որն իրեն էր վերապահում Թուրքիայի պաշտպանի թիկնոցը:

Խորհրդածողովում Հայկական հարցը ընդգրկվեց Տերիտորիալ և ռազմական հարցերի հանձնաժողովի օրակարգում: 1922 թ. դեկտեմբերի 12-ին, հանձնաժողովի 13-րդ նիստում քննարկվեց Հայկական հարցը: Հանձնաժողովը,

Քերզոնի զեկուցումով հաստատեց. «Երբ դաշնակիցները ներգրավվեցին պատերազմի մեջ, նրանց նպատակներից մեկը Փոքր Ասիայում զգալի թիվ կազմող քրիստոնեական փոքրամասնությունների պաշտպանությունը և, հնարավորության դեպքում, նրանց ազատագրումն էր:

Դա առանձնապես վերաբերում է Հայաստանին: Այս առթիվ տրված հավաստիացումները բազմիցս կրկնվել են և քաջ հայտնի են. հիրավի, կարելի է ընդունել, որ այդ հավաստիացումներն իրենց սկիզբն առել են Բեռլինի պայմանագրից... Նրանք (հայերը- Հ.Զ.) արժանի են հատուկ ուշադրության՝ աչքի առաջ ունենալով ոչ միայն սերունդների կյանքի ընթացքում նրանց կրած դաժան տառապանքները, որ հարուցել են քաղաքակիրթ աշխարհի համակրանքն ու զարհուրանքը...»: Ապա մարկիզ նախարարը թվարկում է պատերազմի ընթացքում հայերի կրած տարածքային ու մարդկային կորուստները, ընդգծում, որ «Թուրքական Ասիայում մնում են լոկ, ենթադրում են, մոտավորապես 130.000 հայեր այն բնակչությունից, որի թիվը առաջ հասնում էր 3 միլիոնի»: Ջեկուցողը հույս է հայտնում, որ աշխարհով մեկ սփռված հայերին հայրենիք վերադառնալու հնարավորություն պետք է տրվի, որովհետև «ազգային ոգի ունեցող և վճռականությամբ լեցուն ժողովուրդը, բնական է, որ ձգտում է ապրել իր սեփական տերիտորիայում»²:

Անգլիայի արտաքին գործերի նախարարը հայապաշտպան արտահայտություններով ոչ միայն ամրագրում էր պատմական ճշմարտությունը, ոչ միայն ճանաչում հայկական կոտորածները, տարածքային կորուստները, այլև, բացառիկ անգամ, ընդունում, որ հայաթափված ու Թուրքիային բռնակցված տարածքները հայության սեփականությունն են, որ հայկական օջախի ստեղծումը ոչ միայն հայերի, այլ նրանց բարեկամների ցանկությունն է: Նախարարը հայասիրական ելույթում խնդրագիր է ներկայացնում թուրքական պատվիրակությանը, որպեսզի նրանք համաձայնվեն հայերի համար մի փոքր անկյուն հատկացնել Կիլիկիայում կամ Սիրիայի հարավ-արևելյան սահմաններում, մինչդեռ, որպես հաղթող տերության ներկայացուցիչ, կարող էր առավել արմատական պահանջներ առաջադրել թուրքական բարբարոսապետությանը: Ֆրանսիայի և Իտալիայի նախարարները նույնպես հանդես եկան ազգային օջախի գաղափարի օգտին, իսկ Թուրքիայի արտաքին գործերի կոմիսար Իսմեթ փաշան երկար ու ձիգ

նախաբանով ներկայացնելով Հայկական հարցի էությունը, թուրքական դաժանությունները համարեց Ռուսաստանի և տերությունների, հայկական հեղափոխական կազմակերպությունների գործունեության ու միջամտության արդյունք, նշեց, որ մինչ պատերազմը հայերը վայելել են սուլթանի ու կառավարության հովանավորությունը, ապրել են ազատ, բռնություններից ապահով, բարեկեցիկ կյանքով, որ կոտորածները հիմնականում արդյունքն էին հայերի ինքնագոհաբերության, որպեսզի տերությունները ստիպեին Թուրքիային տերիտորիալ զիջումներ ու ինքնավարություն շնորհել հայերին:

ԱՄՆ-ի ներկայացուցիչ Չայլըր ցուցաբերեց առավել մեծ հայասիրություն, խորհրդածողովին հիշեցնելով Հայկական հարցը լուծելու հավաստիացումներից արված քաղվածքներ, առանց հիշատակելու ԱՄՆ-ի դերը հայերի ճակատագրի հարցում, երբ Սենատը մերժում էր Հայաստանի մանդատը, երբ ամերիկյան դեսպանների ու հյուպատոսների զեկուցագրերը չիրապարակելով, հասարակական կարծիքը պարուրում էին անտեղյակությամբ, երբ Մեծ եղեռնի ահասարսուռ տեսարանների նկարագրությունները կարդացող պետական պաշտոնյաները դատարանում, որպեսզի գաղթական հայերին ճանաչեին սպիտակամորթ ու քաղաքացիություն տալին, դատական աղմկահարույց միստեր էին գումարում, երբ խանդոտ ամերիկյան դիվանագիտությունը քայլ անգամ չկատարեց նախագահ Վիլսոնի գծած միացյալ Հայաստանի սահմանները պաշտպանելու ուղղությամբ: Եվ այս ամենից հետո հիմա երեսպաշտորեն հայտարարում էր. «...Միացյալ Նահանգների ժողովրդի անունից համառորեն պնդում են, որ այս կոնֆերանսը չպետք է ցրվի, քանի դեռ չի սահմանել մշտական համագործակցության օգնությամբ անպաշտպան զանգվածների համար ապաստան գտնելու եղանակը...»³:


Դեկտեմբերի 13-ի 14-րդ միստում, կրկին խոսք է վերցնում Իսմեթ փաշան և մերժելով հայերի համար ազգային օջախ ստեղծելու գաղափարը, ավելացնում, որ Թուրքիան խորհրդային Հայաստանի հետ կնքել է բարիդրացիական պայմանագիր և «Թուրքիայի ստանձնած պարտավորություններին հակառակ կլիներ պատկերացնել որևէ այլ Հայաստանի գոյությունը»⁴:

Թուրքական պատվիրակը խորամանկորեն հիշեցնում էր խորհրդածողովի մասնակիցներին, որ իրենց դավանած սկզբունքներին նույնպես դեմ է երկրորդ հայկական պե-

տության ստեղծումը, և որ Սևրի պայմանագիրը անկատար թողնելու պատճառներից մեկն էլ հենց այդ գաղափարն է:

Թեև Անգլիան ներքուստ համակարծիք էր թուրք պատվիրակի մտքերին և երբեք չէր դիմելու հայկական օջախ ստեղծելու ծրագրի իրագործման քայլերի, պատմության համար, Անգլիայի վրայից մեղքի ծանրագույն բաժինը գցելու նպատակով, կրքոտ ելույթ ունեցավ. «Նա (Իսմեթ փաշան - Յ. Ջ.) չի ուզում վերականգնել սպանությունների և արյունահեղությունների այդ պատմությունը, - ասում է մարկիզ նախարարը, - ... նրանց (հայերին - Յ. Ջ.) ներկայացնում է որպես թուրքական տիրապետության տակ ապրող միանգամայն երջանիկ ու գոհունակ մարդկանց, որոնք թուրքական կառավարության կողմից հանդիպում են ամենաեղբայրական զգացմունքների: Նրանց տառապանքների պատճառը, ըստ նրա խոսքերի, հանդիսանում են հենց իրենց սեփական խելագրությունն ու նոր դրացիների մեքենայությունները: Եթե երկու ժողովուրդների միջև միշտ գոյություն են ունեցել երջանիկ հարաբերություններ, ապա այդ ինչպե՞ս պատահեց, որ Փոքր Ասիայում ապրող երեք միլիոն հայերի թիվը նվազելով հասել է 130 հազարի: Արդյո՞ք նրանք ինքնասպանություն են գործել, թե՞ անհետացել են կամավոր կերպով: Ի՞նչ ճնշման տակ է տեղի ունեցել այդ նվազումը: Երբ ֆրանսիական զորքերը վերջերս էվակուացնում էին Կիլիկիան, ինչո՞ւ այդ երջանիկ, գոհունակ ազգին պատկանող 60-ից մինչև 80 հազար մարդ գաղթեցին, գնալով ֆրանսիացիների հետևից, Կիլիկիայում թողնելով իրենց տներն ու ընտանիքները, Կիլիկիայից դուրս իրենց մատնելով մուրացկանի կյանքի: Ինչո՞ւ տեղահանության պատճառով այժմ հարյուր հազարավոր հայեր ցրված են բոլոր աշխարհամասերում, այն ժամանակ, երբ նրանք պետք է հետևեին թուրքական կառավարության սիրալիր հրավերներին: **Վերջապես, ինչո՞ւ է Հայկական հարցը հանդիսանում աշխարհի ամենամեծ խայտառակություններից մեկը**»⁵:

Հայասիրական ելույթներն ու ազգային օջախ ստեղծելու անհրաժեշտության ընթրնումները չէին Հայկական հարցը լուծման փուլ տանող քայլերը, այլ Սևրի պայմանագիրը գործադրության ընդունելը և ոչ թե Սևրի փոխարեն նոր դժբախտությունների օջախի ստեղծումը: Թուրքական պատվիրակությունը անսասան էր: Նա քաջ գի-



տակցում էր, որ նույն քերզոնների Բեռլինի պայմանագիրն ու բազմաթիվ այլ պայմանագրեր ու վճիռներ, որոնք պետք է պաշտպանեին հալածված ժողովուրդներին թուրքական բռնատիրությունից, լուրջ թղթի վրա արված շարադրանքներ էին, ժողովուրդներին հերթական անգամ խաբող փաստաթղթեր: Ավելին, թուրք աշխատավոր ու «մաքուր ծեռքեր» ունեցող ժողովուրդը, որ վերամիավորում և վերականգնում է իր վաթանը, երբեք չի հանդուրժի հայերի համար ազգային օջախ ստեղծելու գաղափարը, որովհետև նման քայլը, ի վերջո, տանելու էր Թուրքիայի մասնատման: Վերջին միտքը նաև զգաստացնող էր, քանզի գլխավորը Եվրոպայի հավասարակշռության պահպանումն էր, նեղուցների պահակ կարգված Թուրքիայի ամբողջականության անձեռնմխելիությունը:

1922 թ. դեկտեմբերի 26-ին վերոհիշյալ հանձնաժողովում ծայնի իրավունք ստացավ Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող Ա. Ահարոնյանը: Նա Հայաստանի Հանրապետությունն էր ներկայացնում, թեև ծայնագուրկ էր: Նա ավելի քան մեկ միլիոն գաղթականության շահերն էր արտահայտում, նրա իրավունքները պատմական Հայրենիքի նկատմամբ: Եվ քանի որ խորհրդաժողովը լսելու և իբր վճռելու էր հայկական օջախի խնդիրը, պատվիրակությունը համակերպվել էր զրոյական այդ գաղափարին, որովհետև ոչնչով չէր կարող ազդել իրադարձությունների վրա, եթե դրան ավելացնենք նաև, որ թուրքական կողմը մեծ դժգոհությամբ էր ընդունել պատվիրակության գոյությունը, նրան ծայն տրամադրելը: Խորհրդային Հայաստանի գոյության պայմաններում, իրավաբանորեն, պատվիրակությունը զրկված էր լիազորություններից, բայց, քանի որ խնդիրը հիմնականում առնչվում էր գաղթականությանն ու նրան իր Հայրենիքում ապրելու իրավունք տրամադրելուն, ապա պատվիրակությունն իրավասու էր իր պարտականություններում, որովհետև Խորհրդային Հայաստանի լիազորություններով գործող բոլշևիկյան Ռուսաստանի պատվիրակությունը չէր էլ մտածում արծարծել եթե ոչ Հայկական հարցը, ապա զոնե գաղթականության խնդիրը. դա դեմ էր բոլշևիկ-թուրքական համագործակցության սկզբունքներին:

Ա. Ահարոնյանը, խոսելով թուրքական 1920 թ. բռնազավթումների մասին, նշելով, որ դրանց արդյունքում Արևելյան Հայաստան են փախել շուրջ 500.000 գաղթական, որ

նրանց գոյապահպանության համար չկան նվազագույն հնարավորություններ, ընդգծում է, որ թուրքերը այդ քաղաքականությունը հիմնավորում են 1918-1921 թթ. կրնքված պայմանագրերով, որոնք Սուդրոսի գինադադարով ու 1921 թ. Լոնդոնի խորհրդաժողովով ոչնչացված են: Գնահատելով ազգային օջախի գաղափարը, Ա. Ահարոնյանը ընդգծում է, որ ազգային օջախ հասկացությունը Հայկական հարցի լուծում չէ, ապավենի, բնակվելու տեղի կամ գաղթավայրի խնդիր չէ, «այլ մեր դարաւոր հայրենիքին մէջ Ազգային օճախ մը կ'ուզենք ունենալ»: Այնուհետև, հիշեցնելով, սկսած 19-րդ դարից, Հայկական հարցի առթիվ տերությունների ընդունած ծրագրերն ու միջոցառումները, նշում է, որ 25 դար շարունակ իր երկրում ապրած ժողովուրդը արդարության անունից իրավունք ունի պահանջելու «Ազգային օճախ մը ծովային ելքով», որովհետև «մեր ազգը մէկ սիրտ ու հոգի դարձած՝ նետուեցաւ ընդհանուր շփոթի մէջ եւ մէջտեղ դրաւ ոչ միայն իր ներկան ու ապագան, այլ եւ իր անցեալը, որովհետեւ ամբողջ սերունդի մը ոչնչացումը կը նշանակէ խզել բնախօսական կապը մեր նախնիքներու եւ գալիք սերունդի միջեւ: Ոչ մէկ մեծ կամ փոքր դաշնակից պետութիւն, որ մասնակցած է համաշխարհային մեծ պատերազմին, չէ ունեցած այնքան ծանր տառապանքի օրեր, որքան փոքրիկ հայ ժողովուրդը: Ու այդ տառապանքներէն ալ կը բխի իր անբաժան իրաւունքը՝ պահանջելու սեփական հայրենիք մը որքան եւ ան ըլլայ համեստ»⁶:

Հայ պատվիրակը բարձրացնելով Հայրենիք ունենալու հայության պահանջը, ինքնըստինքյան մերժում էր ազգային օջախի գաղափարը, օջախ, որը նորից գտնվելով վանդալիզմի ճիրաններում, նորից վեր էր ածվելու թուրքական ասպատակությունների ասպարեզի: Պարզաբանելով, որ թուրք պատվիրակը ճշմարիտ չի ներկայացնում հայության ազատագրական պայքարի պատճառները և այն կապում է դրսի դրդումների հետ, Ա. Ահարոնյանը ընդգծում է, որ հակառակ ասվածի, սուլթանն ու ցարը միական էին հայ ազատագրական շարժումները ճնշելու հարցում, իսկ անգլիական տարբերակը անվանում է առասպել. «Այո՛, մենք միշտ ճգներ ենք մեր հայրենիքի ազատութեան, եւ Միացեալ Հայաստանը պիտի լինի մեր խոճալը: Բայց եթե կան ներկայիս դժուարութիւններ, որոնք թոյլ կուտան դաշնակիցներուն գծել միայն փոքր Հայաստան մը մեծի փո-

խարեն, այսինքն Ազգային օճախը հիմնուի Կիլիկիոյ մէջ, մենք պիտի ընդունինք այդ առաջարկը դաշնակիցներու կամքը յարգած ըլլալու եւ անոնց աշխատանքը թեթեւացնելու համար»: Համոզվածությունն արտահայտելով, որ ի վերջո հաղթանակելու է արդարությունը, Ա. Ահարոնյանը հույս է հայտնում, որ խորհրդաժողովը չի ցրվի այնքան ժամանակ, քանի դեռ «արդարօրէն չլուծուի մեր դատը»⁷:

Թերևս խորհրդաժողովի նպատակների կանխագագությունն էր, որ Ա. Ահարոնյանին ստիպում էր հայ ժողովրդի արդար, օրինական պահանջները մոռանալով, ընդունել «չարյաց փոքրագույնը»: Ազգային օջախի ստեղծումը դիտելով ապագայի երաշխիք, հանգրվան, ակնկալելով «լրիւ և իրական» արդարություն, մեծ տերությունների ստեղծած այդ շփոթի մէջ, երբ ոտնատակ էին արվում փոքր ժողովուրդների իրավունքները, համաշխարհային նոր զարգացումների գոյության պայմաններում սպասել Հայկական հարցի արդար լուծում, հնարավոր չէր:

1923 թ. հունվարի 7-ին փոքրամասնությունների ենթահանձնաժողովի նախագահ Մոնտանյան, Քերզոնին ուղղված քաղվածքներում, թվարկում է ենթահանձնաժողովի կատարած աշխատանքները, որ ուղղված էին «Թուրքիայի հայ ազգաբնակչությանը վերջնականապես ապահովել խաղաղ կյանքով» նպատակին և չէին վնասում «թուրքական կառավարության փափկանկատությանը», սակայն «Թուրքական պատվիրակությունը իրեն առաջադրված բոլոր, ինչպես հայերին, նույնպես և ասորա-քաղղեացիներին և բուլղար բնակչությանը վերաբերող հարցերին հակադրեց կտրական ու բացարձակ մերժում»⁸:

Սպառվել էին տերությունների հնարավորությունները, նրանց ջանքերն այժմ ծառայելու էին սեփական նպատակների իրագործմանը, ծրագրեր, որոնց իրականացման ճանապարհին հուսախաբությունների նոր բլուրներ էին գոյանալու Հայկական հարցի ճանապարհին: Այդպիսի ավարտը կանխատեսելի էր: Դրա հիմքերը դրվել էին դեռևս 1922 թ. մարտին գումարված Փարիզի խորհրդաժողովում: Ա. Ահարոնյանը, գնահատելով խորհրդաժողովը, պատկերավոր միտք է արտահայտում, ասելով՝ խորհրդաժողովը «...ամեն տեղ ստեղծում է հրդեհ, առանց հնար ունենալու մարել կրակը: Մենք, ինչպես միշտ, առաջին զոհերն ենք»⁹:

Լոզանի խորհրդաժողովն ավարտվեց 1923 թ. հուլիսի 24-ին: Թուրքիայի հետ, Սևրի պայմանագրի փոխարեն,

կնքվեց նոր պայմանագիր, որը բաղկացած էր 143 հոդվածներից, նրանցից 21-ը վերաբերում էին Թուրքիայի փոքրամասնություններին, որտեղ ակնարկ կամ հիշատակություն չկա Հայաստանի և հայերի մասին:

«Ի՛նչ յոյսեր և ի՛նչ յուսախաբութիւններ: Ի՛նչ ճիգեր և ի՛նչ վիատութիւն», - այսպես բնութագրեց «Հայասերների միջազգային դաշնակցության» գործադիր ժողովի փոխնախագահ Քրաֆթը Լոզանի դաշնագիրը¹⁰:

1923 թ. օգոստոսի 8-ին Ազգերի լիգային ուղղված բողոքում Ա. Ահարոնյանը գրում է. «Լոզանի խորհրդաժողովին վաղորդայնին, որ Սելվի դաշնագրին տեղ նոր մը կը դնէ, որուն մէջ ոչ մէկ բան կայ հայկական հարցի մասին... Լոզանի Դաշնագիրը Արեւելքի ժողովուրդներուն ճակատագիրը առկախ ձգելով, ոչ խաղաղութեան կը ծառայէ, ոչ ալ արդարութեան»¹¹:

Թուրքական պատվիրակությունը քաջատեղյակ էր, որ Լոզանի խորհրդաժողովը գումարվում է ոչ թե փոքր ժողովուրդներին ազատություն բաշխելու համար, այլ Թուրքիայի ահ ու սարսափ Սևրի դաշնագիրը վերածնելու և թուրքերին հաճելի տեսք տալու համար: Ահա թե ինչու, երբ 1923 թ. հունվարի 6-ին նորից քննարկվում էր Հայկական հարցը, լկտի պահվածքով ներկայացավ թուրք պատվիրակ Նուրի բեյը և դժգոհություն հայտնելով, որ քննարկման է դրվել Հայկական հարցը, սպառնաց, որ եթե հարցի անդրադարձը չհանվի օրակարգից, ինքը կհեռանա նիստից: Բնական է, որ «հայասեր» տերությունների ներկայացուցիչները մերժեցին պահանջը, և թուրք պատվիրակը ձայնեղ փակելով դուռը, հեռացավ: Դրությունը շտկելու համար, վերոհիշյալ Քրաֆթը թուրք մեկ այլ պատվիրակի՝ Ռիզա բեյին սկսում է համոզել զիջումների գնալ Հայկական հարցում: Վերջինս անկեղծորեն պատասխանում է. «Լաւ իմացք, որ եթե պզտիկ զիջում մը իսկ ընենք հայերուն, մենք չենք կարող այլեւս վերադառնալ Թուրքիա: Մեզ կը սպանեն ճանապարհին իսկ»¹²:

Եթե 1917 թ. դեկտեմբերի 21-ին Լ. Ջորջը հայտարարում էր, թե՝ «Հայաստանը այլևս նորից չի դրվի Թուրքիայի նողկալի տիրապետության տակ», իսկ նրա գործընկեր Կլիմանտն, ուղիղ մեկ տարի անց, հաստատելով վերոհիշյալ միտքը, ավելացնում էր՝ «Թուրքերի ներկայությունը Կ.Պոլսում, Եվրոպայի մարմնի վրա խոց է»¹³, ապա հռետորական այդ մտքերը հրապարակվում էին լոկ հասարակական

կարծիքը շեղելու համար, որովհետև մեծերը այժմ մեծ կարևորություն տալով Թուրքիային, ծգնելով նրան դուրս բերել բոլշևիկյան ազդեցությունից, կաշառելով նրան, հակվում էին այն տեսակետին, որ անհրաժեշտ է «1915ի թիրք կառավարության՝ Թիւրքիոյ մէջէն հայ անունը ջնջելու հանդուրժող ծրագրին» հավանություն տալ:

Խորհրդաժողովի ամբողջ ընթացքը հաստատում է այդ գաղափարը, ապացուցում, որ տերությունները խառնելով փոքր ժողովուրդների ճակատագրերը, փակում էին նաև այդ լաբիրինթոսից դուրս գալու ուղիները: Ահա թե ինչու Ահարոնյանը դառնությամբ գրում էր. «Մեծ պետութեանց ներկայացուցիչները Պիղատոսի պէս լուսացին իրենց ձեռքերը, եւ ընդունեցին թրքական տեսակետը՝ որովհետեւ իրենց քաղաքական բարոյականը այնքան ինկած էր՝ որքան թուրքինը: Քաղաքակրթութեան համար սեւագոյն օր մըն էր Լոզանի դաշնագրութեան ստորագրութեան օրը: Ցեղասպաններու մեծ յաղթանակի օրն էր անիկայ: Այդ օրը աշխարհի մեծերը հանդիսաւոր կերպով թաղեցին «Հայկական հարցը» ...Սակայն նոյն առթիւ անոնք թաղած եղան նաեւ պատիւ և արժանապատուութիւն, հանդիսաւոր խոստում եւ երդում, սկզբունք եւ արդարութիւն, իրաւունք եւ օրէնք...»¹⁴:

Լոզանում մեծ տերություններն ու Ռուսաստանը յուրովի լուծում տվեցին Հայկական հարցին, մեկ անգամ ևս հարցը վաճառելով թուրքական բռնատիրությանը: Սակայն տերությունների ներկայացուցիչները մոռացության մատնելով Հայոց խնդիրն ու իրավունքը, չպետք է անուշադրության մատնեին Քերզոնի զգուշացումը, որ հայերը ունեն

«ազգային ոգի», վճռականություն, որ հայ ժողովուրդը «ուժեղ անհատականություն» է: Ասել է, թե՛ որքան ցավոտ ու վիատեցնող լինէր դաշնագիրը, հայությունը երբեք չէր մոռանալու իր ազգային մտածողությունը, ազգային ինքնապահպանության ու մաքառման հզոր ոգին: Ինչպես հպարտորեն ընդգծել էր Ա. Ահարոնյանը՝ «Միացյալ Հայաստանը պիտի լինի մեր իտեալը»:

Լոզանի դաշնագրի հավուր պատշաճի քննության հիմնական նպատակը ոչ թե նրա պատճառած հուսախաբույությունը ներկայացնելն էր, այլ այդ ծանր ժամանակաշրջանի իրադարձությունների պատկերի ուղեկցությամբ հայ ազգային գաղափարախոսության նշանառու գաղափարների ընդգծումը, ինչը հնարավորություն է տալու Հայկական հարցի Միջանցիկ փուլի արդյունքները ընդունելով ավարտական չափանիշ, անդրադարձ կատարելու ազգային գաղափարախոսության ձևավորման ու ամբողջական դառնալու զարգացումներին:

Հայոց ազգային գաղափարախոսությունը վերջնական տեսքի եկավ, իբրև մտածողության նոր որակ հանդես եկավ 1919 թ. մայիսի 28-ի Հայաստանի կառավարության Միացյալ և Անկախ հայտարարության պատմական պահից: Հայոց կառավարության ընդունած խոշորագույն ազգային փաստաթուղթը վկայում էր, որ իր կատարյալ ձևավորումն էր ստացել ազգային գաղափարախոսությունը, որի հիմքերը դրվել էին դարերի խորքում և կատարելագործվելով, նորագույն ժամանակներում հասել ավարտուն վիճակի:

1 Եսայան Ա., «Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը», Երևան, 1965, էջ 222:

2 Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 736-738:

3 Հայաստանը միջազգային..., էջ 747:

4 Նույն տեղում, էջ 749:

5 Նույն տեղում, էջ 750:

6 Լազեան Գ., նշ. գիրքը, էջ 302-303:

7 Նույն տեղում, էջ 303-304:

8 Հայաստանը միջազգային..., էջ 754-755:

9 Ավետյան Մ., Հայ ազատագրական հիսնամյա / 1879-1920..., 1954, Փարիզ, էջ 223:

10 Քրաֆթ, Հայկական խնդիրը, ժնև, 1925, էջ 15:

11 Նույն տեղում, էջ 18, 22:

12 Դալլաբյան Կ., Հայ սփյուռքի պատմություն, Երևան, 1998, էջ 71:

13 Գալոյան Գ., նշ. գիրքը, էջ 19, 58:

14 Ահարոնյան Գ., նշ. գիրքը, էջ 171:

Սերգեյ Վարդանյան

ԱՐՄԱՆ ԿՈՔԻԿՅԱՆԸ՝

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՏԱՐԵԳԻՐ

Երևի քչերը գիտեն, որ նշանավոր դերասան, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Արման (Առաքել) Կոթիկյանը տրապիզոնցի է: Ծնվել է 1896-ին: Նա Անանիայի և Մաքրուիու յոթ երեխաներից վեցերորդն էր: Նախնական կրթությունը ստացել է Տրապիզոնից արևմուտք գտնվող ծովափնյա Էլևի ավանում, որտեղ ապրում էր Կոթիկյանների ընտանիքը: Ապա, բնակվելով Տրապիզոնում՝ ավագ եղբոր՝ Գևորգի մոտ, ուսումը շարունակել է Ազգային վարժարանում: Նրանց բազմամյա ընտանիքը ևս տեսել է Մեծ եղեռնի սարսափները, փրկվել են միայն Արմանը, քույրը՝ Վարդուհին և եղբայրը՝ Գևորգը: Արմանը և Գևորգն իրենց ընկերոջ՝ Ղազար Հարությունյանի (Մակունց) հետ ապաստանել են Տրապիզոնից հարավ-արևմուտք գտնվող, քաղաքամերձ Զյուրմեյլա գյուղի մոտակա անտառում, ուր նրանց 11 ամիս գաղտնի սնունդ է հասցրել Զոյի անունով մի երիտասարդ հույն կին: Ի դեպ, նրա քույրը՝ Մելին (ամուսնական ազգանունը՝ Գոգոֆիրիս), նույնպես ծածուկ օգնել է փախստական հայերին: Հույն կանանց անձնագրիությունն ու հերոսությունը գնահատելու համար պետք է նշենք, որ հայերի տեղահանության մասին 1915 թ. հունիսի 13-ին թուրքերեն հրապարակված պաշտոնական հայտարարության հինգերորդ կետը զգուշացնում էր, որ «Կառավարության հրամանին չհրճազանդող, տեղափոխութենէն խուսափող և այս ու այն կողմը պահուողները, պահողները, կերակրողները և անոնց պահուիլը ապահովողները կախաղան բարձրացնելու համար զինուորական ատեանին առջև պիտի դրկուլին»: Բայց մահապատժի սպառնալիքի դեպքում անգամ շատ հույներ օգնության ձեռք մեկնեցին հայերին: Սակայն,

շուտով՝ 1919-ին, Տրապիզոնի վիլայեթում սկսվեց հույների կոտորածը. ի՞նչ եղան Զոյին և նրա քույրը՝ Մելին, նրանց ընտանիքների անդամները, ցավոք, մեզ անհայտ է:

1916-ին ռուսական զորքերի կողմից Տրապիզոնի գրավումից հետո 20-ամյա Ա. Կոթիկյանը զբաղվել է որբահավաքով, մասնակցել է Տրապիզոնի Աղջկանց վարժարանի շենքում որբանոց-դպրոցի ստեղծմանը, Մեծ եղեռնի վերապրողներից գրի է առել նրանց վկայությունները, հայոց լեզու և պատմություն է անվճար դասավանդել Մխիթարյան վարժարանում, ուր իր սաներից կազմել է եռաձայն երգչախումբ և համերգներ տվել: Ի դեպ, նրա աշակերտների թվում էր նաև ապագա ամերիկյան նշանավոր գրող և գրականագետ Լևոն-Ջավեն Սյուրմեյլանը, որը հետագայում գրեց Տրապիզոնի հայության տեղահանությանն ու կոտորածներին նվիրված իր «Ձեզ եմ դիմում, տիկնայք և պարոնայք» անգլերեն վեպը:

1917-ին ռուսական զորքերի հեռանալուց հետո Ա. Կոթիկյանը տեղափոխվել է Սուխում՝ քրոջ մոտ: Այնուհետև՝ 1918-ին, Ստավրոպոլի մահանգի Եսենտուկի ամառանոցային քաղաքում, ծանոթանալով նշանավոր դերասան, բեմադրիչ և թատերական գործիչ Օվի Սևունյանի հետ, նրա թատերախմբի հետ հյուրախաղերով շրջագայել է Հյուսիսային և Հարավային Կովկասի հայաշատ քաղաքներով: 1919-ին 23-ամյա Արման Կոթիկյանը Ա. Արման գրական կեղծանունով թիֆլիսում հրատարակել է 1914-18 թթ. Տրապիզոնում, Սուխումում, թիֆլիսում և Հյուսիսային Կովկասում գրած իր բանաստեղծությունների «Մխացող շուշաններ» ժողովածուն: Նույն թվականին Օ. Սևունյանի հետ Բաթումից մեկնել է Կ. Պոլիս: Կարճ ժամանակ անց



Լուսանկարում՝ վերջին շարքում կանգնած են (ձախից) Ղ. Հարությունյանը (Մակունց), Գևորգ և Արման Կոթիկյանները: Կենտրոնում նստած են փախըստական հայերին օգնող հույն քույրերը՝ Ջոյին և Սելին, իրենց երեխաներով, նրանց երկու կողմերում նստած են նրանց սկեսուրները, առջևում, հավանաբար, նրանց և ազգականների երեխաներն են: Նկարի աջ անկյունում այն կողմն ու սափորն են, որոնցով հաց ու ջուր են հասցրել բաքնված հայերին:

հաստատվել է Փարիզում, ուր մինչև 1925 թ. ուսանել է իրավաբանություն և Սորբոնի համալսարանում՝ գրականություն:

Մեծ եղեռնի ահասարսուռ հուշերը չէին սպիանում, և Արման Կոթիկյանը 1924-ին գրել է «Մեր տունը» բանաստեղծությունը:

*Ծուխն երկնքեն քուլա՜-քուլա՜,
Քաղցր օրհնությունն գեղի մեր տան...
- Երդիքն հիմա նստեր կուլա,
Եհտ են ծռեր մաճ ու գութան...*

*Երինջն անուշ կը բառաչե,
Քույրս իր լեզուն կը հասկընա...
- Գոմը դատարկ կը հառաչե,
Ոչ ոք լեզուն կը հասկընա...*

*Հաց կը թխե մայրըս աղվոր,
Խմորն առա՛տ, հարսս է շաղվեր...
- Փուռն է սառած դամբան մը խոր,
Ուր մորս օրհնյալ ձեռքն է թաղվեր...*

*Գիշեր է գով - կալի գիշեր -
Հասկն է արծաթ, լուսեն լուսնի...
- Արտերուն մեջ - տխո՛ւր հուշեր -
Ցորենի տեղ փուշ կը բուսնի...*

Նա Փարիզում ևս բազմիցս հանդես է եկել հայ թատերասերների առաջ, համագործակցել է Փարիզի «Հայ դրամատիկի» հետ, 1932-ին հիմնել է «Հայ ժողովրդական թատրոնը»:

1936-ին հայրենադարձվելով Արման Կոթիկյանն աշխատել է Գ. Սունդուկյանի անվան պետական թատրոնում, ուր խաղացել է բազմաթիվ դերեր Վ. Շեքսպիրի «Համլետ», «Օթելլո» և «Վինձորի զվարճասեր կանայք», Լուպե դը Վեգայի «Շունը դեզի վրա», Ա. Պուշկինի «Քարե հյուրը», Շիլլերի «Սեր և խարդավանք», Բոմարշեի «Ֆիգարոյի ամուսնությունը», Դ. Իբսենի «Նորա», Դ. Պարոնյանի «Պաղտասար աղբար» և «Մեծապատիվ մուրացկաններ», Վ. Փափազյանի «Ժայռ», Շիրվանզադեի «Նամուս», «Պատվի համար» և այլ ներկայացումներում:

Նա նկարահանվել է նաև կինոյում՝ «Դավիթ բեկ» (1944), «Անահիտ» (1947), «Հասցեատիրոջ որոնումները» (1955), «01-99» (1959), «Նվագախմբի տղաները» (1960), «Տժվժիկ» (1961), «Մսյո ժակ և ուրիշները» (1963), «Կարինե» (1967): Արման Կոթիկյանի յուրօրինակ տաղանդի և հյութեղ խաղի շնորհիվ էկրանից կամ բեմից արտասանած նրա խոսքերն ու արտահայտությունները դառնում էին թևավոր, նմանակվում և տարբեր առիթներով բազմիցս

կրկնվում ժողովրդի կողմից:

Ա. Կոթիկյանը նաև ֆրանսերենի հրաշալի գիտակ էր. շատերը տեղյակ չեն, որ հենց նրա թարգմանությամբ են հայ ընթերցողները կարդացել Գի դը Մոպասանի պատմվածքները (1950) և «Սիրելի բարեկամ» վեպը (1953), Էդմոն Ռոստանի «Սիրանո դը Բերժրակ» չափածո պիեսը (1951, Ավ. Իսահակյանի առաջաբանով), Լուի Արագոնի բանաստեղծությունները (1959), Էմիլ Զոլայի «Թերեզ Ռաքեն» վեպը (1964):

Նա թարգմանել է նաև Վիկտոր Հյուգոյի բանաստեղծությունները, որոնք ցարդ անտիպ են: Ի դեպ, Կոթիկյանը հայերենից ֆրանսերեն է թարգմանել Վահան Տերյանի և Ավետիք Իսահակյանի մի քանի բանաստեղծություններ, որոնք նույնպես անտիպ են: Ընդհանրապես Ա. Կոթիկյանը մեծ սեր ուներ պոեզիայի հանդեպ, այն նրա համար պատանեկան հրապուրանք չէր, նա բանաստեղծություններ է գրել ողջ կյանքի ընթացքում: 1946-ին հրատարակվել է նրա «Խութեցի Հովնան» պոեմը, մահվանից երեք տարի առաջ՝ 1965-ին, «Ակոսներում» չափածո ստեղծագործությունների ժողովածուն, որում տպագրված է նաև Մեծ եղեռնի օրերին նրան փրկած Զոյիին նվիրված «Վերհուշ» բանաստեղծությունը:

*Մի անհուն թախիծ տանջում է նորից,
Տանջում է անվերջ հոգիս ալեկոծ.
Ո՞վ էր բաց արավ վարագույրը գոց,
Երբ փակել էի այն ահեղ օրից...*

*Ինչո՞ւ հիշեցի Սև ծովը հանկարծ,
Մանուկ օրերի հիշատակն անեղծ,
Թե՞ մի այլ կարոտ սրտումըս զարթնեց...
Ինչո՞ւ հիշեցի Սև ծովը հանկարծ...*

*Եհշտ է, ծնվել եմ Պոնտոսի ափին
Ու երզն եմ լսել մի հույն աղջկա,
Երզն այն սիրային - «Թալասա մավրա»,
Բայց չէ՞ որ կորավ հուշատետրըս հին...*

*Օ՛, չքնաղ երագ, օ՛, կիզիչ ամառ,
Ի՞նչ ես շաղ տալիս կրրակըդ հոգուս.
Չէ՞ որ դժվար է լաց լինել անհույս
Արդեն ծերացած մի մարդու համար:*

*Ոչինչ չի կապում այլևս հիմա ինձ
Ծննդավայրիս հողին ու մարդուն,
Մինչդեռ այն տունը, ուր ծնվել ես դու,
Ասում են թանկ է ամենայն բանից:*

*Հիշում եմ սակայն մի դեմք սրբանուշ,
Մի քույր մտերիմ - անունը Զոյի -
Նրան նվիրած երգս այս կուզեի
Որ մնա հավետ, որպես անմեռ հուշ...*


Մեծանուն դերասանը նաև լուրջ գիտնական էր, այդ են վկայում դեռևս 1935 թ. Փարիզում, Ավետիք Իսահակյանի առաջաբանով նրա հրատարակած «Ֆերդուսի Թուսի եւ իր Շահնամէն» աշխատասիրությունը, ինչպես նաև ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հանդեսի 1962 թ. 7-րդ համարում տպագրված նրա «Դպրոցա-թատերական կյանքը Տրապիզոնում (1815-1915)» հոդվածը, որն այդ թեմային նվիրված եզակի ուսումնասիրություն է՝ գրված մի շարք աղբյուրների և իր հիշողությունների հիման վրա:

«Դրօշակի» ընթերցողներին ենք ներկայացնում Մեծ եղեռնի օրերին Արման Կոթիկյանի կատարած գրառումներից որոշ հատվածներ:

Պատմողն է Մարիամ Քսաբուլեան անուն 25 տարեկան օրհորդը, բնիկ Արզալիա գիւղացի.

«Յունիս 10-ին խումբ մը ժանտարմաներ գիւղ գալով, հայրս՝ Զատիկը, հօրեղբայրս՝ Մելքոնը և փոքր եղբայրս՝ Յարութիւնը ձերբակալելով քաղաք տարին: Հայրս երբ ձերբակալման պատճառը հարցուց, պատասխանեցին թէ՛ «Չենք գիտեր, բայց աննշան բան մը ըլլալու է»: Երկու օր վերջ իմացանք, որ նաւակի մը մէջ դրած ծովը նետեր են, հայրս և եղբայրներս ոչ մէկ կուսակցական գործերու չէին խառնուեր, հետևաբար անբացատրելի մնաց բոլորին համար անոնց ձերբակալման պարագան և լսողները ապշած մնացին:

Յունիս 18-ին արդէն բոլորիս հաւաքեցին և քաղաք իջեցուցին: Նոյն օրն իսկ ճամբայ ելանք: 200 հոգի կը լինէր մեր խումբը, բոլորը կին, աղջիկ և 10-12 տարեկան երախայ: Մինչև Այվասիլ կոչուած տեղը քալեցինք (քաղաքէն 1 ժամ հեռու): Այնտեղ երախաները, կիներն ու աղջիկները ջոկելով, առանձին խումբերու վերածեցին և նորէն առաջ քշեցին: Մեզմէ զատուողներուն երեսը անգամ մըն ալ չի տեսանք: Մեր խումբը մնաց 100 հոգի: Գուգ-խան հասնելով տեսայ, որ անթիւ կիներ ու երախաներ կան այնտեղ առաջունէ բերուած: Նոյն գիշերը այդ խանին մէջ մնացինք, իրար վրայ դիզուած գրեթէ: Դուռը պինդ փակեցին, առանց հաց ու ջուր տալու մեզ: Յաջորդ ցերեկը նոյն-



պէս: Գիշերը հասնելուն՝ խանէն դուրս հանեցին մեզ և քիչ մը վերը՝ Եազըլի-Տաշ կոչուած տաղը տարին, ուր քարաքօլ (պահականոց) հիմնած էին:

Այնտեղ մեզ բոլորիս մերկացուցին. ամենածայրահեղ զազանութիւնները ի գործ դրին մեր վրայ: Սիրանուշ անուն գեղեցիկ հարս մը, այդ մերկ վիճակի մէջ բռնի պարել տուին: Յետոյ խումբին չաւուշը՝ Շաքիր, կնոջ ուսերուն վրայ բարձրացաւ, և հրամայեց որ քիչ մըն ալ այդպէս պարէ: Ամօթէն իրար երես չէինք կրնար նայել և աչքերնիս կը փակէինք: Չէթաները սկսան մեզ մտրակել, որ բանանք աչքերնիս և դիտենք պարը:

Քիչ յետոյ սկսան զազաններու պէս վրանիս յարձակել և կարգով բռնաբարել ու լլկել մեզ:

Այդպէս տևեց 2-3 ժամ: Արդէն ամէնքս կիսամեռ վիճակի մատնուած էինք, մանաւանդ 12-13 տարեկան աղջիկները, որոնք զժուեր էին և չէին ըմբռներ թէ ի՞նչ կը կատարուի: Ոմանք շան պէս կոռնային, ոմանք զիլ կը խնդային և ճերմակ լորձուներ դուրս կուտային:

Կեսգիշերը անցած էր, երբ սկսան սուինահարել մեզ, սարսափելի ծիչ և վայնասուն սկսաւ, որ չեմ կարող բա-

ցատրել: Երեք սուրհմի հարուածներ ստացայ գլխէս, և մի չորրորդ ալ աջ ստիմքիս տակէն թեթև կերպով: Վրաս ուրիշ դիակներ ինկան և ես մնացի այդ դիակներու տակ: Չայները դադրեցան, ջարդը վերջացաւ, խաւար տիրեց: Զգացի ողջ ըլլալս և դիակներուն մէջէն դուրս գալով, կենդանիի պէս չորս ոտքի վրայ սկսայ քալել գիշերուան մէջ: Տորենի արտ մը հասնելով պառկեցայ. սաստիկ յոգնութիւնէս քունս տարաւ: Արթնցայ՝ որ արդէն ցերեկ է: Արտը բաւական հասած էր, հետևաբար կարող էի առանց տեսնուելու մէջը ծածկուած մնալ: Քանի մը յոյն կիներ փայտ հաւաքելու համար նոյն արտին շուրջերը եկեր էին, զիս տեսնելով, մօտեցան և շալակնին առնելով տարին իրենց տունը: Քանի մը օր հոն մնացի: Վերքերս ինձ շատ կը նեղէին: Բարեբաղդաբար նոյն գիւղին մէջ - որ կը կոչուէր Կոնակա - հանրածանօթ յոյն բժիշկ-քահանայ մը կար Պապա-Եանի անուն: Սա զիս իրեն մօտ առնելով ամէն օր վերքերս կը դարմանէր, իր տան մէջ կար նաև, նոյնպէս կոտորածի վայրէ փախչող, վիրաւոր կին մը Պալեաններէ: Ութ ամիս մեզի ամենայն անձնուիրութեամբ խնամեց և բուժեց վերքերնիս: Ռուս. բանակի մուտքով երևան ելանք»:

* * *

Պատմողն է՝ Պաղտասար Աւետեան, բնիկ Տէլիպալթա գիւղացի 25 տարեկան ուսուցիչ մը.

«1915 Յունիս 19-ին մեր գիւղի ամբողջ բնակչութիւնը խումբ մը ժանտարմաներու հսկողութեան ներքև հաւաքե-

լով Այվասիլ կոչուած խաները տարին: Նոյն օրը մեզի միացուցին նաև հետևեալ գիւղերու ժողովուրդը՝ Պարեան, Արդալիա, Մահմար, Ազրիտ, Կրօպի, Թօց, Անիֆա: Տղամարդ և կին, բոլորս կը լինէինք մօտ 500 հոգի: Երկու օր այս խաները մնացինք. երկրորդ օրուայ գիշերը սկսան կարգ մը մարդիկ դուրս հանել: Չաւուշին 15 օսմ. ոսկի կաշառք տալով այդ գիշեր ևս անցուցինք: Յաջորդ ցերեկին երախաները իրենց ծնողաց ծեռքէն խլելով քաղաք ճամբեցին՝ իսլամացնելու խօսքով, իսկ երկու օր յետոյ նորէն ետ վերադարձուցին, անօթի, ծարաւ և մերկ վիճակի մէջ. «Մայրի՛կ, մայրի՛կ» կանչելով կուլային, մինչդեռ իրենց մայրերուն երեսը անգամ չէին ցուցներ:

Այվասիլի մէջ մեզի պահեցին 19 օր: 20երորդ օրը ճամբայ ելանք ջոկ-ջոկ խումբերու բաժանուած, չորս կողմէն ժանդարմներով պաշարուած: Ծաղրին ու անարգանքին հաշիւը չիկար: Երեկոյեան հասանք Աթլի Քիլիսէ կոչուած խաները, այստեղ մեր խումբի երիտասարդ մասը ամբողջ կապեցին: Այդ կապուած վիճակի մէջ հասանք Զիղանա խանլար: Օրէ-օր ժանտարմաներու թիւը կը բազմապատկուէր: Զիղանայէն կանուխ մեկնելով Արտասա հասանք: Հոս խաները լեցուցին մեզ, այրերն ու կիները առանձին տեղեր: Ժանտարմաներու վատ վերաբերմունքը դէպի մեզ հետզհետէ կաւելնար: Խանին մէջ արդէն սկսան աչքի ինկնող հագուստեղէնները (ոտնաման, վերարկու ևն) յափշտակել, բռնի դրամ պահանջել, ապտակել և ծեծել:



24-երորդ օրը մեզ տարին Կիւմիւշխանէի տակը Տալտապան կոչուած վայրը, գիշեր մը մնալով, առտուն կանուխ դարձեալ ճամբայ ինկանք շրթայուած վիճակի մէջ և ոտաքոպիկ: Երբ Սօրտա կոչուած տեղը հասանք, իրար կապուած երկու հայ պատանիներ բերին մեր խումբին մէջ. ասոնք կիւմիւշխանեցի երկու եղբայրներ էին, որոնք կոտորածէն մի քանի օր առաջ փախչելով, յոյնի մը մօտ ծածկուած էին, բայց յետոյ յոյնը վախճալով դուրս ձգած էր: Այս պատանիները հաղորդեցին մեզ, որ ժանտարմաները իրարու մէջ խօսած էին այդ գիշեր մեզ ալ կոտորելու մասին: Վտանգը հետզհետէ զգալի կը դառնար և մենք ի զուր կը ճգնէինք ճար մը որոնելու: Նոյն օրը մեզ տարին Թէքթէ կոչուած վայրը, ճամբուն վրայ գտնուող խաներուն մէջ բանտարկեցին մեզ: Ժանտարմաներ արդէն պաշարեր էին խանին շուրջը: Մութը երբ կոխեց, սպայ մը սկսաւ այսպէս խօսիլ. «Պարոններ, ահաւասիկ ձեզ մինչև այստեղ անվտանգ բերինք, հակառակ ձեր շատ մը սխալ ենթադրութիւններուն, և վստահ եղէք, որ մինչև վերջն ալ նոյն ապահով կերպով պիտի տանինք: Դիմա ձեզմէ իւրաքանչիւրը իր մօտ ունեցած դրամները հարիւրապետ էֆէնտիին յանձնելէ վերջ պէտք է դուրս ելլէ, որովհետև այսուհետև ձեզ դրամ հարկաւոր չէ, կառավարութիւնը պիտի հոգայ ձեր ուտելիքը, ևն...»:

Ամէն բան մեզ համար հասկնալի եղաւ արդէն: Այսպէս սկսան մէյ-մէկ դուրս առնել, սկսելով չափահասներէն: Մնացինք միայն երիտասարդներս: Արդէն կը տեսնէինք, որ դուրս տարածներնին անմիջապէս կապելով խումբէն բաւական հեռու կը տանէին, հետևաբար՝ սպանելու:

Այս բոպէին ժանդարմաներէն մին դարձեալ ներս մտաւ, մարդ դուրս տանելուն իր գործողութիւնը շարունակելու համար: Ամէնքս միահամուռ ընդդիմացանք և ճրագը մարեցինք: Շփոթութիւն և աղմուկ յառաջացաւ: Այս մի-

ջոցին ես իսկոյն խանի դուռը խոյացայ, որպէսզի դուրս փախչիմ, բայց տեսայ, որ բակին մէջ մի քանի տեղէ շրթայ բռնած էին: Ներսը ձայները երթալով շատցան, շրթայ բռնող ժանդարմաները օգնութեան փութացին, և ես առիթ գտայ դուրս գալու: Փոքր քարապատէ մը ցորենի արտի մը մէջ ցատկեցի և սկսայ օձապտոյտ գնացքով վեր բարձրանալ:

Արտի գլուխը հագիւ ելեր էի, երբ ետևէս հասան 3 ընկերներ և՛ Մելքոն Տէլիպալթայեան, Խաչիկ Թօֆալեան և իր հօրաքրոջ որդին: Բլուրի մը վրայ հասեր էինք, երբ յանկարծ սարսափելի հրացանածգութիւններ լսուեցան: Կանչի աղաղակը աշխարհ կը թնդացներ: Կէս ժամ վերջ ձայները դադրեցան, կոտորածը վերջ էր գտած: Մենք սկսանք շարունակել մեր ճանապարհը: Լուսին գիշեր էր, մինչև լոյս քալեցինք ամայի ձորերէ և լեռներէ: Լոյսը բացած էր, երբ հասանք լերան մը գագաթը, հոն քարերու մէջ ծածկուեցանք, երկու օրուայ անօթութիւնը սկսաւ տանջել մեզ: Սկսանք արտերուն մէջէն ցորենի հասկեր հաւաքել և ծամել: Երկրորդ օրը հասանք յունական գիւղ մը՝ մտանք թաղերը, հաց մուրալու համար, բոլորիս գրպանը կար երկու թրքական մէծիտիէ: Գիւղին յոյն պահապանը մեզ հանդիպելով, ուզեց որ կառավարութեան մատնէ, աղաչանք, պաղատանք օգուտ չըրաւ: Մէծիտին մէկը իրեն տալով օձիքնիս ազատեցինք և հեռացանք:

Վեց օր, վեց գիշեր հացի երես չէի տեսած, անօթութեան մարմնոյս անդամները կը դողային: Քիրէխանէ յոյն



գիւղը իջնալով, Արկիրօփուլօ կոչուող յոյն ընտանիքին մօտ ծածկուած մնացի, ասոնք իմ հօրաքրոջ երկու աղջիկներն ալ ազատած էին:

Պատմողն է դէպքին ականատես տիկին Տիրուհի Յլէօրի, աղջիկը ուսուցիչ Նուրիխանի.

«1915 Յունիս 18-ին 60 հատ ժանտարմներ և գինուորականներ, միասին առած կարգ մը գիւղացիք, Թօց գիւղը եկան և բոլոր քաղաքացի ընտանիքներս, որ քաղաքի ռուս. պօմպարտըմանէն փախչելով ապաստանած էինք այս ամարանոցը, հաւաքելով փակեցին Պօղոս Մարիմեանի տան մէջ: Այդ ընտանիքներու մէջ կը գտնուէին ի միջի այլոց Միսիրեան, Մարիմեան, Նուրիխանեան, Նուրեան, Խանապէկեան և այլն գերդաստանները: Նաև Հայր Կարապետ Տէր-Սահակեան 32 տարեկան Մխիթարեան վարդապետը, որ ծանօթ է շատերու, որպէս գրագէտ-բանասէր:

Այս խումբը սուիներով շրջապատած առաջնորդեցին կէս ժամ հեռաւորութեամբ Անիֆա կոչուած գիւղին ձորերուն մէջ և սպանեցին: Դիակները առանց թաղուելու մնացին ձորին մէջ, և տասը ամիս վերջ, երբ ռուս. բանակը Տրապիզոն մուտք գործեց, լատինացի կղեր Բէռ Քարուչչի լուսանկարեց այդ կմախքներն ու գանկերը (նկարը ունիմ ձեռքիս տակ):

Սպանուած Հայր Կարապետ Տէր-Սահակեան ունեցած է շատ մը ձեռագիր աշխատութիւններ, որոնք թուրք կառավարութիւնն այրած և փճացուցած է:

Պատմողն է՝ Շանայի նախկին մուխթար Միթթատ Ակա և ճօշարա գիւղի բոլոր գիւղացիք, որոնք ականատես են եղած.

«Յունիս 17-ին Պաթումցի հանրածանօթ իսլամ-վրացի Ասլան պէյ, որ թուրք բանակի մէջ սպայ էր դարձած, իր հրամանատարութեան ներքև խումբ մը ժանտարմներով և չէթաներով ճօշարա գիւղը բարձրացաւ ժողովուրդը հաւաքելու:

Ասլան պէյ և իր մարդիկը սկսան իրենց վայրագութիւններուն, երբ ժողովուրդին մեծ մասը դեռ կը մնար գիւղին մէջ, 20-30-ի չափ տղամարդ, կին և երեխայ սպանելով չոր

հորի մը մէջ նետեցին, որոնց ոսկորները դեռ կը մնան նոյն հորին մէջ: Տիվրիկ Մեմէտ, Հաճի Ալի Հաֆըզ գատէ Էօմէր և Հագգը եղբայրները (Իթթիհատի շէֆեր և չէթա) Պէքեար օղլի Ալիի որդին Էօմէրը աննկարագրելի ոճիրներ գործած են Ասլան պէյի հետ միացած: Կիներու և աղջիկներու ճիւտերը չուաններ ձգելով երկու կողմէ քաշքշած են ծիծաղելով ու ծաղրելով, և այդ կերպ խեղդած...»:

Պատմողն է՝ նախապէս Պաթում բնակող, իսկ հիմա գործող բանակի մէջ աֆիցէր Եօրտանով, որ լսած է յոյն և թուրք շատ մը գիւղացիներէ: Իրեն պատահեցայ Կիւմիւշխանէի մէջ, Բ. Տիրատուրեանի հետ միասին.

«Մավրանկէլի մէջ (Կիւմիւշխանէի շրջան) 1500 հոգու չափ տրապիզոնցի առաջաւոր ընտանիքներէն տղամարդ, կին և երեխայ, գազանային բարբարոսութեամբ մը սպանած են:

Իրենք՝ գիւղացիք, դիմած են խումբը տանող գինուորական մեծին և խնդրած են, որպէսզի ատոնք սպանելու սրբազան գործն ալ իրենց վիճակուի: Նախ շատ լաւ կողոպտելէ ետք, կիները իրենք փորած են փոսեր մրջիւնային աշխատանքով, և ոմանք ողջ, ոմանք կիսամեռ վիճակի մէջ նետած են այդ փոսերու մէջ:

Չոհերը այնքան շատ են եղած, որ միջոց չէ մնացած հողով ծածկելու ամբողջութեամբ, այնպէս որ ոմանց գլուխը, ոմանց թևը, ոմանց փորը հողէն դուրս է մնացած:

Երեք օր ու գիշեր, այդ ամբողջ գետինը կը հևար ու կաղմկէր խուլ մղկտոցներով: Հողը մէկ վեր կը բարձրանար, ու մէկ ցած կիջնէր, կիսամեռներու և հոգեվարքներու շնչառութենէն:

Երբէք պիտի չի հաւատայի այս առասպելին, եթէ աչքով տեսնողներ վկայութիւններ չընէին: Ես դեռ երէկ Մավրանկէլ գիւղն էի:

Իսկ երբ ռուս բանակը մօտեցած է նոյն գիւղին, փոսերը կրկին բանալով ոսկորները հանած, այրած և ապա փախած են թուրքերը՝ ըսելով, որ կեաւուրներուն ոսկորներն ալ թող չի մնան...

Վերջացնելով պ. Եօրտանով խիստ յուզուեցաւ և դառնօրէն լաց եղաւ»:

ՓՆՏՐՏՈՒՔ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

**Որոշ դատողություններ հավաքական հիշողության,
կարծրատիպերի – փոփոխության շուրջ**

Սյուզան Խարդալյան

Մենք ականատես ենք համաշխարհային հիշողության աճին: Վերջին քսանհինգ տարիներին յուրաքանչյուր երկիր, յուրաքանչյուր սոցիալական, էթնիկական կամ ընտանեկան խումբ խոր փոփոխություն է կրել անցյալի ավանդական հարաբերությունների մեջ:

Այս փոփոխությունը տարբեր ձևեր է ընդունել. պատմության պաշտոնական մեկնակերպերի (version) քննադատություն և պատմության՝ նախկինում չընդունված շրջանների վերականգնում. աճող հետաքրքրություն «արմատների» և ծագումնաբանական հետազոտությունների հանդեպ. ամեն տեսակ հիշատակելի իրադարձություններ և նոր թանգարաններ. փակ արխիվները բացելու և դրանք հասարակության քննարկման առարկա դարձնելու նորոգված զգացականություն և աճող կապվածություն ժառանգության հանդեպ:

Այս միտումները միասին մի տեսակ հիշողության կարևորության ալիք են բարձրացնում, ինչը կարծես վերացել էր աշխարհում, ամենուրեք ստեղծելով ամուր կապեր՝ անցյալի հանդեպ հարգանքի (իրական կամ թվացյալ) և պատկանելության զգացման, հավաքական գիտակցության և անհատական ինքնագիտակցության, հիշողության և ինքնության միջև:

Հայ ազգն այսօր և՛ Հայաստանում, և՛ սփյուռքում հիշողությանը ուղղված մարտահրավեր ունի դիմակայելու: Քննարկումը շատ կարևոր է, քանի որ մենք տրոհված ենք

հիշողության և պատմության միջև: Ես կսկսեմ հավաքական հիշողության, անձնական հիշողության հարցից և կանցնեմ անհատական հիշողությանը: Մեզ համար այսօրվա մարտահրավերը իրական, անհատական և պատմական հիշողությունները տարբերակելու և բաժանելու խընդիրն է:


Ես փորձելու եմ ապացուցել, որ հիշողությունը այլևս պատմության ծառան չէ, այլևս սոսկ գործիք չէ. ընդհակառակը, համահավասար է պատմությանը:

Հիշողությունը, փաստորեն, դարձել է մի առանձին կարևոր գոյացում, հենց իրեն՝ պատմությանը հավասար, բայց և «ժխտող» մրցակից:

ՆԱԽԱԲԱՆ

Հիշողությունը որպես կենդանի էություն

«Հիշողությունը կյանք է... Հիշողությունը լինում է հարատև՝ բնաշրջման մեջ... Պատմությունը, մյուս կողմից, վերականգնումն է, միշտ խնդրահարույց և անկատար: Հիշողությունը մշտապես այժմեական երևույթ է, պատմությունը՝ անցյալի նկարագրություն... Հիշողությունը, որքան էլ որ հուզիչ ու հմայիչ լինի, միայն իրեն հարմար փաստերն է մատուցում... Պատմությունը... վերլուծության ու քննադատության է կոչում... Հիշողությունը բազմաբնույթ է, բայց և յուրահատուկ. հավաքական, բազմակի, բայց և անհատական: Պատմությունը, մյուս կողմից,



Պիեռ Նորա

պատկանում է բոլորին և ոչ մեկին, այստեղից էլ նրա պահանջը համաշխարհային հեղինակավոր աղբյուրներից... Հիշողությունը բացարձակ է, մինչդեռ պատմությունը կարող է ներկայացնել միայն կապը»:

Պիեռ Նորայի «Հիշողության և պատմության միջև» գրքից վերոհիշյալ մեջբերման հիմնական իմաստը, իհարկե, «հիշողությունն» է, և նրա առաջարկած տարբերակումը «իրական» հիշողության և պատմական հիշողության միջև: Վերոհիշյալ մեջբերման մեջ պատմության Նորայի բնութագրումը կարող է ընդունելի լինել բոլոր պատմաբանների համար. բայց ոչ հիշողության մասով: Սա, անշուշտ նույն հիշողությունը չէ, ինչ սովորաբար վկայակոչել են պատմաբանները՝ Թուկիդիդեսից սկսած: Պատմաբանների համար հիշողությունը մարդկային ձիրք է, անձնական բայց և սխալական, այնուամենայնիվ, անցյալի վերականգնման անհրաժեշտ միջոց: Հիշողության անվստահելիության պատճառով է, որ պատմաբաններն անհրաժեշտություն են զգում դիմելու քննական վերլուծության և ստուգումների մեթոդներին, որպեսզի հիմնավորեն այն որպես վկայության աղբյուր: Պատմաբանները, սովորաբար մեծ կարևորություն չեն տալիս հիշողությանը:

Պիեռ Նորայի հիմնական սահմանումն այն է, որ իրականում գոյություն ունի մեկ բան, այն է՝ կենդանի, վավերական հիշողությունը, որն ամբողջովին խեղաթյուրվել է

պատմաբանների կողմից՝ իրենց քննական մեթոդներով:

Հիշողության հանդեպ հավատը, որպես իրական գոյություն ունեցող մի բանի, պարզվում է, բոլոր մեմորիոլոգիստների ընդգծված ենթադրությունն է: Նորայի համար հիշողությունը զուգորդվում է «փորձառության մնացորդների, որ դեռ ապրում են ավանդույթի ջերմության, սովորույթի լռության, նախնիներին ընդօրինակելու մեջ, հավաքաբար հիշվող արժեքների, չբարձրաձայնվող ավանդույթների միջով անցնող հմտությունների հետ»: Այլ խոսքով՝ դա հավաքական հիշողությունն է:

Բոլոր «հավաքական» եզրույթները ինքնին խնդրահարույց են, և «հավաքական հիշողություն»-ը բացառություն չի կազմում, որովհետև հիշողություններն այժմեականացվում են միայն անհատական մակարդակով, այսինքն նրանք կարող են իրագործվել միայն անհատների կողմից: Իհարկե, ցանկացած գործողություն, ոչ միայն մտավոր, բացարձակապես և ամբողջովին անձնական է: Բայց մի՞թե հնարավոր է խոսել իր սեփական կամքով ու սեփական հնարավորությամբ որևէ խմբի՝ որպես ինչ-որ անբաժանելի էության մասին: Եթե այո, ուրեմն մենք «կոնկրետ ընդհանրացման» սխալն ենք գործում:

Պատմաբանները հակված կլինեն վիճելու, որ «հավաքական հիշողության» կիրառումը կարող է արդարացվել միայն փոխաբերական իմաստով, և հենց այդպես էլ հնում պատմաբաններն արել են, որպես ինչ-որ բանի ընդհանուր ծածկանուն, ինչը ենթադրաբար գտնվում է առասպելների, ավանդությունների, սովորությունների, պաշտամունքների ետևում, և որոնք բոլորը ներկայացնում են հանրության, ցեղի, ազգի «ոգին», «հոգեբանությունը»:

Մի ամբողջ գրականություն կա այս մասին: «Հասարակություն», «ցեղ», «ազգ» տերմինների նկատմամբ ունեցած հարգանքով հանդերձ, պատմաբանները ենթադրում են, որ այս եզրույթները չունեն որևէ իրական և կենդանի հիմք, որպեսզի կարողանան գոյություն ունենալ այսպիսի խմբի մեջ ընդգրկված անդամներից առանձին կամ անկախ: «Ազգ», «ցեղ», «հասարակություն». սրանք



Մորիս Յուրբվախս

համընդհանուր անուններ են, որոնց միակ հիմքը իրենց իրական անդամների մեջ է, որոնք ունեն ընդհանուր առասպելներ, սովորույթներ, հավատք և այլն:

Սա այն միակ գիտակցությունն է, որի մեջ որևէ ազգություն կամ հասարակություն կարող է, ինչպես ասում են, գոյատևել, բայց ոչ երբեք որպես առանձին, որոշակի, եզակի օրգանիզմ՝ սեփական մտքով, կամքով կամ հիշողությամբ:

Այսպիսով անհատի և հասարակության, անձնական և հավաքական հիշողության միջև հարաբերությունը առաջացնում է դասական հարցադրումը. անհատն է ավելի բարձր հասարակությունից, թե՞ հակառակը:

Նորան ընդունում է վերջին տեսակետը, բայց և համաձայնում է, որ վերջնական վերլուծության մեջ անհատի և միմիայն անհատի վրա է ծանրանում հիշողության հարկադրանքը: Նորան ընդունում և վճռականորեն պաշտպանում է այն կոնցեպցիան, ըստ որի անհատական հիշողությունները իրականում առաջանում և ձևավորվում են սոցիալական ենթատեքստում: Նա անդրադառնում է ֆրանսիացի սոցիոլոգ Մորիս Յուրբվախսին, որի աշխատասիրությունը «հիշողության սոցիալական կառուցվածքի» մասին, մեծ կամ փոքր չափով, տեսական խարիսխ է հանդիսանում բոլոր մեմորիոլոգիստների համար:

Համաձայն Յուրբվախսի, չկա այնպիսի մի բան, ինչպիսին է «անհատական հիշողությունը»: Միակ «իսկական հիշողությունը» «հավաքական հիշողությունն» է: Նրա «հավաքական հիշողությունը» կազմվել է, կարծես, տարբեր աղբյուրներից հավաքած տարաբնույթ աղոտ տպավորություններից (պատկերներից) և վերածվել լավ կառուց-

ված ամուր հիշողության: «Անհատը մտաբերում է հուշեր՝ վստահելով (հիմնվելով) հիշողության սոցիալական կառուցվածքներին»: Օրինակ, ինչպիսի «անհատական պատկերացում» էլ ունենա մեկը որևէ ընտանիքում որոշակի անձի կամ իրադարձության մասին, չի կարող անջատվել ընդհանուր գաղափարներից, տիպերից, մնուշներից, որ պարունակում է «ընտանեկան հիշողությունը», որին Յուրբվախսը վերաբերվում է որպես ընտանիքի «ավանդական զենքի». քանի որ «գոյություն ունեն մտածելակերպի սովորույթներ և եղանակներ յուրաքանչյուր առանձին ընտանիքում, որոնք հավասարապես հարկադրում են - և նույնիսկ ուժով - իրենց կարծիքներն ու զգացմունքները ընտանիքի անդամներին»:

Այսպիսով, Յուրբվախսի մեզ թողած իսկական ժառանգությունն այն գաղափարն է, ըստ որի կոնցեպտուալիզացիան հիմնավորապես սոցիալական գործառույթ է, և որպես այդպիսին ծնում է մանիպուլյացիայի ուժ, ինչը որևէ հասարակություն ի վիճակի է փորձարկել անհատների մտքերի կամ հիշողության վրա:

Եվ եթե Յուրբվախսի այս մեկնությունը ճիշտ է, ապա մեզ համար հասարակությունը մի առանձնահատուկ դաշտ է, ուր անհատները կարող են վերստանալ կամ վերագտնել իրենց հիշողությունները:

Ինչևէ, այս կետը երկու տարբեր մեկնաբանությունների տեղիք է տալիս: Նախ, կոնցեպտուալիզացիայի գործողությունը դեռ տեղի է ունենում անհատների մտքում՝ «հասարակության» ներսում, որտեղ նրանք անցնում են սոցիալիզացիայի պրոցեսների միջով, փոխանակում տեսակետներ և գաղափարներ և կազմում ընդհանուր պատկերացումներ (որոնք հետագայում կարող են համարվել «հավաքական»): Համաձայն այս նկարագրության, հասարակությունը հակադիր գաղափարների և մտքերի, իսկ իրականում որոշակի անհատների կամ անհատների խմբի միջև մրցության ասպարեզ է, ուր գործի է դրվում բավականին հզոր և հավակնոտ սոցիալական շարժում: Պետք է նշել, որ այս մեկնաբանության ամբողջ ընթացքում մենք առնչվում ենք որոշակի անհատների հետ, որոնք կամ

իրենց անունից են խոսում, կամ էլ «հասարակության» մինչդեռ «հասարակությունը» այս դեպքում ավելին չէ, քան այն, ինչ անհատներն են վերագրում նրան:

Համաձայն երկրորդ մեկնաբանության, հասարակությունն այլևս իր անհատների վերագրման, ներդրման հանրագումարը չէ. ավելի շուտ մի իրավիճակ է, որը չի կարող վերածվել առանձին բաղադրիչների: «Հավաքական հիշողության» սոսկ գոյությունը, ինչը չի կարելի ասել, թե կազմված է անհատական հուշերից, հաստատում է այն փաստը, որ հասարակությունը պարզ կառուցվածք չէ, այլ իրական համարվող մի միություն: Հասարակությունը հայտնում է իր իրական լինելը հաստատությունների, ընդհանուր կանոնների, սովորույթների, արարողությունների և այլնի միջոցով, այսինքն սոցիալական արտադրանքի միջոցով: Սա Հոլբրախսի կոնցեպցիայի ավելի մեղմ մեկնաբանությունը կարող է լինել:

Համաձայն Հոլբրախսի, հասարակության ամենաբնորոշ գիծը նրա «բանականությունն» է, այսինքն այն փաստը, որ անհատները միայն սոցիալական կառուցվածքի ներսում կարող են ընդհանուր պատկերացում կազմել և իրազեկված լինել: Կարծես թե բավական հստակորեն ասվում է, որ ավելի շուտ հասարակությունը, քան թե անհատներն են զբաղվում «բանականությամբ», կամ, ինչպես կասեր Հոլբրախսը, անհատները միայն հասարակության ներսում կարող են փորձարկել իրենց բանականությունը: Այնուամենայնիվ, այս ընդունակության շնորհիվ է, որ, ըստ Հոլբրախսի, հասարակությունը «միջամտում» և ձևավորում է անհատի հիշողությունը՝ համաձայն իր «ռացիոնալ կարիքների»: Հասարակությունը, այսպիսով, ունակ է վերակառուցելու իր անցյալը ցանկացած պահի: Այս գործընթացում անցյալը ավելի շուտ դառնում է հասարակության կարիքների, քան թե երբևէ տեղի ունեցած իրական իրադարձությունների անդրադարձ:

Այժմ մենք հասնում ենք մի շատ հետաքրքիր կետի, ինչը ծանրակշիռ դերակատարում ունի պատմություն գրելու համար:

Կարելի՞ է ասել, որ Պատմությունը «անցյալի իրա-

դարձությունների ընդհանուր եզրակացություններն ու դասերը» չէ, այլ ավելի շուտ հասարակության կողմից ստեղծված մի արտադրանք, որն ընդհանրապես, գտնում է իր իմաստը պատմության մեջ՝ համապատասխան իր անկայուն կարիքների: Պատմությունը, այսպիսով, դառնում է գործիք՝ հասարակության գաղափարական և բարոյական կարիքների համար:

Երբ մենք նայում ենք, թե ինչպես է այսօր հայ ազգը պատասխաններ փնտրում, տեսնում ենք, որ պատմությունը խոնվել է այնպես, ինչպես այն առանձնահատուկ դաշտը, որտեղ մենք, որպես հավաքականություն, փորձում ենք պատասխաններ գտնել:

Ինչպես Հայաստանը, այնպես էլ սփյուռքը խրվել են մոտիկ անցյալի մեջ և փորձում են ձևակերպել վիճելի այն հարցերը, ինչպիսիք են ցեղասպանությունը և 1915-23 թթ. դեպքերը՝ դրանում ներառված քաղաքական, անվտանգության և սոցիալական չափումներով: Շատ է խոսվում պատմաբանների և քաղաքագետների հավաքական հիշողության մասին:

Հետաքրքիր է, որ նույն միտումն է նկատվում և անհատական դաշտում, երբ հայերը, իբրև մասնավոր անձինք ամբողջ աշխարհում, պատասխանների որոնումների մեջ են և փորփրում են իրենց հավաքական հիշողությունը:

Ուսուցիչներից մինչև կինոարտադրողները, հիմնականում սովորական մարդիկ, կլանված են ծնողների և նախնիների անցյալի հուշերի մեջ: Ի՞նչ հավաքական հիշողության ենք մենք դիմում: Ինչո՞ւ այժմ: Արդյո՞ք այս փնտրտուքն իրականության մեջ արտացոլում է նոր հայկական ազգային և անդրազգային հասարակության անկայուն պահանջները: Հայոց ցեղասպանություն բառերը google-ով որոնելու արդյունքում ստացվում է մեկ միլիոն անդրադարձ: Ի՞նչ ենք մենք բոլորս փնտրում: Ի՞նչ ենք սպասում գտնել: Ո՞ր պատասխաններն են բավարար: Արդյո՞ք այս հոգեմաշ փնտրտուքը արտացոլում է անհատների՝ որպես հայ նոր հասարակության հաստատում անդամի անձնական անկայուն պահանջները: Ո՞րն է անձնական հիշողության դերը:

**Անձնականը ընդդեմ
հավաքական հիշողության**

Եկեք դիտարկենք անձնական և հավաքական հիշողության միջև եղած լարվածությունը: Ոչ բոլորը, ովքեր ընդունել և մեծահոգաբար օգտագործում են «հավաքական հիշողություն»-ը, որսացել են եզրույթների ետևում ընկած տեսությունը: Շատերը մոտենում են բնագոյալի վերապահումով, գիտակցելով անձնական հիշողության գործառույթը:

Պիեռ Նորան խոսում է պատմության մասին որպես «հիշողության հանդեպ մշտական կասկածամտության»: Այնպես որ անձնական հիշողության և պատմության միջև լարվածությունը եղել և մնում է: Այդ կասկածամտությունը դրսևորվում է սուր անհամաձայնության ձևով. ներքին հայկական անհամաձայնություն և արտաքին հայ-թուրքական անհամաձայնություն:

Խելամիտ պատմաբանի համար հայկական կոնտեքստում ցեղասպանությունը մի դրվագ է, իսկ 1908-13 թթ. հավաքական հիշողությունը՝ մի առանձնահատուկ դաշտ, որտեղ մենք վերանայում ենք անցյալը, դասեր քաղում, զարգացնում ռազմավարական մտածողություն, խուսափում սխալներից: Սա հսկայական նշանակություն ունի: Ես չեմ վիճում դրա դեմ: Բայց այս դաշտի «տեղադրումը», սովորաբար, օգտագործվել է ընտրողաբար: Տասնամյակներ շարունակ մենք ականատես ենք եղել հիշողության, ես կասեի, մենհիշխանության: Մենք ունեինք պետական պատմություն (խորհրդային); որը սովորեցնում էր հայերին ինչը հիշել և ինչը մոռանալ:

Մյուս կողմից էլ սփյուռքն ուներ մեկ այլ մենհիշխանություն, որն ավելի հատվածային էր, քանի որ հայկական ծագմամբ պատմաբանները, աշխատելով տարբեր երկրներում, ստիպված էին արտահայտել օտար երկրների մոտեցումները, աշխարհայացքը և այլն, երբ վերլուծում էին հայկական հավաքական հիշողությունը: Միևնույն ժամանակ, համարյա նույն կերպ Թուրքիան էր մշակում պատ-


մության իր սեփական մենհիշխանությունը: Ջարմանալի չէ, որ պատմության այս երկու տարբերակները հակադրվում և հերքում են միմյանց: Թուրք պատմաբանը նույնպես, վերանայելով իր երկրի անցյալը, համապատասխանաբար, վերականգնում է իր հավաքական հիշողությունը: Եվ բնական է, որ առաջին պլան է մղվում արժանահավատության խնդիրը: Ինչի՞ հիման վրա են պատմաբանների մեկնաբանությունները դիտարկվում ավելի ստույգ և արժանահավատ:

Տարընթերցման մի կարևոր արտահայտությունը (aspect) բանավոր պատմության զարգացումն է: Սփյուռքահայության հավաքական հիշողությունը, որպես այդպիսին, զարգացել է բոլորովին այլ ուղղությամբ: Բանավոր հիշողությունը ծաղկել է, հակառակ ընդդիմության: Այսօր դեռևս նկատելի է գոյություն ունեցող անհամաձայնությունը: Պետք է ասել, որ հետխորհրդային հայկական իշխանությունները շատ են աշխատել պահպանելու այդ անհամաձայնությունը: Հրաժարվելով ընդունել և միացնել սփյուռքահայության հավաքական հիշողությունը նրա բուն հիշողության մեջ, մենք հասել ենք մի վիճակի, երբ պատմության տեղադրումը առանձնահատուկ դաշտում այլևս չափեկան մասնակցություն չունի:

Ջարմանալի չէ, որ մինչև վերջերս Հայոց ցեղասպանության ականատեսների պատմությունները և վերապրողների անձնական հիշողությունները հին երկրի, Արևմտյան Հայաստանի մասին համարվում էին սարքած, առասպել կամ երևակայություն: Բանավոր պատմությունը վստահության արժանի չէր, լուրջ չէր, բայց և այնպես, հետևությունը, հիշողության հիշատակությունը որքան էլ առասպելական, այդքան էլ իրողություն են:

Մասնագետ պատմաբանները միանում են քաղաքագետներին, սոցիալական էլիտային, այսինքն հիշողության գործակալներին, որոնք գծում են անցյալի պատկերը՝ ներկայի կարիքներին ու տագնապներին համապատասխան, և դրանից բացի ներգծում այդ պատկերը պատմության հետազոտման մեջ: Հետևաբար, ակադեմիական

պատմագրությունը պարզապես ձևացնում է, թե հենվում է անաչառ հետազոտության վրա. այնինչ պատմաբանները, փաստորեն, ավելի շուտ վերածնունդ են կոնկրետ պատմական հիշողություն, քան վերանայում անցյալը: Սա շատ ակնհայտ է, երբ մենք նայում ենք հայոց ցեղասպանությանը, հայ-թուրքական հարաբերությունների հետազոտման պատկերին և 1890-1923 թթ. Օսմանյան կայսրությունում եղած դեպքերին: Ահա այստեղ էլ մենք ականատես ենք լինում հայ ազգի



Ֆրենկ Շտերն

«հավաքական տառապանքի» հանդեպ հայկական և թուրքական տեսակետների, հակադիր հիշողությունների հակամարտությանը: Թուրքերի համար ցեղասպանությունը անցողիկ երևույթ է: Մոլորություն Առաջին համաշխարհային պատերազմի կոնտեքստում: Մի անմեղ պատմություն:

Հրեական հոլոքոստի պատմագրության հետ համեմատությունը շատ ուսուցողական կլիներ: Ֆրենկ Շտերնը իր «Հակամարտող հիշողություններ. հրեաների և գերմանացիների հետպատերազմյան վերապրումն ու օտարումը» հոդվածում դիտարկում է հրեաների հավաքական տառապանքը և նկատում, որ շատ գերմանացիների համար հոլոքոստը անցողիկ երևույթ է, ժամանակավոր իրականություն, որի մասին ընդամենը հուշեր են մնացել (և նույնիսկ սրանք ծածկված են իրադարձությունների ոճավորված պատմություններով, որոնք նկարագրվում են հուզական, զգացական հեռավորությունից):

1945-ից սկսած հրեաների հանդեպ գերմանական քաղաքական մշակույթի վերաբերմունքը Շտերնը վկայակոչում է որպես «հակամարտող հիշողությունների» քննախոսություն. մի կողմից՝ հոլոքոստի մասին հրեաների «հավաքական հիշողությունը», մյուս կողմից՝ գերմանացիների «հավաքական հիշողությունը» մի «անմեղ պատմության մասին», այսինքն հոլոքոստի համար հավաքական

պատասխանատվության ժխտումը: «Գերմանական պատմական ինքնագիտակցության» մեջ համագոյակցող հակադիր վերաբերմունքների - ինչպես հակասեմիտական, այնպես էլ պրոսեմիտական - Շտերնի գնահատականը եզրակացնում է, որ չկա հոլոքոստի հավաքական արևմտյան հիշողություն: Մասնավորապես, գերմանա-հրեական կոնտեքստում գոյություն ունեն միայն «հակառակ և նույնիսկ հակադիր հիշողություններ»: Արդյունքում Աուշվիցը երբեք նույն նշանակությունը չի ունենա գերմանացիների համար, ինչ ունե-

ցել է հրեաների համար, քանի որ թվում է, թե գոյություն ունի «հավաքական հիշողության գերմանական վճռական վերակարգավորում»:

Համանման վիճակ է՝ կապված հայոց ցեղասպանության հետ: Թուրք և հայ ժողովուրդները չունեն մի ընդհանուր, համատեղ հավաքական հիշողություն հայոց ցեղասպանության վերաբերյալ: Դեր էլ Ջորի այրող ավազները երբեք նույն նշանակությունը չեն ունենա թուրքերի համար, ինչ նշանակություն ունեն հայերի համար, քանի որ թվում է, թե կա հավաքական հիշողության թուրքական վճռական վերակարգավորում:

Շտերնի վերլուծության մեջ ամենաակնհայտ դժվարությունը «հավաքական հիշողություն» հասկացության օգտագործումն է, ինչն այս դեպքում պահանջում է հոլոքոստի «բարոյապես ճիշտ» պատկերացում համայն մարդկության համար: Ելնելով այսպիսի ընդհանրացված տեսակետից ոչ ոք չի կարող խոսել ոչ «հավաքական հիշողության գերմանական վճռական վերակարգավորման», ոչ էլ՝ «հավաքական հիշողության հրեական վերակարգավորման» մասին: Այլապես, որևէ մեկի տված հարցին ի պատասխան կհետևի, թե ում «հավաքական հիշողությունն» է ճիշտը:


Բայց և այնպես, ի՞նչ է հավաքական հիշողությունը:

Սկսենք նրանից, որ «հավաքական հիշողությունը» պետք է լինի հիշողության մի տեսակ: Միանգամայն պարզ պետք է լինի, որ «հիշողության» ցանկացած սահմանում պիտի պատվի ինչ-որ անցած փորձության տպավորությունը վերականգնելու կարողության կամ մեր մտքում դրոշմված ինչ-որ մի անցած իրադարձության շուրջ: Ցանկացած դեպքում հիշողությունը մարդու անձնական ընդունակությունն է, որը հարաբերվում է անձնական իրական փորձառության հետ:

Եկեք նորից ստուգենք Յուլբախսով: Ըստ նրա՝ անհատներն ի վիճակի չեն հիշողության մեջ պահելու անձնական տպավորությունները, քանի դեռ դրանք չեն ստացել ընդհանուր ձևեր և չեն պահպանվում սոցիալական այն խմբի կողմից, որին պատկանում է տվյալ անհատը: Հիշողությունները երբեք չեն իրականանում իբրև որոշ չնախատեսված դեպքերի վավերական անդրադարձներ, այլ անակնկալի են գալիս ամբողջական խմբով պահպանվող որոշ պատրաստի կարծատիպերից:

Յուլբախսի խորհրդածությունները ենթադրում են, որ բոլոր ակնհայտորեն «տարերային» զգացմունքները վերջ ի վերջո «կարգավորվում են ընտանիք կազմելու ընթացքում», այսինքն՝ ինչպիսի հիշողություններ էլ ունենանք մեր ընտանիքի անդամների և դեպքերի հետ կապված, դրանք այլևս բաղկացած չեն հատուկ անձերի և իրերի հետ կապված անհատական պատկերացումներից: Դրանք, ավելի շուտ, «ընտանիքի մտավոր սահմանը որոշող գաղափարների և ավանդական դատողությունների» արտահայտություններ են: Այս երևույթը լուսաբանվում է ֆրանսիացի հեղինակ Շատոբրիանի գործերից վերցրած օրինակով: Շատոբրիանի նկարագրած տեսարանը, ըստ Յուլբախսի, չի հաղորդում հեղինակի անցյալի անձնական փորձը. ավելի շուտ ընդհանրացնում է «կյանքի մի տեսակի գաղափար»:

Թեև Յուլբախսը կարող է ճիշտ լինել՝ ենթադրելով, թե Շատոբրիանը կարող էր օգնության դիմել կյանքի որոշակի տիպական օրինակների, սակայն դա ոչ մի կերպ չի



Շատոբրիան

նշանակում, որ Շատոբրիանը չուներ իսկական անձնական հիշողություններ իր ընտանիքի անդամների մասին:



Լեւ Տիւստոյ

Ասվածը, պարզապես, ապացուցում է, որ որպես հեղինակ նա գերադասում է օգտագործել որոշակի կարծրատիպեր, որոնք իր ընթերցողների մտքերում կարող են որոշակի «կյանքի տեսակ ձևավորել»:

Այս լարվածությունը անձնական վավերական հիշողության և դրա կարծրատիպային գեղարվեստական մեկնաբանության միջև, սովորական մի լարվածություն է նաև ֆիլմերում: Հավանաբար, իբրև ֆիլմ ստեղծող, իմ սեփական նկարագրությունները, իմ նախնիների հուշերի մասին հիշողությունը պատկանում են հենց այս կարգին: Թեև երեխա ժամանակ առևանգված, լլկված և կտտանքի ենթարկված իմ տատիկի պատմությունը ցեղասպանության ժամանակ հանդիպած հազարավոր այլ աղջիկների պատմությունն է:

Գրականության մեջ կարծրատիպային և անձնական հիշողության միջև այս լարվածությունը հրաշալի ձևով փոխադրված է Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» վեպի այն գլխում, որտեղ երիտասարդ Ռոստովին խնդրում են վերհիշել իր հերոսական արարքները Շոեն Գրաբենի ճակատամարտում: Այստեղ մենք բախվում ենք մի հետաքրքիր հակապատկերի՝ Ռոստովի իսկական անձնական հիշողության և այն կարծրատիպային տարբերակի միջև, որ նա համաձայնում է պատմել իր ունկնդիրներին:

Ահա թե ինչպես պետք է փորձել հասկանալ ցեղասպանությունը վերապրածների պատմությունները: Վերապրողները հենց սկսում են պատմել, վստահաբար խոսում են իրենց ցույց տված հերոսական դիմադրության մասին: Նորից անդրադառնանք իմ տատիկին՝ հայոց ցեղասպանությունը վերապրած Խաթուն Արմությանին: Նա հերոսացման խոսքերով է վերհիշում, թե ինչպես է իր մայրը կյանքի գնով փրկել երկու դուստրերին: Հասարակությունը այսպիսի արարք է սպասում մայրերից: Բայց խորքային պատմությունը բոլորովին այլ է. դա պարտության, առևան-

գության և լքվածության պատմություն է: Նրա մայրն անկարող էր ապահովել իր իմացած պաշտպանությունը: Իրականությունը, դաժան իրականությունն այն է, որ դուստեր կյանքը փրկելու նրա մոր գիտցած միակ ճանապարհը՝ իր կյանքը թշնամուն հանձնելն էր:

Լիովին ակնհայտ է, որ կարծրատիպային այս տարբերակն ավելի քան մոտ է Հոլբրախսի առաջարկած «հավաքական հիշողությանը», և սակայն, արդյո՞ք դա հավաքական հիշողություն է: Անշուշտ, սա շատ շփոթեցնող տերմին է: Տոլստոյի հերոսը, երիտասարդ Ռոստովը, իր ունկնդիրներին գոհացնելու համար, անձնական փորձության մասին ճշմարիտ հիշողությունները փոխարինում է ճակատամարտի և հերոսության մասին քաջ հայտնի կարծրատիպերով: Սրանք չեն կարող և չպետք է նույնացվեն «հավաքական հիշողության» հետ: Դրանք ոչ մի առնչություն չունեն «հիշողության» հետ, առավել ևս՝ «հավաքական»:

Փաստն այն է, որ թե՛ Տոլստոյը, թե՛ Շատոբրիանը իրենց պատմությունը ավելի տպավորիչ դարձնելու համար նույն գեղարվեստական շարժն են արել: Փաստերը «չորացնելու» արարքի և պատմողի ճարտասանության միջև այս լարվածությունը, հավանաբար, պարզաբանում է գրողների և ֆիլմարտադրողների հավիտենական երկմտությունը՝ գիտական մոտեցումը, այսինքն պատմության վերականգնումը «ինպես որ իրոք եղել է», և գեղարվեստական մոտեցումը, այսինքն գրավիչ պատմություն պատմելը: Ինչևէ, եթե Տոլստոյի մեկնաբանությամբ անձնական հիշողությունը համարվում է բոլոր կարծրատիպերի սկզբնաղբյուր, ապա Հոլբրախսի մեկնաբանությունը մերժում է որևէ ճշմարիտ անձնական հիշողության հնարավորություն և, առանց երկմտելու, «հավաքական» բառաձևը համարում է հիշողության միակ տեսակը:

Շարունակելի



Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու վերաբացման տարելիցի առիթով

**Ինչո՞ւ «մասնակցեցինք»
«Աղթամար հուշակոթող-թանգարան»-ի
վերաբացման «սցենար»-ին**

Էրվին Զակոբյան

Վանա լճի Աղթամար կղզում գտնվող՝ հայկական Ս. Խաչ եկեղեցու վերաբացումից մեկ տարի է անցել: 2007 թ. մարտի 29-ին կայացավ թուրքերի անվանած՝ «Աղթամար»-ի (սպիտակ երակ) «հուշակոթող-թանգարան»-ի վերաբացման արարողությունը: Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ լինելով՝ մի հայկական պատմա-կրոնական հուշարձան վերականգնվել էր պետական միջոցներով: Բացման արարողությանը ներկա էին Պոլսո Չայոց պատրիարքը, պոլսահայ համայնքի ներկայացուցիչներ եւ նաեւ Չայաստանից Վան ժամանած մի պաշտոնական պատվիրակություն:

Թե Թուրքիայի իշխանությունը «վերանորոգման» նոր քաղաքականությամբ ինչ նպատակներ էր հետապնդում, իհարկե քննարկման արժանի է, սակայն սույն հոդվածում հեղինակս կփորձի մեկնաբանել, թե «թրքական սցենար»-ի իրագործման ուղղությամբ հայերիս մասնակցությունը ի՞նչ արդյունքներ բերեց մեզ համար եւ ի՞նչ «դրական» ազդեցություն ունեցավ երկու ազգերի՝ թուրքերի ու հայերի բարեկամական երկխոսության ուղիում:

Թրքական «հրավիրական» քարոզարշավը

Թուրքերը Ս. Խաչի վերաբացման նախօրյակին, նաեւ բացումից հետո շահագործելով տեղական եւ արտասահմանյան լրատվամիջոցները, ընդարձակ քարոզչական արշավ տարան՝ բարձրաձայն բացականչելու Թուրքիայից եւ արտասահմանից, ի մասնավորի Չայաստանից ու Սփյուռքից բացմանը հրավիրված կամ մասնակցած պաշտոնյաների եւ պաշտոնական պատվիրակությունների մասին: Թուրքերը ամիսներ առաջ սկսել էին քարոզել, որ մտադիր են հրավիրել հոգեւոր ու աշխարհիկ պաշտոնական անձանց Չայաստանից եւ Սփյուռքից: Թուրքիայի մշակույթի նախարար Աթիլլա Քոչը մի քանի շաբաթ, մինչ եկեղեցու բացումը, «Զաման» թերթի հետ ունեցած հարցազրույցում ասել էր. «Մենք եվրոպական միության պատկանող երկրներից ներկայացուցիչներ ենք հրավիրել: Կհրավիրենք նաեւ Ռուսաստանի, Չայաստանի, Լիբանանի, Սիրիո, Վրաստանի, Միացյալ Նահանգների եւ Կանադայի մշակույթի նախարարներին: Մենք կարելու դեմքեր ենք հրավիրել սփյուռքից՝ հոգեւոր եւ աշխարհիկ պե-

տեր, ինչպես նաև մշակութային կազմակերպությունների ներկայացուցիչներ: 200 ականավոր հյուրեր պիտի ընդունենք»:

Ըստ երեւոյթին, հրավերներ էին ուղղվել հայ սփյուռքի ներկայացուցիչներին եւ Հայաստանի մշակութային եւ երիտասարդության հարցերի նախարար Հասմիկ Պողոսյանին: Վերջինս հրավիրվել էր թուրքիայի մշակութային նախարարի կողմից: Նրա պաշտոնական հրավերը եկել էր Թիֆլիսում թուրքիայի դեսպանատնից: Սփյուռքահայ համայնքներից նաև հրավիրվել էին մի քանի ներկայացուցիչներ: Բացումից շուրջ մեկ շաբաթ առաջ Turkish Daily News-ը հաղորդեց, որ ավելի քան 200 հայեր են հրավիրվել Նյու-Յորքից, Վաշինգթոնից, Լոս-Անջելեսից, Օտտավայից եւ Փարիզից: Թերթս հրավիրյալների ցանկում նշել էր նաև ՀՀ-ի ներկայացուցիչներին: Հրավերներ էին ուղղված նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսարաններին: Հրավիրյալների ցանկում էին պատրիարքներ ու եպիսկոպոսներ Դամասկոսից, Հալեպից, Մոսկվայից, Բուխարեստից եւ Բեյրութից: Երեւանից հրավիրվել էին հինգ հոգեւոր ներկայացուցիչներ: Թուրքիայի այս «հրավիրական» վերաբերմունքը անկասկած հետեւում էր քաղաքական նպատակներ: Ընդհանրապես թուրքիան կամենում էր Ս. Խաչի վերականգնման հարցը արժանացնել միջազգային ուշադրության: Սա կեղծ ժեստ էր՝ ուղղված համայն աշխարհին ու հայության՝ ձեւացնելու, թե թուրքիան հանդուրժողականությամբ եւ հարգանքով է վերաբերվում երկրի ցեղային ու կրոնական փոքրամասնությունների ու դրանց շարքում հայերի նկատմամբ եւ պահպանում է նրանց պատմա-մշակութային սեփականությունները: Այդ հիման վրա հայ հրավիրյալ մասնակիցները, իբրեւ վկաներ, աշխարհով մեկ պիտի հաստատեն թուրքիայի «բարեկամական» այդ քայլը, ինչը պիտի ծառայեր թուրքերի միջազգային նպատակներին: Իրականությունն այն է, որ Ս. Խաչի վերանորոգման հարցում թուրքիային հետաքրքրում էին միայն ու միայն իր օգտին շահող քաղաքական ու տնտեսական նկատառումները:

Թուրք բարձրաստիճան պաշտոնյաները պիտի կատարեն վերաբացումը

«Հյուրիեթը» 2007 թ. մարտի սկզբին հաղորդեց, որ կայացած որոշման համաձայն՝ թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էր-

դողանն անձամբ պիտի կատարի եկեղեցու բացումը: Նրա ուղեկցությամբ բացմանը պիտի մասնակցեն «Արդարություն եւ զարգացում» իշխող կուսակցության պատվիրակությունը եւ նախարարական վարչակազմի անդամները: Այն օրերին լուրը անակնկալի բերեց բոլորին, քանի որ Էրդողանի մասնակցությունը նախատեսված չէր: Իհարկե այդ որոշումը ուներ քաղաքական նկատառումներ: Սույն հայտարարությունը արվեց այն պայմաններում, երբ նախատեսվում էր հառաջիկա օրերին Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձեւը քննարկման ենթարկել ԱՄՆ-ի Կոնգրեսում: Այն օրերին Էրդողանի հայտարարությունը մի նենգ փորձ էր շեղելու կոնգրեսականներին պատմական իրողությունից: Դա կեղծ հայտարարություն էր, քանի որ Էրդողանը այդպես էլ ներկա չգտնվեց բացման արարողության:

Թրքական կողմից Ս. Խաչի բացմանը ներկա եղան մշակութային եւ զբոսաշրջության նախարար Աթիլա Քոչը, նախարարության առընթեր Մշակութային արժեքների եւ թանգարանների գլխավոր վարչության պետ Օրհան Դյուզգյունը եւ դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչները, Վանի նահանգապետ Օզդեմիր Չաքաջաքը, գիտության եւ մշակութային թուրք գործիչներ եւ խորհրդարանից՝ պատգամավորներ:

Ընդհանրապես հայ հոգեւորականությունը հրաժարվեց մասնակցել Ս. Խաչի վերաբացման արարողության

Թուրքիայի կառավարությունը Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսին եւ Արամ Ա. Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսին հրավիրել էր մասնակցելու Ս. Խաչի բացման արարողության: Սակայն՝ կենտրոնական կառավարության պաշտոնական հրավերով չէր, որ Ամենայն Հայոց կաթողիկոսը հրավիրվել էր թուրքիա, այլ՝ Վանի նահանգապետի կողմից:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսարանները բացասական արձագանքեցին հրավերներին՝ հրաժարվելով մասնակցել եկեղեցու վերաբացմանը: Պատճառը պարզ էր... Ինչպե՞ս կարելի էր մասնակցել այդ արարողության, երբ Ս. Խաչ եկեղեցին վերականգնվել էր որպես «հուշակոթող-թանգարան», այլ ոչ որպես եկեղեցի՝ իր հոգեվոր իմաստով: Ինչպե՞ս կարելի էր անտեսել, որ Ս. Խաչը վերածվելու է զուտ թանգարանի եւ այլևս չի գործելու որպես մի սրբատեղի Պոլսո Հայոց պատրիարքարանի իշխանու-

թյան ներքո: Ինչպե՞ս կարելի էր մասնակցություն բերել, երբ բացման արարողությունը կատարվելու էր աշխարհիկ արարողակարգով եւ ոչ Յայ Առաքելական եկեղեցու հոգեւոր կարգով: Ասվում էր, որ այսուհետ չի թույլատրվելու աղոթել եկեղեցում: Ինչպե՞ս կարելի էր հանդուրժել, որ Թուրքիայի իշխանությունները խուսափում էին տեղադրել եկեղեցու գմբեթի խորհրդավոր խաչը...

Հակառակ երկու վերոհիշյալ կաթողիկոսարաններին՝ Պոլսոս հայոց պատրիարք Մեսրոպ արք. Մութաֆյանը մասնակցեց բացման արարողության: Ոմանք պատրիարքի մասնակցությունը կարող են արդարացնել այն բանով, որ Հրանտ Դինքի սպանությունից հետո Թուրքիայում տիրում էր սրված իրավիճակ, տեղի հայության ուղղված էին թուրք ազգայնամուլների հակահայ սպառնալիքները: Նման պայմաններում Պատրիարքի հրաժարումը լուրջ խնդիրների առարկա կհանդիսանար՝ բացասական անդրադարձ թողնելով պոլսահայության վրա: Չպետք է մոռանալ այն իրականությունը, որ Պոլսոս պատրիարքը թուրք հասարակության կողմից ընկալվում է որպես երկրի հայ բնակչության ներկայացուցիչ: Պարզ ասած՝ արք. Մութաֆյանը Ս. Խաչի հարցում «պատանդ» էր հանդիսանում թուրք կառավարության ձեռքում: Սակայն՝ նա իր մասնակցությամբ եւս չհաջողեց շահել թուրքերի համախոհանքը այն հարցում, որ անհրաժեշտ է տեղադրել եկեղեցու զանգը եւ գմբեթի խաչը եւ հարկավոր է գոնե տարին մի անգամ Ս. Խաչում կատարել եկեղեցական արարողություն: Այսօր, մեկ տարի անց Ս. Խաչի բացումից հետո կարելի է ավելի հաստատորեն հայտարարել, որ պատրիարքի եւ նրա պատվիրակության այդ «համագործակցական քայլ»-ը որեւէ դրական պատասխան չունեցավ թուրքերի կողմից: Փաստը մնում է փաստ, որ պետության դիրքորոշումը Հրանտ Դինքի սպանության եւ 301 հողվածի հարցում անփոփոխ է մնացել եւ ազգային ու կրոնական փոքրամասնությունների անվտանգության եւ ազատությունների խնդիրը դեռեւս մնում է անորոշ:

Սփյուռքահայությունը եւս արարողության մասնակցություն չբերեց

Սփյուռքահայության պատասխանը հրավերներին կտրուկ եւ պարզ էր... «Չենք մասնակցում»: Չնայած մարտի սկզբին «Հյուրիեթ» թերթը հաղորդել էր, որ բացման հրավիրված հայ սփյուռքի ներկայացուցիչները համաձայնություն են հայտնել

մասնակցություն բերել բացման արարողության, սակայն սփյուռքահայ համայնքներից որեւէ ներկայացուցիչ ներկա չգտնվեց բացմանը:

Հայաստանի Հանրապետությունը ընդառաջեց հրավերին

Ինչպես անդրադարձանք, Հայաստանի Հանրապետության մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Հասմիկ Պողոսյանը պաշտոնապես հրավիրվել էր մասնակցել բացման արարողության, սակայն մարտի 22-ին նախարարության հասարակության հետ կապերի բաժնի պետ Գայանե Դուրգարյանը հաղորդեց, որ նախարարը չի մեկնելու Վան: Լավատեսության դեպքում կարելի է ասել, որ նախարարը զգուշանալով թուրքերի քաղաքական-քարոզչական ծուղակից՝ հրաժարվել էր մասնակցելուց: Նա իր հրաժարումը պատճառաբանել էր նրանով, որ ըստ նախնական պայմանավորվածության՝ պիտի մասնակցեր եկեղեցու բացման օրերին Բելառուսում կայանալիք «Հայաստանի մշակույթի օրեր» միջոցառումներին:

Սակայն՝ Հայաստանի մշակույթի նախարարին փոխարինելու էր փոխնախարար Գագիկ Գյուրջյանը՝ գլխավորելով Հայաստանի պաշտոնական պատվիրակության: «Համահայկական» ցանցի համաձայն՝ Հայաստանից փոխնախարար Գագիկ Գյուրջյանի գլխավորությամբ 29 հոգանոց պատվիրակություն էր ժամանել: Ըստ «Ազգ»-ի՝ պատվիրակության կազմում ընդգրկված էին Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի Արեւելագիտության ինստիտուտի տնօրեն Ռուբեն Սաֆրաստյանը, Հայաստանի ճարտարապետների միության նախագահ Մկրտիչ Մինասյանը, Գիտությունների ազգային ակադեմիայի Արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի վարիչ Սուրադ Հասրաթյանը, Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանը, նախարարության Պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության պետ Արտեմ Գրիգորյանը:

Պիտի անդրադառնանք, որ հայկական պատվիրակությունը հետաքրքիր «արկածախնդրական ճանապարհորդություն» է ունեցել Երեւանից Վան մեկնելու ճանապարհին, որի համար մենք «պարտական ենք» Թուրքիայի կառավարությանը... Պաշտոնապես հրավիրված մեր պատվիրակությունը դժվարությամբ ու «արկածներով» հասավ Աղթամար: Հայկա-

կան պատվիրակությունը պիտի անցնեն Յայաստան-Թուրքիա սահմանը ու հետո մեկնեն Վան, սակայն թուրքերը չարտոնեցին այդ ուղերթը: Յայ-թուրքական սահմանը 1993 թվականից ի վեր փակ է եղել: Պարզ էր, որ թուրքերը, նույնիսկ Ս. Խաչի վերաբացման առիթով, չէին բացելու սահմանը՝ չզիջելով իրենց դիրքերը Արցախի եւ Ադրբեջանի հարցում: Թուրքիայի արտաքին քաղաքականությունը խիստ հակված է Ադրբեջանի կողմը: Այլապես նրանք հենց Յրանտ Դինքի սպանությունից հետո՝ օգտվելով ստեղծված իրավիճակից՝ կփորձեին վերականգնել երկու երկրների փոխհարաբերությունները՝ սահմանը բացելով:

Պատվիրակության համար մնում էր մի այլ ճանապարհ... Վան հասնել օդային չվերթով: «Յանահայկական» լրատվական ցանցը մարտի 15-ին հաղորդել էր, որ առաջին անգամ լինելով՝ Թուրքիայի կառավարությունը որոշում է կայացրել հայկական պատվիրակության համար կազմակերպել «Երեւան-Վան չարտերային չվերթ»: Ի՞նչ ողջունելի քայլ... Սակայն՝ Երեւան-Վան չվերթը չիրականացվեց, քանի որ թուրքերը պատճառաբանում էին, որ իբր թե տեխնիկական պատճառներով անհնարին է ապահովել անվտանգությունը Վանում: Բայց՝ Յայաստանի ներկայացուցիչները «վճռական» էին մասնակցել բացման արարողությանը, եւ այսպես՝ «ստիպված» եղան Վրաստանի տարածքով հասնել Վան: Պատվիրակության ներկայացուցիչները Վրաստանի Ախալքալաքով ու Ախալցխայով անցել էին մինչեւ Արդահանի նահանգի ճանապարհը: Ապա՝ գիշերել էին Կարսում ու մյուս առավոտյան ճանապարհվել դեպի Վան:

«Տպավորիչ» ճանապարհորդություն էին ունեցել հայերը Կարսից Վան մեկնելիս: Նրանք «այցելել էին» Իսաաք փաշայի պալատը...


Իսաաք փաշայի պալատը Օսմանական ճարտարապետության եզակի կառույցներից մեկն է, որի շինությանը մասնակից են եղել հայ ճարտարապետներն ու արհեստավորները, սակայն չգիտենք՝ արդյոք պատվիրակությանս ընդառաջող եւ ուղեկցող թուրքերը հուշեցին իրողությունը մեր ներկայացուցիչներին... Սույն պալատում նախատեսվել էր հարեմի բաժին... ինչքա՞ն հայ աղջկերք են առեւանգվել ու այստեղ բերվել «փաշաների» քմահաճույքի համար... Ի դեպ՝ հիշեցնեն, որ այս «քմահաճույքի հարեմ»-ը իր բոլոր ենթակառույցներով Թուրքիայի կառավարության կողմից վերականգնվել է 1950-ական թվականներին, այսինքն՝ շուրջ 50

տարի առաջ, նախքան մեր «հոգեւոր եկեղեցու» վերանորոգման արժանանալը:

...Նաեւ թուրքերը Դողուբայազետ քաղաքում ուղեկցեցին հայ ներկայացուցիչներին՝ այցելելու մի այլ պատմական շինություն՝ հին հայկական Դարույնքի բերդը: Դարույնք անունը մեզ շատ հոգեհարազատ է: Դարույնքը անունն է քաղաքի (այժմ կոչվում է Դողուբայազետ), որը դարեր շարունակ բնակեցված է եղել հայերով: Դարույնքի հայ բնակչությունը օսմանյան տիրապետության տարիներից ի վեր, շարունակ ենթարկվել է սպանդների ու տեղահանությունների, դրանով հանդերձ՝ 1914 թվականին քաղաքի 5000 բնակչությունից 2000-ը դեռ հայեր էին, որոնք ունեին եկեղեցի, երեք ուխտատեղիներ եւ մի երկսեռ վարժարան: Սակայն՝ 1918 թվականին թուրքերը հայերին ամբողջովին տեղահանեցին: Բնակչության մի մասը կոտորվեց թուրքերի ձեռքով, իսկ մնացած բաժինը զոհվեց գաղթի ճամփին...

Ի՞նչ «տպավորիչ» այցելություն է ունեցել հայ պատվիրակությունը...

Պարզապես Յայաստանի Յանրապետության դրական արձագանքը Ս. Խաչի վերաբացման մասնակցելու հարցում երկրի շահերից չէր ելնում: Գործնականում դա գործեց ի նպաստ թուրքերի ներքին ու միջազգային քաղաքական շահերին: Մենք այդ «դրական եւ բարեկամություն դրսեւորող» քայլով որեւէ վարկանիշ չչափեցինք: Փաստն այն է, որ Յայաստան-Թուրքիա սահմանը մինչ օրս փակ է եւ թուրք կառավարության դիրքորոշումը «հայկական հարց»-ի եւ Լեռնային Ղարաբաղի ճակատագրի կապակցությամբ մնացել է անփոփոխ: Պետությունը Յայոց ցեղասպանության հարցում անհանդուրժողական քաղաքականություն է վարում: Թուրքիան, չնայած իր կեղծ ժեստերին, ներքին ու արտաքին քաղաքականության մեջ առաջնորդվում է պանթուրքիզմին շահող գաղափարով:




«Դրօշակ» - ի հարցերին պատասխանում է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանը

«Դրօշակ» - Ձեր գլխավորած Հայոց ցեղասպանության թանգարանը սուկ թանգարան է, թե՞ օժտված է փաստահավաքման, գիտական ուսումնասիրություններ ծավալելու կարողականությամբ:


Հ. Դ. - Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը գործում է ՀՀ ԳԱԱ համակարգում և իր բնույթով ուրույն հաստատություն է, քանի որ այստեղ համատեղվում է և՛ թանգարանը, և՛ գիտական հաստատությունը: Մեր գործունեության հիմնական ուղղություններից մեկն է փաստերի, վկայությունների, լուսանկարների և այլ կարգի փաստաթղթերի հավաքչական աշխատանքը, ինչը օգնում է համապարփակ կերպով ամբողջացնելու Հայոց ցեղասպանությանն առնչվող նյութերը: Նյութերը համապատասխանաբար ձեռք բերելուց կամ նվիրատվության կարգով ստանալուց հետո ենթարկվում են մշակման, թարգմանվում, իսկ այնուհետև ներկայացվում են թանգարանային ցուցադրության տեսքով կամ գիտահրատարակչական աշխատանքի միջոցով:

«Դրօշակ» - Պատմական առկա նյութերով, վկայություններով, ուսումնասիրություններով փաստված Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը վերջին տարիներին, կարծես, տեղապտույտ է ապրում, և պատճառը, հավանաբար, պիտի բացատրել ոչ միայն Թուրքիայի լայնածավալ հակաքարոզչությամբ և ԱՄՆ-ի «քաղաքական նպատակահարմարություն» հորջորջվող դիրքորոշմամբ:



Չե՞ք կարծում, որ պատմական արդարության կարծեցյալ հաղթանակին ապավինելով, մենք տանուլ ենք տալիս քարոզչական ասպարեզում: Թուրք պատմաբանների հետ համատեղ քննարկումից արդարացիորեն հրաժարվելով՝ մենք համարժեք մասնակցություն ունենո՞ւմ ենք պարտադրված հեռակա բանավեճին, որ, ցանկանանք թե ոչ, ծավալվում է ցեղասպանության ճանաչման դժվարին ճանապարհին:

Հ. Դ. - Ես կարծում եմ, որ այս ոլորտում հստակ սկզբունքային և համատեղված ջանքերի աշխատանքի բացակայության հետևանքն է, որ ժամանակի ընթացքում ցույց է տալիս մեր բացերը: Այստեղ պետք է մատնանշեմ այն հանգամանքը, որ մինչ օրս Հայոց ցեղասպանության թեմայով զբաղվող գիտնականները մեկ ընդհանուր ընկերակցության մեջ չեն միացել, ինչպիսին Հոլոքոստով զբաղվող պատմաբանների պարագայում է և կարող է շատ յուրօրինակ ձևաչափ դառնալ: Կարելի է օգտագործել այս ձևաչափը արդյունա-



վետ կերպով՝ թուրքական ժխտողականության դեմ պայքարելու համար:

Մեկ այլ խնդիր է՝ ունենալ շատ թանգարաններ ամբողջ աշխարհով մեկ, որպեսզի խնդիրը կարողանանք բարձրացնել միջազգային իրազեկության պատշաճ մակարդակի վրա: Ուստի հաջորդ թանգարանի կազմակերպումը, որը գտնվում է ընթացիկ փուլում, Վաշինգտոնում, ուրախալի փաստ է, և կարծում եմ, որ դա չի լինի երկրորդը և վերջինը. համանման թանգարաններ մենք կունենանք նաև Եվրոպայում և այլուր: Պատմաբանների հետ բանավեճերից չենք խուսափում. խնդիրը ճիշտ ներկայացնելու բացակայությունն է, որ առաջ է բերում թյուր կարծիքներ և գնահատականներ: Իրականում կան թուրք պատմաբաններ, որոնք ոչ միայն հրաժարվում են ցեղասպանությունն ընդունելուց, այլ ճիշտ հակառակը՝ նրանք նպաստում են ցեղասպանության հետ առնչվող տարրերի ուսումնասիրությանը, և շատ ուշագրավ կլիներ նրանց հետ քննարկումներին մասնակցելը: Կան պատմաբաններ, որոնք հաստատ կերպով իրենց դասել են ժխտողական

պատմաբանների ցուցակի մեջ: Այս պարագայում որևէ ասելիք չունենք, և կարելի է ասել, որ ավելորդ ժամանակ չունենք՝ նրանց վրա վատնելու:

«Դրօշակ» - Անշուշտ պատմաբանների գործն է՝ ի մի բերել ցեղասպանությանը վերաբերող նյութերը, վերականգնել ազգային մեր հավաքական հիշողությունը, սակայն մեր ժամանակներում նրանց աշխատանքը մեծ արդյունք չի տա՝ առանց իրավագետների, քաղաքագետների, հասարակության և պետության համագործակցության: Կա՞ այդ համագործակցությունը: Եվ ի՞նչ չափով:

Յ. Գ. - Ես կարծում եմ, որ իմ կողմից մատնանշված գիտական ընկերակցության մեջ ոչ միայն պատմաբանները պետք է ներկայացված լինեն, այլև իրավագետները, հոգեբանները, սոցիոլոգները, բոլոր նրանք, որոնք այս կամ այն չափով կզբաղվեն ցեղասպանության հիմնախնդրով, և իհարկե այդ ձևաչափը չպետք է գործի ինքն իրեն, այլ պետք է փորձի միջոցներ գտնել՝ անցկացնելու տարեկան իր ժողովները: Այստեղ պետության դերը խիստ կարևոր է և պետությունը պետք է հովանավորի ամենամյա այդ համաժողովները:



լով կապված և լուծեն մեկ հիմնական խնդիր, հնարավորինս համապարփակ և արդյունավետ կերպով իրազեկել միջազգային հանրությանը տեղի ունեցածի վերաբերյալ: Դա պետք է դառնա համագործակցող կազմակերպությունների ցանց: Շրջիկ ցուցադրությունները տվյալ պահին մեր կողմից պատրաստվում են որոշակի ցուցադրության հայեցակարգի հիման վրա: Մեր նոր ստացած տեխնիկական միջոցների օգտագործմամբ շատ արագ կարող ենք պատրաստել շրջիկ ցուցադրությունների մի քանի օրինակ, որոնք ունենալու են տարբեր լեզուներով տեքստեր և կարող են անընդհատ ցուցադրությունների մեջ լինել:

որ, ուր կհավաքվեն Հայաստանի Հանրապետության քաղաքացի գիտնականները, մեր սփյուռքահայ գործընկերները և այն արտասահմանցի գիտնականները, ովքեր զբաղվում են այս հիմնահարցով: Այստեղ լուրջ խնդիր պետք է լուծվի նաև հաջորդ սերնդի կադրերի պատրաստման առումով, որովհետև սերունդը, որ զբաղվել է Հայոց ցեղասպանության հիմնախնդրով, ժամանակի ընթացքում պետք է վերարտադրվի, և սա նաև պետական հոգածության խնդիր է:

«Դրօշակ» - Չե՞ք կարծում, որ ցեղասպանության թանգարանը կամ պետք է իր մասնաճյուղերն ունենա աշխարհի տարբեր անկյուններում և կամ շրջիկ ցուցահանդեսներով ներկայանա աշխարհին: Որքանո՞վ է իրականացալի նման ծրագիրը:

Հ. Դ. - Ես կարծում եմ մասնաճյուղերի առումով այնքան էլ ճիշտ չի գաղափարը: Յուրաքանչյուր թանգարան, որը գործում է աշխարհի տարբեր ծայրերում, պետք է գործի ինքնուրույն սկզբունքներով, և դա չպետք է լինի մեկ թանգարանի պատճեններն աշխարհագրական տարբեր գոտիներում: Բայց և այնպես թանգարանները պետք է լինեն անտեսանելի մեկ թե-

«Դրօշակ» - Թե՛ նյութական և թե՛ բարոյական առումով բավարա՞ր է Հայաստանի կառավարության աջակցությունը թանգարանին:

Հ. Դ. - Եթե մենք համենատենք այն նպատակների հետ, որոնք դրել ենք մեր առջև, իհարկե, միջոցները, որոնք տրամադրվում են, քիչ են: Ես չեմ ուզում այս պահին դժգոհել, որովհետև իմ պաշտոնավարման օրերին Հայոց ցեղասպանության թանգարանի, հուշահամալիրի և հատկապես Ծիծեռնակաբերդի զբոսայգու կարիքների համար այն միջոցները, որոնք տրամադրվել են կառավարության կողմից, ես կարող եմ գնահատել որպես լուրջ աջակցություն: Կարծում եմ, որ Մեծ եղեռնի մոտալուտ հարյուրամյա տարելիցի հետ կապված միջոցառումների ցանկում կարող ենք ընդգրկել մեր ծրագրերը, որոնք, վստահ եմ, կարծանանան կառավարության ուշադրությանը, քանի որ այդ ծրագրերի իրագործումը նպաստելու է թանգարանի գործունեության հետագա ծավալմանը և աճող սերունդների շրջանում Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը ճիշտ կերպով ներկայացնելուն:



1955 թվականին Հայոց եկեղեցու զանգերի ղողանջն ավետեց Ամենայն Հայոց Ծայրագույն պատրիարք եւ կաթողիկոս Ն. Ս. Օ. Վազգեն Առաջին հայրապետի ընտրությունը:

Անշուշտ փոխել էին հովվապետ իեղդելու, կղերականներ բանտարկելու, եկեղեցիներ քանդելու ժամանակները, սակայն դեռ կենսունակ էին բոլշեիկյան այն գաղափարախոսները, որոնք առիթը բաց չէին թողնում հակադրելու Հայ առաքելական եկեղեցին աթեիզմի վրա հիմնված տիրող կարգերին: Կաթողիկոսության առաջին իսկ օրերից Վազգեն Առաջինը փորձում է դիմագրավել Հայ եկեղեցու դեմ շարունակվող քարոզչական արշավանքին:

«Դրօշակ»-ի ընթերցողներին ենք ներկայացնում Վազգեն Առաջին վեհափառի նամակը ՀՍՍՌ Մինիստրների սովետի նախագահ Անտոն Քոչինյանին:

Սիլվա Սուքիասյան

25 մարտի 1959 թ.

Ս. Էջմիածին

Մեծարգո Պր. Անտոն Քոչինյան

Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի պարոն նախագահ

ՇԿՊ եւ Հայկական ՍՍՌ պաշտոնաթերթ «Սովետական Հայաստան»-ի 1959 թ. մարտի 20-ի համարում զարմանքով կարդացինք Վ. Սեւյանի հոդվածը «Կրոնական բարոյականության հակաժողովրդական էությունը» խորագրի տակ:

Մեզ եւ ամեն մի սովետական գիտակից քաղաքացու քաջ հայտնի է, որ մեր հայրենիքում շատ հստակ ու ճիշտ կերպով լուծված է խղճի ազատության հարցը, Սովետական Միության Կոնստիտուցիայի մեջ արձանագրված սկզբունքով, որով ամեն մի քաղաքացի ազատ է լինելու հավատացյալ կամ աթեիստ, հավատացյալներին

ապահովված լինելով կրոնական համայնքներ հիմնելու և Եկեղեցիներում իրենց հոգեկան մխիթարությունը գտնելու իրավունք, սահմանված պետական օրենքների սահմանում:

Մեզ համար շատ պարզ է նաև, որ ամեն մի ոչ հավատացյալ քաղաքացի իրավունքը պետք է ունենա, նույն խղճի ազատության սկզբունքի վրա, իր աթեիստական հայացքները ունենալու և արտահայտելու ազատ ու անկաշկանդ կերպով: Եվ, անշուշտ, ոչ մի հավատացյալ կամ Եկեղեցու ներկայացուցիչ իրավունք չունի այդ բանի համար վրդովվելու կամ վիրավորվելու:

Վ. Սեւյանի հողվածում սակայն հանդիպեցինք կրոնի և Եկեղեցու նկատմամբ հայտարարությունների և վերագրումների, որոնք անմիջապես դուրս են գալիս «գիտա-աթեիստական» ընդունված պրոպագանդայի սահմաններից:

Վ. Սեւյանը մեր ժողովրդի առաջ հրապարակավ մեղադրում է Շայոց Եկեղեցուն, որպես թե՛

1. Եկեղեցին ներշնչում է աշխատանքի և հավաքական սեփականության դեմ անբարյացակամության և այդպիսով վնասում մեր հայրենիքի սոցիալիստական վերաշինության առաջընթացին:

2. Եկեղեցին սովետական սոցիալիստական բարոյական նորմաների ձիշտ հակառակն է քարոզում:

3. Եկեղեցին մարդատյացություն և «մարդը մարդուն գայլ» վարդապետությունն է քարոզում լինելով կեղծ խաղաղության և ժողովուրդների բարեկամության համար մղվող պայքարում:

Այսպիսի ամբաստանությունները չափազանց ծանրակշիռ են և ոչ մի կապ չունեն խղճի ազատության արդար սկզբունքի վրա հիմնված գիտա-աթեիստական լուրջ պրոպագանդայի հետ:

Վ. Սեւյանի հողվածից հետևում է, թե կրոնն ու մեր Եկեղեցին պարզապես թշնամիներ են մեր ժողովրդին ու Սովետական հայրենիքին:

Շողվածագիր Սեւյանը միայն մի քանի օրինակներ բերելով արեւմտյան եկեղեցական պատմությունից՝ ընդհանրացումներ է անում և այդ բոլորը վերագրում առհասարակ բոլոր կրոններին և բոլոր եկեղեցիներին: Թե՛ և նա ուղղակի չի հիշում Շայ Եկեղեցու անունը, սակայն պարզ է և որոշ երևում է, որ նրա բոլոր ասածները ամբողջապես վերաբերում են նաև մեր կրոնին և Շայոց Եկեղեցուն:

Շետեաբար, հանուն ճշմարտության և արդարության և հիմնվելով մեր հայրենի Սահմանադրությամբ նվիրագործված խղճի ազատության սկզբունքի վրա, այլև նկատի ունենալով 1954 թ. նոյեմբերի 10-ին ՍՍՌՄ Մի-նիստրների սովետի նախագահ Նորին Վսեմություն պարոն Խրուշչովի հատուկ հայտարարությունը, մենք պարտք ենք համարում հայտնել մեր խոր հուզումը և կատարել հետևյալ ճշտումները՝ ի գիտություն Ձեզ և մեր հայրենի բարեխնամ ու արդարադատ կառավարության՝ պարտն ու պատշաճը տնօրինելու խնդրանքով:

ա) Քրիստոնեական կրոնն ընդհանրապես և Շայ Եկեղեցին աշխատանքը նկատել են ու նկատում են նվիրական պարտականություն՝ հիմնվելով Ս. Գրքի Նոր Կտակարանի վարդապետության վրա, ուր ասվում է «Ով չի աշխատի՝ չի ուտի»:

Ի մասնավորի Շայ Եկեղեցու ամենամեծ առաքինություններից մեկն է եղել աշխատանքի սերը և գնահատումը, և այսօր էլ նա քարոզում է և մղում իր հավատացյալներին՝ հավատարմորեն և նվիրումով աշխատելու՝ ի շինություն մեր Սովետական հայրենիքի և ի ծաղկումն սոցիալիստական տնտեսության:

Շայ Եկեղեցին ոչինչ չունի ընդհանուր բուրժուական հասարակարգի հետ և ոչ մի պատճառ և ցանկություն

չունի հակադրվելու սոցիալիստական-կոմունիստական հասարակարգին կամ հակառակ լինելու հավաքական սեփականության սկզբունքներին: Ընդհակառակը, մեր քրիստոնեական մտածելակերպի եւ հատկապես Շայ Եկեղեցու համար առավել հարազատ են այդ սկզբունքները:

Մեր Եկեղեցին ոչ մի պատճառ չունի անհատական սեփականության ջատագովը լինելու:

Թե անցյալում կամ ներկայումս արեւմտյան որոշ կրոնապետներ (հատկապես Շումի Եկեղեցականության ծոցում) գործակցում են բուրժուական իմպերիալիստական քաղաքականության եւ նույնիսկ գործիք են դառնում նրանց ձեռքում եւ փորձում են անհատական սեփականությունը ներկայացնել իբր հաստատված աստվածային կարգ՝ դա ճշմարիտ է անշուշտ, սակայն այդ բոլորը չեն վերաբերում Շայ Եկեղեցուն եւ հայ հավատացյալին: Նման երեսույթներ Սեւյանի կողքին մենք եւս դատապարտում ենք, իբրեւ Շայ Եկեղեցուն եւ մեզ խորթ, հակա-ժողովրդական, հետադիմական ու նաեւ հակաքրիստոնեական մտածելակերպ եւ գործելակերպ:

Սեւյանը ոչ մի ապացույց չի կարող բերել այսօր այս ուղղությամբ մեր հայրենիքում գործող Շայ Եկեղեցու գործունեության մասին: Նույնպես չի կարելի ասել, որ Շայ Եկեղեցին անցյալում հլու հպատակ գործել է ճիշտ հակառակն է: Գոնե վերջին մի քանի հարյուրամյակների ընթացքում մեր Եկեղեցու ամենամեծ դեմքերից շատերը պայքարել են տիրող բռնատիրական իշխանությանց դեմ եւ երբեմն նույնիսկ նահատակվել: Ներսես Աշտարակեցի, Խրիմյան Շայրիկ, Մատթեոս Իզմիրլյան կաթողիկոսները հրապարակաւ ըմբոստացել են եւ պայքար կազմակերպել պարսկական, ցարական եւ սուլթանական իշխանությանց դեմ:

Մեր ժողովրդի վերջին չորս-հինգ հարյուր տարիների պատմությունը լիքն է ժողովրդանվեր եւ հայրենասեր խիզախ հոգևորականների անշահախնդիր նվիրվածության գործերով՝ ընդդեմ տիրող իշխանությանց: Ծանոթ է անշուշտ նաեւ բոլորին, որ 1915-1917 սեւ տարիներին ամբողջ արեւմտահայ հոգևորականությունը աքսորի ձանապարհների վրա նահատակվեց իր ժողովրդի հետ եւ զեն ի ձեռին կռվեց տիրող բռնակալների դեմ:

Շայ Եկեղեցին ինքը նահատակ է եղած անցյալում իմպերիալիստական եւ բուրժուական բռնակալությանց լծի տակ, սուլթանական Թուրքիայում եւ ցարական իշխանության օրերին, եւ այժմ երջանիկ է, որ հայ աշխատավոր ժողովուրդն իր արդար քրտինքով ու հանձարով, քաղաքական-սոցիալական խաղաղ պայմաններում, ապրում ու զարգացնում է իր սոցիալիստական տնտեսությունը եւ Պետությունը:

Եվ Շայ Եկեղեցին երջանիկ կլինի, եթե այսօր մի քար էլ ինքը ավելացնի Սովետական Սոցիալիստական Շայաստանի շենքի վրա:

բ) Սեւյանը պնդում է, թե կրոնական-քրիստոնեական բարոյականությունը հակաժողովրդական է եւ հայտարարում է, թե կրոնական բարոյականությունը հակադրվում է կոմունիստական բարոյականությանը, այսինքն՝ «կոլեկտիվիզմի, բարեկամության, ընկերական փոխադարձ օգնության եւ համագործակցության սկզբունքներին, որը խարսխված է անձնական եւ հասարակական շահերի ներդաշնակ զարգացման, անձնական շահերը հասարակականին գիտակցաբար ենթարկելու վրա: Այստեղ մարդը մարդու համար ոչ թե թշնամի է, այլ բարեկամ, եղբայր, ընկեր»:

Այս սկզբունքներին եւ վեհ գաղափարներին ոչ թե հակառակ է քրիստոնեական Շայ Եկեղեցին, այլ դրանց պաշտպանն ու տարածողը դարերից ի վեր: Ուղիղ հասկացված քրիստոնեական վարդապետությունը ամբողջությամբ հիմնվում է այդ բարոյական ըմբռնումների վրա: Քրիստոնեական հավատը, իբրեւ կրոնական ապրում

և մտածում, մեզ համար բարոյական մի կատեգորիա է: Այդ այդպես է մանավանդ Հայաստանյայց Եկեղեցու համար, որը գոնե վերջին ժամանակաշրջաններում իր ճակատագիրը և իր առաքելությունը կապել է ոչ թե իշխող պետությունների և դասակարգերի հետ, այլ ընդհակառակը, կանգնել է ժողովրդի լայն զանգվածների կողքին՝ ընդդեմ տիրող կարգերի, ընդդեմ իմպերիալիստների, ընդդեմ ժողովուրդների ազատությունը խեղդողների, ընդդեմ անարդարությունների և բարբարոս ազգասպանների:

Շրվիրում ենք Սեյանին, որ գոնե մի հատ կոնկրետ ապացույց ներկայացնի Հայ Եկեղեցու մեր ներկա կյանքից՝ իր ասածները հաստատելու համար: Թե հայ հավատացյալների և թե նույնիսկ հայ հոգևորականների շարքերում կարող են գտնվել անհատներ, որոնք գործեն նշված բարոյական նորմաների դեմ, ինչպես այդ երբեմն պատահում է նաև աթեիստների շարքերում: Նման մեղքերը և հակաժողովրդական բարոյական արարքները դատապարտվում են առաջին հերթին նույնիսկ Եկեղեցու կողմից և այդպիսի արարքներ գործողները համարվում են ոչ միայն ժողովրդի, այլ նաև Եկեղեցու վնասարարներ:

Մեզ համար անչափ ուրախալի է կարդալ կոմունիստական բարոյականության նորմաների մասին, ըստ Վ. Սեյանի վերոհիշյալ շարադրության, որոնք ամբողջապես և առանց մնացորդի հարազատ են մեզ և նվիրական:

գ) Վերջապես Սեյանը մեր քրիստոնեական կրոնը և Հայ Եկեղեցուն ներկայացնում է որպես «մարդը մարդուն գայլ» դատապարտելի տեսության պաշտպան, կեղծ խաղաղասեր և ժողովուրդների միջև թշնամություն, ատելություն սերմանող հաստատություն: Սակայն այս մասին նա ոչ մի կոնկրետ փաստ չի բերում: Նա չի էլ կարող բերել: Այնուամենայնիվ նա մեղադրում է Հայ Եկեղեցուն և հայ հավատացյալին, անպատասխանատու կերպով:

Թե Եկեղեցու ծոցից և թե հավատացյալների շարքերից անցյալում դուրս են եկել սոցիալիստական հասարակարգի և Սովետական հայրենիքի անհարազատ տարրեր, այդ ձիշտ է, բայց այդ եղել է հեռու անցյալում, եղել են հազվադեպ պարագաներ և այդպիսիները մեղադրվել են և մեղադրվում են այսօր էլ Հայ Եկեղեցու կողմից:

Ձեզ ծանոթ պետք է լինի, որ 1956 թ. փետրվարին, Անթիլիասում երեք եպիսկոպոսներ, երբ հայ ժողովրդի և հայրենիքի շահերի դեմ որոշ դիրքավորում ընդունեցին, գործիք դառնալով քաղաքական մի շարք բախտախնդիրների ձեռքում ամերիկյան դիվանագետների հովանավորության ներքո, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ, նրանց վտարեց իր ծոցից՝ իբրև հերձվածողների: Ավելի քան երեք տարի է ահա, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը գլխավորում է այդ պայքարը նրանց դեմ աննահանջ վճռականությամբ և պիտի շարունակի մինչև հաղթական վերջավորություն:

Նման անհարազատ տարրեր կամ ժողովրդի թշնամիներ դուրս են եկել նաև ոչ հավատացյալների շարքերից:

Այդպիսիներ ժամանակին արդար կերպով ժողովրդի կողմից դիմակազերծվել են և պատժվել՝ որպես սովետական ժողովրդի թշնամիներ և Սովետական Հայրենիքի դավաճաններ:

Մենք ուրախությամբ պետք է ասենք, որ հատկապես վերջին տասնամյակների ընթացքում նման վատառողջ, ոչ հայրենասիրական արարքներ մեր հայրենիքում երբևէ չեն երևալու բարեբախտաբար Հայ Եկեղեցու ծոցում և հայ հոգևորականության շարքերում:

Ավելին՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և հայ հավատացյալ ժողովուրդը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ և ղեկավարությամբ, ոչ միայն Մայր Հայրենիքում, այլ նաև Սփյուռքում կանգնած են եղել և կանգնած կլինեն մեր Սովետական Մայր Հայրենիքի և ժողովրդի գերագույն շահերի պաշտպանության դիրքերում: Ս. Էջմիածինը միշտ եղել է ճշմարիտ հայրենասիրության սրբազան օջախը: Նրա վերջին պայծառ փաստն է՝ հանգուցյալ երկու մեծ հոգևորականների՝ Գեորգ Զ կաթողիկոսի և Գարեգին Ա Շովսեփյանց կաթողիկոսի հայրենասիրական գործունեությունը, որոնք Հայրենական մեծ պատերազմի դժնդակ օրերին, իրենց խոսքով և ծավալած գործունեությամբ, մի մարդու նման ոտքի հանեցին ամբողջ Հայ եկեղեցուն, բոլոր հոգևորականներին և հավատացյալներին և նրանց միջոցներով Սովետական բանակին նվիրեցին մի ամբողջ տանկային շարասյուն՝ վտանգի մեջ եղող Սովետական Հայրենիքի փրկության համար:

Հայրենասիրական զգացմունքներով տոգորված մեր հոգևորականներից շատերը, Սփյուռքի դժվարին պայմաններում, դրամատիրական-բուրժուական երկրներում, վերջին 40 տարիների ընթացքում անվախ կերպով կանգնած են եղել Սովետական Հայրենիքի կողքին՝ պայքարելով հանուն խաղաղության և ժողովուրդների բարեկամության: Նրանցից ոմանք համամարդկային այդ գաղափարների կենսագործման համար խոշտանգվել են, դատապարտվել և մեղադրվել՝ որպես համայնավար գործակալներ, իսկ ոմանք էլ իրենց արյունն են թափել այդ պայքարի ճանապարհի վրա, ինչպես Հյուսիսային Ամերիկայի հայոց առաջնորդ նահատակ Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանը, որը 1934 թ. դեկտեմբերի 25-ին Նյու Յորքում, օրը ցերեկով եկեղեցում սպանվեց հակասովետական քաղաքական գործակալների կողմից: 1935 թ. Աթենքում նույնպիսի մարդկանց կողմից խոշտանգվեց ծերունազարդ արքեպիսկոպոս Մաջլումյանը, իսկ 1950 թ. Փարիզում՝ Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյանը, խաղաղության համար մղած իր պայքարը վճարեց իր կյանքի գնով:

1956 թ.-ից սկսյալ հետադիմությունը Բեյրութում հալածում և խոշտանգում է այն հոգևորականներին, որոնք հայրենասիրական գործունեություն են ծավալում և մնում են Էջմիածնի գլխավորած ազգային-եկեղեցական միասնության շարքերում:

Այսօր էլ այն ժամին, երբ Սեւյանը, նստած իր խաղաղ տանը, հակակրոնական-հակաեկեղեցական իր հողվածն է խմբագրում, Սփյուռքում մեր հոգևորականներից շատերը և մեր հավատացյալներից տասնյակ հազարավորներ, մեր Ս. Եկեղեցին և Ս. Էջմիածինը իրենց պայքարի դրոշմ դարձրած, դժվարին պայմանների մեջ, հալածանքի, բանտի և գնդակահարության սպառնալիքի տակ, մարտնչում են խաղաղության, ժողովուրդների ազատագրման ու բարեկամության և առաջադիմական գաղափարների հաղթանակի համար, անկաշառ հավատարմությամբ դեպի Սովետական մեր Մայր Հայրենիքը:

Ինչպես երեկ, նաև այսօր, Հայ եկեղեցին և հայ հավատացյալների քաղաքացիական, հայրենասիրական անկեղծությունը, նվիրվածությունը դեպի մեր երկրի սոցիալիստական կարգերը և դեպի Սովետական մեր Հայրենիքի գերագույն շահերը:

Մենք խորհուրդ կտայինք Վ. Սեւյանին՝ ուշադրությամբ ուսումնասիրել ՍՄԿՊ Կենտկոմի կողմից տրված «Բնակչության շրջանում գիտա-աթեիստական պրոպագանդա անցկացնելու սխալների մասին» 1954 թ. նոյեմբերի 10-ի որոշումը, ուր խոսվում է նաև հետևյալը. «Զի կարելի մոռանալ, որ մեր երկրի հավատացյալ քաղաքացիները իրենց հիմնական զանգվածով նույնպես սոցիալիստական հասարակության ազնիվ աշխատավորներ

են, որոնք ակտիվորեն մասնակցում են երկրի կյանքին: Բայց այս մարդիկ գտնվում են տարբեր տեսակի կրոնական հավատալիքների ազդեցության տակ: Շավատացյալ մարդկանց, նրանց կրոնական զգացմունքների նկատմամբ չի կարելի վերաբերվել ինչ-որ արհամարհանքով եւ անվստահությամբ, առավել եւս անմիտ եւ վնասակար բան է կրոնական համոզմունքներ ունենալու պատճառով նրանց քաղաքական կասկածանքի տակ դնելը» («Ինչպես վարել գիտա-աթեիստական պրոպագանդան», Երեւան, Շայպետիրատ, 1958 թ., էջ 6):

Ահա թե ինչու Վ. Սեւյանի հոդվածը խորապես վիրավորում է Հայ Եկեղեցու հոգևորականների եւ հայ հավատացյալների հայրենասիրական զգացմունքները:

Մենք ավելին կասեինք այդ մասին. Սեւյանի հոդվածը խորքում վնասում է Սովետական Հայրենիքի գերագույն շահերին, որովհետեւ հավատացյալ քաղաքացիներին անարդար կերպով ներկայացնելով որպես անբարոյական, հակաժողովրդական հանցագործների, դրանով կարող է շփոթեցնել հավատացյալների հայրենասիրական գիտակցությունը, նվիրվածությունը դեպի մեր հասարակարգը եւ Սովետական Պետությունը: Մեր կարծիքով դա մեծ սխալ է Սովետական Հայրենիքի միասնության դեմ, մանավանդ այսօրվա միջազգային քաղաքական լարված պայմաններում, երբ մեր հայրենիքի առաջ կարող է ստեղծվել ինքնապաշտպանության դիմելու ծանրակշիռ վիճակ, մեկ օրից մյուսը, արեւմտյան իմպերիալիզմի ագրեսորների դեմ երբ մեր Սովետական Հայրենիքի բոլոր քաղաքացիները գերագույն զոհաբերությանց կիրավիրվեն, ինչպես այդ պատահեց 1941 թ. ֆաշիստական ներխուժման ժամանակ, երբ ռուս, ուկրաինացի, վրացի, հայ, մահմեդական եւ այլ հարյուր հազարավոր հավատացյալներ իրենց հայրենասիրական պարտքը պատվով եւ փառքով կատարեցին իրենց աթեիստ ընկերների հետ միասին եւ նրանց ղեկավարության տակ:

Ինչ վերաբերվում է Հայ Եկեղեցուն, Սեւյանը եւ նրա նման այլ մտածողներ կարող են վստահ լինել, որ հակառակ իրենց ենթադրությունների, հայ հոգևորականներն ու հավատացյալները, ինչպես միշտ անցյալում, նույնպես այսօր եւս կանգնած ու կանգնած կմնան հայ ժողովրդի, Սովետական Հայրենիքի գերագույն շահերի պաշտպանության դիրքերում խոսքով եւ գործով եւ պատրաստ կլինեն զոհաբերության, գերագույն ժամին իրենց կյանքն իսկ նվիրելու հանուն մեր Հայրենիքի պաշտպանության, ոչ պակաս վճռականությամբ:

Ավելին, Հայ Եկեղեցու կենտրոն Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ծավալած հայրենասիրական աշխատանքների շնորհիվ Հայ Եկեղեցին նույն ոգով կկազմակերպի նաեւ արտասահմանի ավելի քան մեր մեկ միլիոն հավատացյալներին եւ կղեկավարի նրանց գործակցությունը, ակտիվ աշխատանքը՝ ի խնդիր Սովետական Հայրենիքի պաշտպանության եւ հաղթանակի:

Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի մեծահարգ պր. Նախագահ, ընդունեցեք մեր հարգալիք ողջույնը եւ անկեղծ բարեմաղթությունները Ձեր հայրենանվեր գործոց հաջողության համար:

Վաղգեն Առաջին

Ծայրագույն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց

ՀՊԱԱ, ֆոնդ N 883

Ի՞նչ է գրել «Դրօշակը»

100 տարի առաջ

№ 4 (192)

XVIII ՏԵՐԻ

ԱՊՐԻԼ 1908

„Droschak”

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:

RÉDACTION DU JOURNAL

„Droschak”

GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՆՁՆԱԿՑՈՒԹՒՆՆԵՐՆԵՐ” ՕՐԳԱՆ

Անսպուրեր

Ռավաճան Ղասըմ բեկը, որ 40 ղուլամներով հայ գյուղերը կշրջեր հեղափոխական գտնելու պատրվակով եւ ամեն գազանություն ու բռնաբարություններ ի գործ կդներ, չարաչար սպաննված է եւ իր գյուղը քարուքանդ եղած: Փոխարեն կառավարությունը ավերած է երկու հայ գյուղեր:

Տաճիկ կառավարությունը խստություններ սկսեր է թյուրք-պարսկական սահմանագծի շուրջը բնակող մեկ քանի քյուրդ ցեղապետներու վերաբերմամբ, որոնց մեկ քանին ձերբակալված եւ դատի ենթարկված են իբր Հ.Յ.Դաշնակցության նպաստողներ:

Էրզրումի մյուսուվանները խիստ դժգոհ ուստիկանության կողմն

վերջին շարժման պարագլուխներու դեմ գործ դրված անգթություններուն համար՝ դիմած են մեծ վեգիրին արդարություն պահանջելով ուստիկանության զոհերուն համար: Եթե կառավարությունը ավելի մարդասեր միջոցներ չիրամայե, կարող է ապստամբություն ծագիլ:

Վանի հյուպատոսները եւ ռուսական ու ֆրանսական դեսպանները պահանջած են ձերբակալել եւ պատժել Վանի կոտորածին առաջնորդները եւ մասնակիցները: Ոչ մեկ հանցավոր չէ ձերբակալված կառավարությունը, սպաննված են 60 եւ 50 հոգի վիրավոր եւ անհետացած: Ձերբակալված են Ս. Գրիգոր վանքի հոգաբարձության քանի մը անդամները:

Տեղի դավաճան Դավիթը հեղափոխականներու կողմն ստացած վերքն սատկեր է:

* * *

Հրաման ելած է նոր գործ դրկել Վան, ուր դրությունը սպառնական է: Քրիստոնյաներու խանութները եւ շուկան փակ են: Չինվորական բարձր պաշտոնյաներ, ինչպես նաեւ վալին, իրենց ընտանիքները կձամբեն Պոլիս, Իզմիր: Վանա ծովին համար մարտանավակ մը կփոխադրվի Պոլսեն մասմաս:

Եվրոպայի դաշ. ուսանող. առաջին համագումարը

Եվրոպայի դաշնակցական ուսանողությունը կարեւոր գտավ մի համագումար ունենալ իր ապագա գործունեությունը կազմակերպված հիմքերի վրա դնելու համար: Թեւ Եվրոպայի զանազան քաղաքներում միշտ եղել են դաշնակցական ուսանողական խմբեր եւ անհատներ, բայց հավաքվել մի անգամ, իրար ճանաչել, մի ընդհանուր գործունեության ծրագիր մշակել՝ դարձել էր անհրաժեշտություն:


Դեռ Եվրոպայի հայ ուսանողական միության Բեռնի համագումարում միտք էր ծագել հրավիրել հատուկ դաշնակցական ուսանողական համագումար: Ապա այդ միտքը զարգացել էր Ժնևի «Ջանք» խմբակի մեջ, իսկ վերջ ի վերջո Բեռնի խմբակին վիճակվեց մի կազմակերպիչ կոմիտե առաջ բերելու եւ համագումարի նախաձեռնությունը ստանձնելու բախտը: Այն ուրախալի ընդունելությունը, որ Բեռնի հրավերը գտավ ամեն տեղ, եւ այն բուն մասնակցությունը, որ երեւան եկավ համագումարի ժամանակ, ապացույց էին, թե որքան հասունացած էր այդ խնդիրը եւ որպիսի պահանջ կար ուսանող ընկերների մեջ իրար տեսնելու եւ ընդհանուր գործունեության ծրագիր մշակելու:

Համագումարը տեղի ունեցավ Ժնևում, ապրիլի 3-ից մինչեւ 13-ը: Մասնակցում

էին 15 պատգամավոր 12 քաղաքից. 135 դաշնակցական ուսանողների կողմից: Բեռնի մասնակցում էր երկու պատգամավորով, Ժնևը՝ երեք, Փարիզը՝ մեկ, Լայպցիգը՝ մեկ, Ենան՝ մեկ, Մյունխենը՝ մեկ, Հալլեն՝ մեկ, Բագելը՝ մեկ, Ցյուրիխը՝ մեկ, Բեռնը՝ մեկ, Լոզանը՝ մեկ, Ետշատելը՝ մեկ, բացի սրանից խոստացել էին մասնակցել նաեւ Բրյուքսելից եւ Մոնպելիեից, բայց անակնկալ պատճառներով մասնակցությունը չհաջողվեց: Պարզ է, որ եթե սա առաջին համագումարը չլիներ եւ նախապես խմբակների կազմակերպությունը հոգացված լիներ, մասնակցող պատգամավորների թիվը շատ ավելի կբարձրանար:


Համագումարը զբաղվեց ներքին կանոնադրի մշակությամբ. ընտրեց գործադիր մարմին: Կարդացվեցին նաեւ ռեֆերատներ հետեւյալ նյութերի մասին. 1) Մատերիալիստական պատմահայեցողությունը էմպիրիկրիտիցիզմի դատաստանի առաջ. 2) Պետության եւ իրավունքի մասին. 3) Եվրոպայի դաշնակցական ուսանողության պարտականությունները. 4) Հեղափոխություն եւ բեֆորմ. 5) Դաշնակցությունը եւ տաճկահայ դատը. 6) Դաշնակցությունը եւ Ռուսաստանի սոցիալիստ-հեղափոխական կուսակցությունը: Բացի այս, ժամանակի սղության եւ այլ անակնկալ պատճառներով չկարդացվեցին՝ 1) Սոցիալիզմի սուբյեկտիվ եւ օբյեկտիվ հիմնավորումը. 2) Դաշնակցությունը եւ պարսկահայերը: Բոլոր նիստերին շատ կանոնավոր կերպով ներկա էին լինում բացի պատգամավորներից նաեւ շուրջ 25 ունկնդիր ընկերներ:

Համագումարը ցրվեց գոհ եւ հուսալից, համոզված, որ հաջորդ համագումարին ընկերները իրար կհանդիպին ավելի թվառատ եւ ավելի հարուստ տեղեկություններով տեղական գործունեության մասին:



ՊՈԼՍԱՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԵՐԿՈՒ ԴԱՐԸ

Հրապարակի վրա է պատմագիտության դոկտոր, պրոֆ. Ալբերտ Խառատյանի «Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դդ.)» ծավալուն աշխատությունը, որ լույս է տեսել «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայկական մատենաշարով (Երևանի համալսարանի հրատարակչություն, 2007 թ., 471



էջ): Հեղինակը հետազոտել է գաղթօջախի պատմության ավելի քան 150-ամյա մի շրջանը, նրա կազմավորման ժամանակից, որ սկիզբ է առնում Բյուզանդական կայսրության և նրա մայրաքաղաք Կոստանդնուպոլսի անկումով, երբ վերջինս նվաճվեց օսմանյան թուրքերի կողմից (1453): Դրան հետևող մի քանի տարիներին Կոստանդնուպոլիսը (Ստամբուլ) վերաբնակեցվեց ոչ միայն մահմեդականներով, այլև քրիստոնյա հույներով, բալկանյան սլավոններով, հայերով, հրեաներով և այլ ժողովուրդներով, որոնց սրի ուժով նվաճել էր սուլթանի բանակը: 1461 թ. ստեղծվում և օսմանյան պետության կողմից ճանաչում է գտնում Կ. Պոլսի հայկական համայնքը իր հոգևոր առաջնորդի կամ պատրիարքի ղեկավարությամբ: Այսպես է իր կենսագործունեությունը սկսում Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը, որ հետագայում շատ ավելի բազմամարդ էր դառնալու օսմանյան սուլթանների զավթողական պատերազմների հետևանքով՝ ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանից հայ բնակչության ներհոսի հաշվին: Այս գաղթօջախում էլ պետք է զարգացման համազգային որակներ ձեռք բերեր արևմտահայ մշակույթը՝ դառնալով առ այսօր զարմանք և հիացում պատճառող՝ հայության հոգևոր խոշոր կենտրոններից մեկը: Հեղինակն իր առջև նպատակ է դրել բացահայտել գաղթօջախի լինելության պատմական պայմանները, նրա դիմագիծը և տեղը օսմանյան միլիթանտի (համայնքների) ընդհանրության մեջ, ազգային կառույցների, հատկապես եկեղեցու դերակատարությունն այդ համայնքում, նրա սոցիալական կացությունը, կրոնական և

ազգային իրավազրկության պայմաններում գործադրած ջանքերը՝ պահպանելու սեփական ինքնությունը: «Գաղթօջախի կազմավորումը» գլխում գաղթերի պատմության հանգամանալի քննությանը ցույց է տրվում, որ պոլսահայ համայնքը թեկուզ և արևմտահայ գաղթականների թվաշատության պարագայում, այսուհանդերձ, կազմավորվել է նաև արևելահայ ազգաբնակչության շնորհիվ (1514, 1530-ական, 1570-1580-ական թթ. և այլն), ինչը վկայում է գաղթօջախի համազգային բնույթի և նկարագրի մասին: Այս գլխում հեղինակը խոր վերլուծության է ենթարկում Կ. Պոլսի հայ համայնքի վարչության կազմավորման հիմնահարցը և նոր կողմերով լրացնում այս վերջինի՝ պարզ առաջնորդությունից մինչև պատրիարքություն ընթանալու գործընթացը, որ առաջին անգամ բացահայտել է գաղթօջախի ականավոր պատմաբան Հ. Պերպերյանը: Տրամաբանական, համոզիչ ընթացքով է ներկայացվում Կ. Պոլսի հայերի առաջին հոգևոր առաջնորդի՝ Հովակիմ Պրուսացու և մյուս Հովակիմների ինքնության հետ կապված կնճիռը, որ չդադարող վեճերի տեղիք է տվել գաղթօջախների պատմաբաններին՝ սկսած Ն. Ակինյանից, Մ. Օրմանյանից, Ա. Ալպոյաճյանից և վերջացրած Բ. Կյուլեսերյանով, Հ. Պերպերյանով և մյուսներով: Ա. Խառատյանը եզրակացնում է, որ միևնույն անձն են Պրուսայի առաջնորդ, Կուստինայի եկեղեցին նորոգող, ինչպես և Ֆիլիպեի առաջնորդ Հովակիմները: Անդրադառնալով «պատրիարք» պատվանվանը, հեղինակը ամրապնդում է Հ. Պերպերյանի այն կարծիքը, որ պոլսահայերի հոգևոր առաջնորդը նախապես հորջորջվել է «հայրապետ», «եպիսկոպոս» կամ «արհիեպիսկոպոս», և որ միայն 1526 թ. հետո, մինչև 1540 թ. ընկած շրջանում է մեծարվել «պատրիարք» կոչումով:

Աշխատության մեջ հատկապես գիտական բարեխղճություն է ցուցաբերված այն հիմնահարցերի քննարկմանը, որոնք վերաբերում են Կ. Պոլսի հայկական եկեղեցիներին, դրանց պատմությանն ու տեղագրությանը, գաղթօջախի հայերի թվաքանակին և այլն: Բարդ ու խճճված, հա-

մառային իրավազրկության պայմաններում գործադրած ջանքերը՝ պահպանելու սեփական ինքնությունը: «Գաղթօջախի կազմավորումը» գլխում գաղթերի պատմության հանգամանալի քննությանը ցույց է տրվում, որ պոլսահայ համայնքը թեկուզ և արևմտահայ գաղթականների թվաշատության պարագայում, այսուհանդերձ, կազմավորվել է նաև արևելահայ ազգաբնակչության շնորհիվ (1514, 1530-ական, 1570-1580-ական թթ. և այլն), ինչը վկայում է գաղթօջախի համազգային բնույթի և նկարագրի մասին: Այս գլխում հեղինակը խոր վերլուծության է ենթարկում Կ. Պոլսի հայ համայնքի վարչության կազմավորման հիմնահարցը և նոր կողմերով լրացնում այս վերջինի՝ պարզ առաջնորդությունից մինչև պատրիարքություն ընթանալու գործընթացը, որ առաջին անգամ բացահայտել է գաղթօջախի ականավոր պատմաբան Հ. Պերպերյանը: Տրամաբանական, համոզիչ ընթացքով է ներկայացվում Կ. Պոլսի հայերի առաջին հոգևոր առաջնորդի՝ Հովակիմ Պրուսացու և մյուս Հովակիմների ինքնության հետ կապված կնճիռը, որ չդադարող վեճերի տեղիք է տվել գաղթօջախների պատմաբաններին՝ սկսած Ն. Ակինյանից, Մ. Օրմանյանից, Ա. Ալպոյաճյանից և վերջացրած Բ. Կյուլեսերյանով, Հ. Պերպերյանով և մյուսներով: Ա. Խառատյանը եզրակացնում է, որ միևնույն անձն են Պրուսայի առաջնորդ, Կուստինայի եկեղեցին նորոգող, ինչպես և Ֆիլիպեի առաջնորդ Հովակիմները: Անդրադառնալով «պատրիարք» պատվանվանը, հեղինակը ամրապնդում է Հ. Պերպերյանի այն կարծիքը, որ պոլսահայերի հոգևոր առաջնորդը նախապես հորջորջվել է «հայրապետ», «եպիսկոպոս» կամ «արհիեպիսկոպոս», և որ միայն 1526 թ. հետո, մինչև 1540 թ. ընկած շրջանում է մեծարվել «պատրիարք» կոչումով:

ճախ հակասական ու իրարամերժ տվյալների համադրությամբ, միշտ աչքի առջև ունենալով սկզբնաղբյուրները, Ա. Խառատյանը համոզիչ բացատրություններով է լուսաբանում նշված հիմնահարցերը: Պոլսահայերի թվաքանակի օսմանյան պաշտոնական տվյալներին հեղինակը հակադրում է այն հիմնավոր առարկությունը, որ այսպես կոչված մարդահամարները, իրականում՝ սեփականատերերի ցուցակագրումները, փաստորեն դուրս են թողել հաշվառումից ոչ սեփականատերերին, ուրիշի անվամբ իրենց գույքը գրանցած, ուրեմն սեփականատեր չհամարվող անձանց, սեփականագուրկ, մարզինալ շերտերին, ինչպես և անընդհատ մայրաքաղաք տեղափոխվող գավառական մարդաշատ խմբերին, որոնք իրենց քանակով միշտ էլ մի քանի անգամ գերազանցել են «բնիկ» պոլսահայերին:

Մյուս կողմից, բուն օսմանյան հարկացուցակները ևս տառապում էին անհետևողականությամբ ու անորոշությամբ՝ մարդկանց կրոնը կամ ազգությունը սահմանելու տեսակետից: Թուրք հետազոտողների (ինչպես Օ. Էրզինը) կամայականությունը վերածվում է բացահայտ կեղծիքի, երբ անխտիր թուրքեր (մահմեդականներ) են համարում թուրքախոս հույներին ու հայերին:

Աշխատության մյուս գլուխն ընդգրկում է Կ. Պոլսի պատրիարքության կայացման, համայնքի ներհակ հասարակական ուժերի միջև պատրիարքության համար մղվող պայքարի, կրոնական ու սոցիալական հիմքերին առնչվող հիմնահարցերի ձևակերպումն ու վերլուծությունները: Ընդ որում, հեղինակը պոլսահայ իրականության, դրա կողմնորոշումների և զարգացման ընթացքը բնութագրում է օսմանյան ռազմահողատիրական համակարգի, ինչպես և Օսմանյան Թուրքիա-եվրոպական պետություններ քաղաքական ու տնտեսական փոխհարաբերությունների լայն հենքի վրա: Պոլսահայ իրականության այս զարգացումների վրա թողած ազդեցությունների հարցում Խառատյանը ուշադրություն է դարձնում վերոհիշյալներին կապված և կարևոր նշանակություն ունեցող՝ հայ կրոնական կենտրոնների (Էջմիածին, Սիս, Երուսաղեմ) փոխհարաբերություններին և, հատկապես, Կ. Պոլսի պատրիարքության նկատմամբ նրանց վերաբերմունքին: Հեղինակն առանձնացնում է Էջմիածնի ազգապահական նշանակությունը և նրա հեղինակությունը պոլսահայ գաղթօջախում, որը, ի դեպ, այս ասպարեզում ունեցած կորուստների համար մի

հայտնի չափով պարտական էր Սիսի հետ ունեցած երկպառակություններին: Վերջիններիս տարածման կամ խորացման պատճառների մեջ հետազոտողը նշմարում է նաև կաթոլիկական եկեղեցու ձգտումներն ու ազդեցությունը, որն իր հերթին կապվում էր հատկապես Ֆրանսիայի քաղաքական ազդեցության հետ: Այս հանգամանքը առավել համոզիչ ուրվագծերով բացահայտվել է Օսմանյան Թուրքիայի հայոց կաթոլիկոսությանը վերաբերող հատվածում: Աշխատության 3-րդ գլխում տրվում է գաղթօջախի սոցիալական նկարագիրը՝ ի դեմս առևտրաարհեստավորական խավերի և վերնախավի (խոջաներ, չելեբիներ) վերլուծական բնութագրերի: Հանգամանորեն ներկայացվում են բուն աշխատավորական խավերը՝ արհեստավոր առևտրականներն իրենց ազգային ուրույն բարոյականությամբ, համայնքում ունեցած կշռով, պետության և թուրք արհեստավորների ստեղծած մշտական կաշկանդումների ու ճնշման պայմաններում, գյուղատնտեսական հումքից ունեցած կախվածությամբ: Վերջիններս գնալով առավել ցայտուն էին դառնում պետության ռազմական հզորության թուլացման և հողային սեփականատիրական համակարգի (թիմար) քայքայման պատճառով: Այստեղ քննարկվում են համեմատաբար քիչ ուսումնասիրված՝ մահմեդական և ոչ մահմեդական արհեստավորների կազմակերպական կառույցների, սրանց կորպորատիվ փոխհարաբերությունների, արհեստների և առևտրի պետական օսմանյան վերահսկողության և այլ խնդիրներ, որոնց առաջադրումն ու լուծումները բնութագրական կողմերով են լրացնում մեր իրազեկությունը խնդրո առարկա հիմնահարցերի մասին: Նոր կողմերով է լուսաբանվում նաև պոլսաբնակ հայ խոշոր վաճառականության գործունեությունը, առհասարակ հայ խոշոր առևտրականության առկայությունը գաղթօջախում: Այստեղ քննարկվում են պոլսահայ վաճառականության տեղի և նշանակության խնդիրները լեանտի առևտրում և միջազգային ապրանքաշրջանառության մեջ, պարսկա-թուրքական քարավանային առևտրում և այլուր: Ուշագրավ է ունևոր մյուս խավի՝ պոլսահայ չելեպիների բնութագիրը, նրանց հատուկ՝ հարկերի վարձակալության և վաշխառության գործառույթը, որ հարատևում էր օսմանյան նպաստավոր տեղաշարժերի պայմաններում: Ավելացնենք, որ դրանով հեղինակը կարծեք նախապատրաստում է այն իրողության հիմնավորումը, որ XVIII դ. այս տնտեսա-

կան հենքի վրա էր հայտնվելու պոլսահայ ամիրա-սեղանավորների մի մասը, իր տնտեսական գործառնությունների ոլորտում ընդգրկելով վիլայեթները՝ տեղական փաշաների շահագրգիռ խրախուսանքի մթնոլորտում:

Օսմանյան կայսրության վաճառականության միջնորդները գնահատելիս հեղինակը առաջ է քաշում նոր դրույթ, ցույց տալով, որ միջնորդ հույն, հայ և հրեա վաճառականությունը ոչ թե կաշկանդել է օսմանյան տնտեսության զարգացումը, այլ ընդհակառակն, նպաստել է արևելք-արևմուտք ապրանքափոխանակությանը և Օսմանյան թուրքիայում գյուղատնտեսական արտադրության զարգացմանը: Հիմնավորվում է սրանցից բխող այն եզրակացությունը, որ ոչ մահմեդական վաճառականության տնտեսական դերին տրված միակողմանի բնութագիրը պատմագիտական գրականության մեջ՝ կարիք է զգում սկզբունքային վերանայման:

Պոլսահայերի վճարած հարկերի նկարագիրն ու բնույթը փաստորեն նախասահմանում էին ոչ մահմեդական հանրությունների սոցիալական ու իրավական կացությունը Օսմանյան թուրքիայի մայրաքաղաքում և այս իմաստով լուրջ հետաքրքրություն է հարուցում գաղթօջախում գործող հարկային համակարգին նվիրված հատվածը: Հարկերի տեսակների և չափերի ընդլայնման իրողության հիմքում ընկած էր օսմանյան դրամական միավորի՝ աքչեի արժեզրկումը, ի հետևանս բուն իսկ օսմանյան տընտեսության անկման: Դրանով է հեղինակը բացատրում արևմտահայության, այդ թվում և պոլսահայ գաղթօջախի տնտեսական շահագործման ուժեղացումը XVI-XVII դդ.:

Աշխատության վերջին գլխում վերլուծվում են հայ պատմագիտության մեջ չքննարկված կամ գրեթե չքննարկված այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են պոլսահայերի իրավական ու կենցաղային կյանքին վերաբերող խնդիրները, գերության համակարգը Օսմանյան կայսրությունում և դրա նշանակությունը պոլսահայ համայնքի կազմավորման ու հետագա ընթացքի համար: Այստեղ շոշափվում են նաև օսմանյան հասարակության մեջ ոչ մահմեդականների իրավագրկությանը, նրանց հանդեպ կիրառված պետական խտրական քաղաքականությանը վերաբերող հարցեր: Պոլսահայության կյանքն այստեղ ներկայացվում է կենդանի, իրական դիմանկարներով ու փոխհարաբերություններով: Հեղինակն այդ միջավայրը վե-

րարտադրում է կայսրության մյուս համայնքների (հույներ, հրեաներ) հետ ունեցած շփումների և փոխադարձ վերաբերմունքի սահմաններում, և այս մոտեցումը լայն հնարավորություններ է ընձեռել նրան գաղթօջախի նկարագրի առավել խորքային բացահայտումների համար:

Հարկ է առանձնացնել հեղինակի բանավիճային կուլտուրան, միայն փաստերին հենվելով ու դրանից բխող եզրակացություններով իր տեսակետը պաշտպանելու անվերել մոտեցումը: Եվս մեկ առանձնահատկություն. շարադրանքի գիտականությունը շահում է նաև ժամանակի գործիչներին տրված բնութագրերով, որով վեր են հառնում Եղիազար Այնթափցին, Սարտիրոս Ղրիմեցին, Փիլիպոս և Հակոբ կաթողիկոսները, խոջա Ռուհիջանը, պոլսահայ երեց պատրիարքները և էլի ուրիշներ:

Աշխատությունը գրված է մեծաքանակ սկզբնաղբյուրների և գիտական գրականության հենքի վրա: Հատկապես աչքի է ընկնում հիշատակարանների, որպես սկզբնաղբյուրների զանգվածային օգտագործումը:

Հիմնահարցերի այսպիսի ծավալներ ընդգրկող աշխատությունը չէր կարող որոշ բացթողումներ կամ վիճելի դրույթներ չունենալ: Կարծում ենք, որ ցանկալի կլիներ, եթե հեղինակն անդրադառնար Եղիազար Այնթափցու՝ ազատագրական շարժման հետ ունեցած առնչություններին կամ հստակ ձևակերպեր այդ առնչությունների վերաբերյալ իր մոտեցումը: Էջմիածին-Հռոմ հարաբերությունների ավելի խորքային քննարկումը, ըստ իս, կնպաստեր Կ. Պոլսի պատրիարքների և կաթոլիկ արևմուտքի փոխհարաբերությունների նոր ծալքերի բացահայտմանը:

Նշվածը բնավ չի ստվերում կատարված լուրջ և մնալուն աշխատանքը, որով և այս աշխատությունը կարելի է համարել մեծարժեք ներդրում Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախին նվիրված ուսումնասիրությունների մեջ:

Ստեփան Ստեփանյան

Պատմագիտության դոկտոր, պրոֆ.,

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ



Լիո Ֆարիդանի

Կանադացի այս նկարչի կտավներն իրենց ուրույն տեղն են գրավել կանադացի, Իտալիայի, Եվեյցարիայի, ԱՄՆ-ի, Անգլիայի և մի շարք այլ երկրների ամենատարբեր հավաքածուներում:

Ուսանելով Ֆլորոնցիայի ճարտարապետական համալսարանում և Արվեստների ակադեմիայում, Լիո Ֆարիդանին յուրացրել է իտալացի նկարիչների և քանդակագործների արվեստը, կրել նրանց բարերար ազդեցությունը և այդ ազդեցության պաշարով վերադարձել հայրենիք:

Նա նախընտրում է ջրաներկը, թեև չի խուսափում նաև յուղաներկից և ակրիլային ներկերից: Նա թե իրապաշտ է և թե վերացականի շերտերն է թափանցում: Լայն հնարավորությունների և հետաքրքրությունների տեր այս նկարչին գրավել է նաև Հայկական ցեղասպանության թեման: Նրա կտավների ցուցադրությունը երեք անգամ կազմակերպել է Տորոնտոյի «Համազգային» կրթա-մշակութային միությունը:



«ԴՐՕՇԱԿ» - ի պատկերասրահ



